

1. Ինչպիսին են ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներն ու ընտրություններում կիրառվող ընտրական համակարգերը:
 2. Ինչպիսի իշխանություններ են ձևավորվում կախված ընտրական համակարգից:
 3. Որն է ընտրակեղծիքների տրամաբանությունը
 4. Որոնք են հնարավոր ընտրակեղծիքների տեխնոլոգիաները
 5. Ինչպես կանխել ընտրակեղծիքները:
 6. Ինչպիսի ընտրական համակարգեր են գործում տարբեր երկրներում:
 7. Ինչպիսին են ընտրությունները հետ խորհրդային որոշ հանրապետություններում:
 8. Ինչպիսին են ընտրությունները Հայաստանում
- Ինչպես չափել ընտրակեղծիքները:*
Գրքում կգտնեք նշված հարցերի փորձագիտական պատասխանները:

The electoral rights and falsifications of elections

We present the basic principles of election systems and suffrages for different countries. Next we analyze rigorously falsification technologies and ways of their cessation. On the basis of this analyze we suggest a method to calculate exactly election results and delineate how does the poll stand.

We present the election legislation and its modification over the years in Republic of Armenia. Furthermore, we carry out a thorough analysis for the last elections and present the results, as well as graphic illustrations, of the analyses. The tables and figures expose a vote fraud and display inherent differences between real election results and proclamations of Central Election Commission.

The book is intended for those who is interested in elections, suffrage and for objective estimation of the election falsifications.

The book is useful for the experts of suffrages, members of the election commissions, authorized representatives of candidates, observers, and students of colleges and senior school pupils studying the law.

The presented analyses and suggestions can promote the improvement of the election legislation and help us to provide fair elections in the country.

Lyudvig Khachatryan

Избирательное право и фальсификации выборов

В книге представлены основные принципы избирательного права и избирательных систем, действующие разные избирательные системы разных стран, а так же технологии фальсификации выборов и возможности предотвращения фальсификации выборов.

Предлагается механизмы математической оценки справедливости выборов, процесса голосования, определения результатов и принятых решения по результатам, методы точных подсчетов объективной оценки результатов выборов, для разных избирательных систем.

Представлены избирательные системы, избирательное законодательство и его изменения в разные годы и анализы по ним в Республике Армении. Представленные анализы и выводы по прошедшим выборам основаны на фактах и точных математических подсчетах основанных на цифрах опубликованных официально. Представлены и методы математических подсчетов и анализы подсчетов вышеуказанных выборов.

Книга предназначена для тех, кто интересуется выборами и избирательным правом.

Книга может быть полезной для специалистов избирательных прав, членов избирательных комиссий, доверенных лиц и наблюдателей, студентов вузов, так же старшеклассников изучающих право.

Представленные в книге анализы и предложения могут содействовать улучшению выборного законодательства и проведению честных выборов в стране.

Людвиг Хачатрян

Հորդոր բոլորին, հատկապես Հայաստանի գործիչներին, ոչ ոքի ֆիզիկական գոյությունը հավերժ չէ, բավականաչափ ազնիվ ու արդար եղևք և միք վարվեք այլոց հետ, հատկապես ձեր ազգի հետ այնպես, ինչպես չէիք ուզենա, որ ձեր և ձեր հարազատների հետ վարվեին:

Թեկուզ մեկ քվեի կեղծելը հանցագործություն է ընդդեմ ժողովրդի:


Իսկ ընտրակեղծիքներով խաբեությանը ու բռնությանը իշխանության ստանձնումը վտանգում է պետության քաղաքացիների, ազգի արժանապատիվ գոյության հնարավորությունը:

ISBN 978-9939-53-733-7



ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ
ՈՒ ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԸ

ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ
ՈՒ

ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԸ

Բազմագույն կյանքի իրագոյություն
Օրեր անցնելիք գորշ մռայլության:
Թե ով որոշեց, ինչպես որոշվեց,
Գույներն ընտրել այլակերպության:
Իրադարձության մի տխուր դրվագ:
Պատմամիջադեպ շրջադարձային:
Մեկ անհատ, մեկ խումբ և մեկ այլ ընթացք,
Նոր վերաբժեքվող գոյապայքարին:
Բարդ մի կեցության ինչ-որ համակարգ,
Կիսաանարխիկ, ոչ քաղաքակիրթ:
Գոյաքարշության թելադրակարգ,
Գերիշխանությամբ սոցիտության բիրտ:
Փորձության շրջան երկարաժամկետ,
Կիսախավարի ինքնակալությամբ:
Լույսի մի ալիք առաջ, նորից ետ
Եվ մեկ այլ վիճակ լինելիության:
Մի նոր տաղտկալի իրադարձություն:
Կիսամթության նոր փորձաշրջան:
Թվացյալ կայուն անկայունություն,
Քանզի հավատի հույսեր էլ չկան:
Կլինի մի նոր շրջադարձակետ,
Իրադարձություն խավարաավեր
Եվ նոր մի ընթացք արժանապարկեշտ:
Կընտրվեն գույներ իրակերպ ու լուրթ,
Օրեր կլինեն երջանիկ, անչար:
Կհիմնավորվի բնականոն ու կիրթ:
Մի աշխարհակարգ՝ ապրելու համար:
Եվ կապրեն մարդիկ արժանապատիվ,
Ազատ ու կայուն լուսնիշխանությամբ՝
Վերացնելով խավարն անպատիվ,
Հպարտանալով խելամտությամբ:

Լ.Խաչատրյան

Լ Յ Ու Դ Վ Ի Գ Խ Ա Չ Ա Տ Ր Յ Ա Ն

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն

Ի Ր Ա Վ Ու Ն Ք Ն

Ու

Ը Ն Տ Ր Ա Կ Ե Ղ Ծ Ի Ք Ն Ե Ր Ը

Երևան

Հեղինակային հրատարակություն

2010

Լ Զ Ու Ղ Վ Ի Գ Խ Ա Չ Ա Տ Ր Յ Ա Ն Վ Ա Ր Ա Զ Ր Ա Տ Ի
Խ 282 Ը Ն Տ Ր Ա Վ Ա Ն Ի Ր Ա Վ Ու Ն Ք Ն Ու Ը Ն Տ Ր Ա Վ Ե Ղ Ծ Ի Ք Ն Ե Ր Ը
Լյուդվիգ Վարազդատի Խաչատրյան – Երևան
Հեղինակային հրատարակություն, 2010թ. 176 էջ

Ներկայացվում են ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներն ու ընտրություններում կիրառվող տարբեր ընտրական համակարգերը, որոշ երկրներում կիրառված, փոփոխված և այժմ գործող տարբեր ընտրակարգերը: Պարզաբանվում են ընտրակեղծիքների տեխնոլոգիաները, ընտրակեղծիքները կանխելու հնարավորությունները: Առաջարկվում են ընտրությունների, քվեարկությունների և քվեարկության արդյունքների ամփոփման, դրանց վերաբերյալ որոշում կայացնելու արդարության չափը, մաթեմատիկորեն ճշգրիտ գնահատելու մեխանիզմներն ու մեթոդոլոգիան:

Մենք առաջարկում ենք ընտրակեղծիքների բացահայտման մեխանիզմ՝ ընտրական թվերը, ըստ տեղամասերի, միմյանց հետ համեմատելու միջոցով, ինչպես նաև մանդատների բաշխման հարաբերակցության հնարավոր փոփոխության ճշգրիտ հաշվարկի և ընտրակեղծիքներից անկախ, արդար բաշխվող մանդատների քանակն ու պատկանելիությունը որոշելու մեթոդ՝ <<ԸՆՏՐԱՎԱՆ ԹՎԵՐԻ ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂ>>, տարբեր ընտրական համակարգերի համար:

Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգերի, ընտրական օրենսդրության, դրանց փոփոխությունների և կիրառության վերաբերյալ ներկայացվող որոշ մանրամասները՝ ընտրական օրենսդրության և տարբեր տարիների օրենսդրական փոփոխությունների, անցած ընտրությունների, դրանց նկատմամբ արտահայտված կարծիքների վերաբերյալ, գրքում շարադրված վերլուծություններն ու եզրակացությունները հիմնված են փաստերի, վիճակագրական տվյալների, հրապարակված պաշտոնական թվերի, մաթեմատիկական ճշգրիտ վերլուծական հաշվարկների վրա:

Գիրքը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են ընտրական իրավունքով, ընտրություններով և ընտրակեղծիքների օբյեկտիվ գնահատմամբ:

Բնօրինակ	4
Գրախոսություն	4
Հեղինակի կողմից	8
ԸՆՏՐԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ Ու ԸՆՏՐԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	10
Գլուխ I ԸՆՏՐԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ Ու ԸՆՏՐԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	10
Գլուխ II ԸՆՏՐԱՎԱՐԳԵՐՆ ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	17
ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ Ու ԴՐԱՆՔ ԿԱՆԽԵԼՈւ ՄԻՋՈՑՆԵՐԸ	21
Գլուխ III ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	21
ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	21
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱԹՅԱՆ ԴԵՐԸ ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ ՀԱՐՅՈՒՄ	26
Գլուխ IV ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ	28
Գլուխ V ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈւ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	37
ԸՆՏՐԱՎԱՆ ԹՎԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	37
ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԻ ԴԵՄ ՈւՂՂՎԱԾ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ	42
ՔՎԵՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ ՔՎԵՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՈՒՄԸ	51
ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆՏՐԱՎԱՐԳԵՐԸ	53
Գլուխ VI ՈՐՈՇ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆՏՐԱՎԱՐԳԵՐԸ	53
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	54
ՖՐԱՆՍԻԱ	57
ԳԵՐՄԱՆԻԱ	59
ԻՏԱԼԻԱ	61
Գլուխ VII ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՎԱՐԳԵՐԸ	63
ՌՈՒՄԱՍՏԱՆ	65
ԼԻՏՎԱ	67
ԷՍՏՈՆԻԱ	67
ԼԱՏՎԻԱ	68
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	69
Գլուխ VIII ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	69
ՄԻՆՉ 1999 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	69
1998-1999թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	71
2003թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	74
2005թ. ԸՆՏՐԱՎԱՆ ՕՐԵՆՄԳՐՔԻ ՄԱՄԻՆ	87
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2005թ.	92
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 2005թ.	97
2007թ. ԸՆՏՐԱՎԱՆ ՕՐԵՆՄԳՐՔԻ ՄԱՄԻՆ	100
2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԵՎՈՐՉՓԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐԱՎԵՂԾԻՔՆԵՐԸ	112
2008 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ <small>Ընտրակեղծիքներ երկրորդի հանդեպ ստանձնած պարտավորությունների համապատասխան</small>	118
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2009 թ.	122
ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵ՝ ՆՈՐ ԱՂԵՏ	123
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՄԴԻ ՄԱՐՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԵՐԸ	129
ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՄԻՆ	141
ԸՆՏՐԱՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է	148
ՀԵՏԱՑՈՒ	150
Հավելված ՔՎԵՄԱԿՈՒԹՅԱՆ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕՔԵԿՏԻՎ ԳԱՀԱՏՄԱՆ ՃՇՊԵՏ ՀԱՇՎԱՐԿԵՐԸ	153
ԸՆՏՐԱՎԱՆ ԹՎԵՐԸ	153
ԸՆՏՐԱՎԱՆ ԹՎԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ	155
ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՃՇՊԵՏ ՀԱՇՎԱՐԿԸ	168
ՎԵՐՋԱԲԱՆ	173
Հղումների ցանկ	174

**Ֆելիքս Թոխյանի գրախոսությունը
Լ.Վ. Խաչատրյանի «Ընտրական իրավունքն ու
նտրակեղծիքները»
աշխատության վերաբերյալ**

Լյուդվիգ Խաչատրյանի կողմից բավականին հետաքրքիր և ինքնատիպ աշխատանք է կատարվել: Հեղինակը, մասնագիտությամբ իրավաբան չլինելով, 1990-1991 թվականների ընտրությունների ու հանրաքվեների գործընթացներում փորձառու անձ է և համապատասխան վերլուծություններ է փորձել կատարել՝ օբյեկտիվ հետազոտական նկատառումներով:

Աշխատանքը գրված է մի շարք երկրների ընտրությունների ոռումնասիրությունների և առաջին հերթին Հայաստանի հանրապետության ընտրական գործընթացների մանրագնին հետազոտման արդյունքում: Կարելի է նշել, որ գրքում արծարծված հիմնախնդիրները և դրանց լուծումների վերաբերյալ հեղինակի մոտեցումները կարող են նպաստել ցանկացած երկրում արդար ընտրություններով իշխանության կազմավորմանը:

Առանձնապես հաջողված կարելի է դիտել հեղինակի կողմից ընտրությունների, քվեարկությունների և արդյունքների ամփոփման, դրանց վերաբերյալ որոշում ընդունելու, արդարության չափը մաթեմատիկորեն գնահատելու մեխանիզմի առաջարկությունը, որը կիրառելի է տարբեր ընտրական համակարգերի համար:

Հեղինակը առաջարկում է ընտրվող իշխանությունների օրինական լինելու փաստը, կամ լեգիտիմության աստիճանը որոշելու մաթեմատիկական միջոց՝ հիմք ընդունելով այդ երկրների ընտրությունների արդյունքների վերաբերյալ պաշտոնապես հրապարակվող տվյալները: Այդ նպատակով առանձնակի ուշադրությամբ է ներկայացված ընտրակեղծիքների հնարավոր կանխման մոտեցումներն ու քվեարկության արդյունքների հաշվարկների, ինչպես նաև դրանց գնահատման հաշվարկի մեթոդոլոգիան:

Անհրաժեշտ եմ համարում հատուկ նշել, որ չեմ կարող համաձայնվել հեղինակի կողմից Հայաստանի հանրապետությունում որոշ ընտրությունների վերաբերյալ արտահայտած մեծապես քաղաքական գնահատականների հետ, որոնք, իրավաբանորեն հիմնավորված չեն:

Բոլոր դեպքերում Լ. Խաչատրյանի աշխատանքը կարող է օգտակար լինել ընտրական գործընթացներով հետաքրքրվող անձանց համար, մասնավորապես՝ քաղաքական գործիչների, ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների, ինչպես նաև բուհերի դասախոսների և ուսանողների համար:

**ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ,
Ռուս - Հայկական (Սլավոնական) համալսարանի
սահմանադրական և մունիցիպալ իրավունքի
ամբիոնի վարիչ,
Ի.Գ.Թ., պրոֆեսոր՝** **Ֆ.Պ.ԹՈՒՅՄԱՆ**

Ստեփան Գրիգորյանի գրախոսությունը

Լյուդվիգ Խաչատրյանի գիրքն այսօր առանձնակի ակտուալ և կարևոր է հայ հասարակության համար:

Գրքի հեղինակ Լյուդվիգ Խաչատրյանը, սկսած 1989 թվականի Հայաստանում դեմոկրատական վերափոխումների սկզբից ակտիվ մասնակցություն է ունեցել բոլոր ընտրական գործառույթներում: 1989 թվականին նա եղել է՝ ՀԽՍՀ Սահմանադրության փոփոխությունների և Ընտրությունների մասին օրենքում փոփոխությունների նախագծի հեղինակ, 1990թ.՝ ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ՀՀ հանրաքվեի մասին օրենքի նախագծի, ՀՀ նախագահի ընտրությունների մասին օրենքի նախագծի հեղինակ, 1990թ. ՀԽՍՀ ժողպատգամավորների Ընտրությունների Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի անդամ, 1991-1996թթ. ՀՀ Հանրաքվեի Հանրապետական Հանձնաժողովի քարտուղար, Ազգային ժողովի 1994-95թ. Պետաիրավական հանձնաժողովի փորձագետ, ընտրական օրենքների տարբեր նախագծերի, ինչպես նաև ՀՀ Ընտրական օրենսգրքի առաջին նախագծի, ընտրությունների էլեկտրոնային մոնիթորինգի ծրագրի հեղինակ:

Մեծ է Լյուդվիգ Խաչատրյանի դերը 1990 թվականի քիչ թե շատ արդար ընտրությունների անցկացման և կեղծիքների բացահայտման գործում, ինչպես նաև Հայաստանի Անկախության հանրաքվեի արդար անցկացման գործում: Գրքի հեղինակը որևէ կուսակցության անդամ չէ և չի պաշտպանել որևէ քաղաքական կազմակերպության կամ անձի շահ և օբյեկտիվ մոտեցում է ցուցաբերել ընտրություններին ու օբյեկտիվորեն է գնահատել ընտրակեղծիքները: Լյուդվիգ Խաչատրյանի՝ 1996 թվականին Ազգային Ժողովի հետ կնքած պայմանագրի համաձայն հեղինակած ընտրական օրենսգրքի նախագիծը պայթյամենտում ենթարկվել է փոփոխությունների և ապա միայն ընդունվել, այնուհետև նորից ենթարկվել փոփոխությունների, որոնց վերլուծությունները գրքում նույնպես ներկայացվում է:

Այսպիսով, գրքի հեղինակը բոլոր տեսանկյուններից մասնակցել և հետազոտել է Հայաստանի ընտրական համակարգում եղած ու առկա խնդիրները:

Հայաստանի անցած ընտրությունների փորձը ցույց է տվել հսկայական չլուծված խնդիրների առկայությունը՝ սկսած ընտրական օրենսդրության բազայի թերի լինելուց, ընտրությունների գործառույթների ցածր տեխնիկական մակարդակից, օրենքի առաջ ընտրական գործառույթությունների մասնակիցների անհավասարությունից, լայնածավալ ընտրակեղծիքներից, վերջացրած իշխանությունների տարբեր ժամանակահատվածներում քաղաքական կամքի բացակայությամբ արդար, թափանցիկ (տրանսպարենտ) և ժողովրդավարական ընտրությունների անցկացման հարցում:

Իհարկե, 2001 թվականի հունվարին Հայաստանի՝ Եվրախորհրդի կազմում ընդգրկվելուց հետո, իշխանություններն ու Ազգային ժողովի կազմում գործող քաղաքական կազմակերպությունները պարտավորություն վերցրին անցկացնել Եվրոպայի պահանջներին ու եվրո չափանիշներին համապատասխան ընտրություններ: Մակայն ժամանակը ցույց տվեց, որ մնում են դեռ շատ չլուծված խնդիրներ, ուստի Հայաստանի ընտրական դժվարությունները լավ հասկանալու համար եկել է ժամանակը ընտրությունների հետ կապված խնդիրները սիստեմավորելով ու վերլուծելով՝ առկա խնդիրների համապատասխան լուծումների տարբերակները ներկայացնել Հայ հասարակության ու միջազգային հանրության դատին: Հենց այս պատճառով էլ այս գիրքն առանձնահատուկ արժեք է ներկայացնում և հարիր է ժամանակի պահանջներին:

Կուզենայի հայտնել իմ կարծիքը գրքի ամենակարևոր ասպեկտի վերաբերյալ. հեղինակը հայ հասարակությանն ու միջազգային հանրությանը ներկայացնում է իր յուրօրինակ կոնցեպցիան՝ ընտրական թվերի համադրության մեթոդը: Հեղինակի գլխավոր միտքը կայանում է նրանում, որ ընտրակեղծիքների և ընտրությունների արդյունքների վրա դրանց ազդեցության չափը գնահատելու համար նույնիսկ բավարար է ընտրատեղամասերի պաշտոնական տվյալներով հրապարակված ընտրական թվերը համադրել միմյանց հետ: Ընտրական թվերն են ընտրողների, ընտրության մասնակիցների, ծրարների, քվեների, անվավեր քվեաթերթիկների և այլ թվերը, որոնք մանրամասն ներկայացվում են գրքում: Իսկ ընտրակեղծիքների օբյեկտիվ գնահատման և դրանց մինիմիզացիայի խնդիրը հանդիսանում է Հայաստանի առաջնահերթ խնդիրը:

Անհերքելի դրականն այն է, որ՝

1. Առաջին անգամ հայկական գրականության մեջ ներկայացվել է ընտրական տերմինների բացատրությունները:
2. Ներկայացվել է աշխարհում գործող ընտրական համակարգերն ու ցույց են տրվել մանդատների բաշխման մեխանիզմները տարբեր ընտրական համակարգերի համար:
3. Հետազոտվել է կապը ընտրական համակարգերի և ձևավորվող քաղաքական համակարգերի միջև:
4. Առաջին անգամ է հետազոտվել և սիստեմավորվել ընտրական օրենսդրության խախտումներն ու ընտրակեղծիքները Հայաստանի Հանրապետության տարբեր տարիներում անցկացված (նախագահական, պառլամենտական, տեղական ինքնակառավարման մարմինների) ընտրություններում:
5. Արվում են առաջարկություններ, այդ թվում օրենսդրական փոփոխությունների, և ներկայացվել են հստակ մեխանիզմներ կամ ընտրակեղծիքների մինիմիզացիայի, կամ դրանք իսպառ վերացնելու նպատակով:

6. Գրքում ներկայացվել է ԱՄՆ - ի, Ռուսաստանի և մի շարք այլ Եվրոպական երկրների ընտրական համակարգերը:

7. Հեղինակի՝ ընտրական թվերի համադրության մեթոդի հիման վրա մանրամասն հետազոտվել են այն խնդիրները, որոնք առաջացել են 1999թ. հետո ընկած ժամանակահատվածում Հայաստանում անցկացված նախագահական, պառլամենտական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Նշենք, որ Լյուդվիգ Խաչատրյանը Հայաստանում կայացած ընտրություններին մի շարք դեպքերում տալիս է նաև քաղաքական գնահատական, ինչպես նաև՝ գնահատական, թե որքան արդյունավետ և անկողմնակալ են գործել միջազգային դիտորդները Հայաստանի ընտրություններում:

Գրքում առկա մեծ թվով մաթեմատիկական տերմիններն ու բանաձևերն, իհարկե, որոշակիորեն դժվարացնում են որոշ նյութերի ընկալելիությունը: Մակայն նշված բարդությունը փոխհատուցվում է նրանով, որ գիրքն առաջին հերթին նախատեսված է ընտրական համակարգերի խնդիրներով զբաղվող փորձագետների, ընտրական իրավունքի մասնագետների, քաղաքական և հասարակական գործիչների, որոնց մասնագիտական գործունեության մասն է կազմում ընտրությունները, ինչպես նաև միջազգային փորձագետների համար, որոնք զբաղված են միջազգային ընտրական իրավունքի բարելավմամբ և ընտրությունների մոնիթորինգով:

Եզրափակելով՝ կուզենայի ասել, որ Լյուդվիգ Խաչատրյանի գրքի գլուխների մեծ մասը յուրօրինակ է: Ընտրական թվերի համադրության մեթոդը կարող է օգնել և օբյեկտիվորեն գնահատել ընտրությունները և նվազեցնել հետագա հնարավոր ընտրախախտումներն ու ընտրակեղծիքները: Բացի այդ Ընտրական թվերի համադրության մեթոդն ունի բավականաչափ ունիվերսալ բնույթ, և կարող է քննարկման համար երաշխավորվել ԵԱՀԿ և ԵՄԽՎ դիտորդական առաքելություններին, որոնք պարբերաբար ընտրությունների մոնիթորինգ են անցկացնում:

**Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի վարչության Նախագահ՝
Քաղաքագետ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու,
Ստեփան Գրիգորյան:**

Իշխանության կազմավորման համար ընտրություններում թեկուզ և մեկ ձայնի կեղծելը հանցագործություն է ընդդեմ ժողովրդի:

Գիրքը գրելու հիմնական նպատակը նպատակն է արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդրի լուծմանը:

Գիրքը գրվել է ընտրություններով հետաքրքրվող անձանց ընտրական իրավունքի և ընտրական համակարգերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման համար:

Գիրքը գրված է բազմաթիվ երկրների ընտրությունների ուսումնասիրությունների և հիմնականում Հայաստանի Հանրապետության ընտրական գործառնությունների մանրագնին հետազոտման արդյունքում:

Ներկայացվում են ընտրական իրավունքի և ընտրական համակարգերի հիմնական տեսական և գործնական իրավական և իրավակիրառական բնութագրերը, ընտրական տերմինների բացատրությունները, Հայաստանի Հանրապետության տարբեր տարիներում անցկացված ընտրությունների միտումնավորված ու հետազոտված, ընտրական օրենսդրության խախտումներն ու ընտրակեղծիքները: Գրքում նկարագրված ընտրությունների հետ կապված իրադարձություններն ու երևույթները նկարագրվել, իսկ վերլուծություններն արվել են բացառապես օբյեկտիվ հետազոտական նկատառումներով: Շեղինակի արտահայտած տեսակետները կարող են միանգամայն տարբերվել հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների (թե իշխանության, թե ընդդիմության) նույնիսկ այսպես կոչված անկախ քաղաքական գործիչների ու նրանց աջակիցների, այդ թվում նաև միջազգային կառույցների տեսակետներից ու մտեցումներից, քանզի շատ դեպքերում դրանք կարող են չբխել վերջիններիս շահերից ու կարող են դուր չգալ նրանց, բայց բոլորն էլ կարող են գրքում գտնել ինչ որ չափ իրենց բավարարող եզրահանգումներ, օգտակար տեսակետներ ու մեթոդներ:

Առանձնակի ուշադրությամբ է շարադրված ընտրակեղծիքների հնարավոր կանխման՝ այդ թվում առաջարկվող օրենսդրական նորմերի միջոցով, մտեցումներն ու քվեարկության արդյունքների հաշվարկների, ինչպես նաև քվեարկության արդյունքների գնահատման հաշվարկի մեթոդալոգիան:

Առաջարկվում է ընտրությունների, քվեարկությունների և քվեարկության արդյունքների ամփոփման, դրանց վերաբերյալ որոշում կայացնելու, արդարության չափը մաթեմատիկորեն գնահատելու մեխանիզմ՝ Ընտրական թվերի համադրության մեթոդ, որը մանրամասն շարադրված է գրքում: Նշված մեթոդի միջոցով քաղաքական, քաղաքացիական և ընտրական իրավունքների մասնագետները հնարավորություն կունենան օբյեկտիվորեն գնահատել տարբեր ընտրական համակարգերով անցկացվող ընտրությունները: Հիմք ընդունելով ընտրություն անցկացնող երկրի ընտրությունների արդյունքների վերաբերյալ ըստ տեղամասերի պաշտոնապես հրապարակվող տվյալները, քվեարկության արդյունքների օբյեկտիվ գնահատման ճշգրիտ հաշվարկների մեթոդալոգիայի օգնությամբ, հնարավոր կլինի որոշել տվյալ երկրի ընտրվող իշխանությունների օրինական լինելու փաստը կամ լեգիտիմության աստիճանը:

Գիրքը կարող է օգտակար լինել քաղաքագիտություն և իրավագիտություն ուսումնասիրող մասնագետների, ընտրական հանձնաժողովների անդամների և ընտրական հանձնաժողովներ ընդգրկվել ցանկացող, ընտրական գործառնություններով զբաղվող անձանց, վստահված անձերի ու դիտորդների, ուսանողների, ինչպես նաև դպրոցի բարձր դասարանի աշակերտների համար:

Շեղինակը պատրաստ է լսել գրքում արծարծված հարցերի վերաբերյալ տեսակետներն ու քննարկել դրանք:

Շեղինակն իր առանձնահատուկ շնորհակալությունն է հայտնում իր տասնամյա որդուն՝ **Գոռ Խաչատրյանին**՝ նա հաճախ հիշեցնում է, որ ուզում է ապրել քաղաքակիրթ, զարգացած Հայաստանի Հանրապետությունում, որտեղ սոված երեխաներ ու ծերեր չեն լինի, իսկ մարդիկ բարի կլինեն, գրքի տեքստն հավաքելիս օգնելու և գրքի շապիկի ձևավորման համար:

Շնորհակալություն եղբորս՝ **Ստեփան Խաչատրյանին**, երկար ժամանակ ցուցաբերած նյութական և բարոյական աջակցության համար:

Առանձնակի շնորհակալություն՝ Սահմանադրական դատարանի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Ֆելիքս Թոխյանին**, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, քաղաքագետ **Ստեփան Գրիգորյանին**՝ գրախոսության համար:

Հատուկ շնորհակալություն **Medindex. Am** կայքի հեղինակ և սեփականատեր **Գայանե Մարգարյանին** գրքի նախատպագրատեքստի պատրաստման, տպագրության գործում ցուցաբերած, ինչպես նաև էլեկտրոնային մոնիթորինգի վերլուծական ծրագրով վերկայքի պատրաստման գործում ցուցաբերվող զգալի օգնության համար:

Շնորհակալություն **Մուսաննա Մարտիրոսյանին**՝ ուղղագրությանը հետևելու, **Արմինե Մարտիրոսյանին** էլեկտրոնային մոնիթորինգի վերլուծական ծրագրով վերկայքի պատրաստմանն աշխատանքով աջակցելու, **Խաչատուր Քեզիրջյանին**, ֆիզմաթ գիտությունների թեկնածուներ՝ **Մայայթովա Թամարյանին**, **Լեզգար Գևորգյանին**, ինչպես նաև **Ալեքսան Դալայանին**, **Արկայի Գրիգորյանին** ու **Միքայել Գրիգորյանին**՝ հեղինակի հետ գրքի թեմայի շուրջ քննարկումների ու առաջարկությունների, **Վազգեն Մանուկյանին**՝ ընտրական գործառնությունների վերաբերյալ հեղինակի հետ երկար տարիների քաղաքական քննարկումների, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախկին անդամ՝ **Ֆելիքս Խաչատրյանին**՝ իր ձեռքի տակ եղած 2005 թվականի հանրաքվեի արձանագրությունների պատճենները տրամադրելու համար:

Շեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետության **1990 թվականի Գերագույն խորհրդի պատգամավորներին** այն բանի համար, որ իրեն վստահեցին, որպես ՀՀ հանրաքվեի հանրապետական հանձնաժողովի քարտուղար, 1991 թվականի անկախության հանրաքվեի արդար և ազատ կազմակերպման գործը:

Շեղինակն իր շնորհակալությունն է հայտնում հանրապետության 1991 թվականին արդար ընտրված առաջին նախագահ **Լևոն Տեր-Պետրոսյանին**, Ազգային ժողովի՝ մինչև 1998 թվականի նախագահ **Բաբկեն Արարքցյանին** և շնորհակալությամբ է հիշում Ազգային ժողովի՝ պետաիրավական հանձնաժողովի նախկին նախագահ, վաղամեծիկ **Էդուարդ Եգորյանին**, այն բանի համար, որ վստահեցին, որպես փորձագետ, հանրապետությունում առաջին ընտրական օրենքների և առաջին ընտրական օրենսգրքի նախագծերի հեղինակմանը: Շնորհակալություն նաև Ազգային ժողովի՝ Պետաիրավական հանձնաժողովի ներկայիս նախագահ **Դավիթ Հարությունյանին**՝ աջակցության համար:

Շեղինակը նախապես իր շնորհակալությունն է հայտնում գիրքն ընթերցողներին և Ձեզ գիրքը գնելու համար: Հուսով եմ, որ գիրքը ձեզ հետաքրքիր և օգտակար կլինի:

Գրքի հետ կապված հարցերն ու առաջարկությունները կարող եք ուղարկել հեղինակին՝ k.lyudvig@yahoo.com կամ election@medindex.am էլեկտրոնային փոստով:

Լյուդվիգ Խաչատրյան

Գլուխ 1
ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ
ՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ¹

Ժողովրդավարական երկրների ընտրությունների մասին օրենքները հիմնականում շարադրված են **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի** հետևյալ հիմնադրույթների պահանջներն ապահովելու նկատառումներով՝

- 1) **Յուրաքանչյուրն իրավունք ունի մասնակցելու իր երկրի կառավարմանը ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով:**
- 2) **Յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք իր երկրի հասարակական ծառայություններում:**
- 3) **Ժողովրդի ցանկությունը պետք է լինի իշխանությունների լիազորությունների հիմքում: Այն պետք է արտահայտված լինի պարբերաբար անցկացվող արդար ընտրություններով, որոնք պետք է անցնեն ընդհանուր, հավասար ընտրական իրավունքի ապահովումով և պետք է տեղի ունենան գաղտնի քվեարկությամբ կամ համարժեք ազատ քվեարկության գործելակերպով: (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 21):**

Աշխարհի երկրների մեծ մասում ներկայացուցչական մարմինների ընտրությունները հիմնականում **ուղղակի** են, այսինքն՝ ընտրողներն անմիջապես քվեարկում են ներկայացուցչական մարմնի անդամության թեկնածուի օգտին: Պատահում է նաև **ոչ ուղղակի ընտրությունների** կիրառում **ընտրիչների միջոցով**, այսինքն՝ երբ ընտրողներն ընտրում են ընտրիչներ, որոնք էլ ընտրում են ներկայացուցչական մարմնի անդամներ. օրինակ՝ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները, Ֆրանսիայի սենատի ձևավորման ժամանակ և այլն:

Բոլոր երկրներում հիմնականում **ակտիվ ընտրական իրավունք, այսինքն՝ ընտրելու իրավունք** վերապահվում է համարյա բոլոր չափահաս քաղաքացիներին, իհարկե, որոշ վերապահումներով և սահմանափակումներով:

Իսկ **պասիվ ընտրական իրավունք, այսինքն՝ ընտրվելու իրավունք** վերապահվում է հիմնականում ավելի մեծ տարիքային և այլ կարգի սահմանափակումներով: Պասսիվ ընտրական իրավունքի համար տարիքային սահմանափակում է դրված՝ Ֆրանսիայում, Շվեդիայում 23 տարեկան, ԱՄՆ - ում, Բելգիայում,

Հունաստանում, Նիդեռլանդներում, Ճապոնիայում, Հնդկաստանում 25 տարեկան, Թուրքիայում, Եգիպտոսում՝ 30 տարեկան:

Մենատի համար տարիքային սահմանափակումներն ավելի խիստ են՝ ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Ճապոնիայում 30 տարեկան, Ֆրանսիայում, Բրազիլիայում, Ֆիլիպիններում 35 տարեկան, Բելգիայում, Իտալիայում, Թուրքիայում 40 տարեկան:

Կրթական սահմանափակում է կիրառվում ԱՄՆ-ում, Թուրքիայում, Բրազիլիայում, Բելգիայում և այլուր: Ընտրական գրավ՝ թեկնածուի համար մուծվող որոշակի գումար է սահմանված Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Ֆրանսիայում և այլն:

Համարյա բոլոր քաղաքակիրթ երկրների ընտրություններում շատ մեծ, թերևս հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է քվեարկության և ձայների ամփոփման գործելակարգի վրա: Կեղծիքներն ու հնարավոր սխալները բացառելու նկատառումով սահմանվում են քվեարկության և արդյունքների ամփոփման այնպիսի կարգեր, որով ուժեղացվում է մրցակցող կողմերի փոխադարձ վերահսկողության հնարավորությունը, հատկապես ընտրությունները կազմակերպողների անձնական պատասխանատվության բարձրացումը:

Համարյա բոլոր ընտրություններում քվեարկությունն անցկացվում է **հատուկ քվեարկության ծրարներով**, որը **ցուցակների, քվեաթերթիկների և մյուս ընտրական փաստաթղթերի** հետ միասին **հանդիսանում է հիմնական փաստաթղթերից մեկը:**

Մեծ ուշադրություն է դարձվում ընտրությունների արդար անցկացումն ապահովելուն, և քրեական, քաղաքացիական, ընտրական և այլ օրենքներում սահմանված են բազմաթիվ հոդվածներ, ըստ որոնց ընտրակարգի խախտումների համար կիրառվում է համապատասխան պատիժ, ընդհուպ մինչև ընտրական իրավունքից, մինչև անգամ քաղաքացիությունից զրկելը (Ֆրանսիա) կամ տասնյակ տարիների ազատազրկման դատապարտելը (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն):

Ընդհանուր առմամբ, բոլոր ընտրական համակարգերը տարբերակվում են մի քանի ընդհանրական հիմնական սկզբունքներով:

Հաճախ կիրառվում է **ընտրողների մասնակցության անհրաժեշտ նվազագույն սահմանված քանակի՝ քվորումի**, գաղափարը, ըստ

որի ընտրությունները համարվում են կայացած, եթե դրան մասնակցած ընտրողների թիվն ավելի է ընտրողների ընդհանուր թվի որոշակի մասից:

Մանդատ ստանալու համար սահմանված անհրաժեշտ նվազագույն ձայների քանակի՝ քվոտայի (նորմայի), սկզբունքի կիրառման համաձայն ընտրված են համարվում այն թեկնածուները, ովքեր ստանում են ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի կամ ընտրություններին մասնակցած ընտրողների թվի, կամ իրական (կողմ և դեմ տրված) ձայների, կամ էլ բոլոր կողմ ձայների թվի որոշակի մասից ավելի թվով ձայներ: Համամասնական ընտրակարգով ընտրություն ներում մանդատները բաշխվում են պատգամավորական թեկնածուների այն ցուցակների, կուսակցությունների միջև, որոնք ստացել են սահմանված նորմայից ավելի ձայներ:

Ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքի համաձայն ընտրողը պետք է քվեարկի մեկ պատգամավորության թեկնածուի կամ ցուցակի օգտին:

Ընտրողի մեկից ավելի ձայնի իրավունքի սկզբունքի համաձայն ընտրողը քվեարկում է այնքան պատգամավորության թեկնածուների կամ ցուցակների օգտին, որքան սահմանվում է օրենքով:

Միափուլ ընտրությունների դեպքում, ընտրողների մասնակցության և ընտրվելու համար անհրաժեշտ թվաքանակով ձայների համար սահմանափակում չի դրվում, և ընտրություններն ավարտվում են մեկ քվեարկությամբ:

Երկփուլ ընտրությունների դեպքում ընտրվող թեկնածուին որոշելու համար ամենաշատ, բայց անբավարար թվով ձայներ ստացած թեկնածուների միջև անց է կացվում կրկնական քվեարկություն և դրա արդյունքով որոշվում ընտրված թեկնածուն:

Բազմափուլ ընտրություններում թեկնածուներից ոչ մեկի բավարար թվով ձայներ չստանալու դեպքում անցկացվում են կրկնական ընտրություններ և այլն:

Այլընտրանքի սկզբունքի կիրառման համաձայն ընտրատարածքում պետք է քվեարկվեն ընտրատարածքին հատկացված մանդատների թվից ավելի թվով թեկնածուներ կամ թեկնածուների ցուցակներ: **Միաթեկնածու (մոնոտոմիայ կամ ունիտոմիայ) ընտրություններում** քվեարկվում է մեկ անձ:

Գիրքը գրելու հիմնական նպատակը նպաստելն է արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդրի լուծմանը:

Միամանդատ ընտրություններում մեկ ընտրատարածքից ընտրվում է մեկ պատգամավոր: Միամանդատ ընտրությունները համատեղելի են, թերևս, միայն մեծամասնական ընտրակարգի հետ:

Բազմամանդատ (այլոտոնոմիայ) ընտրություններում մեկ ընտրատարածքից ընտրվում են մեկից ավելի պատգամավորներ:

Բազմամանդատ ընտրությունները համատեղվում են, ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգերի հետ:

Մեծամասնական (մաժորիտար) ընտրակարգով ընտրություններում մանդատ են ստանում (ընտրված են համարվում) ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն կամ թեկնածուները:

Մեծամասնական ընտրակարգը կարելի է տարանջատել **հարաբերական և բացարձակ մեծամասնական ընտրակարգերի:**

Միամանդատ ընտրություններում հարաբերական մեծամասնական ընտրակարգի համաձայն ընտրված է համարվում ընտրատարածքի ընտրողների ձայների հարաբերական մեծամասնությունը (ամենաշատ ձայները) ստացած թեկնածուն:

Իսկ **բազմամանդատ հարաբերական մեծամասնական ընտրակարգով ընտրություններում** ընտրված են համարվում ամենաշատ ձայները ստացած՝ ընտրատարածքին հատկացված մանդատների թվով տեղերն զբաղեցրած, թեկնածուները:

Բացարձակ մեծամասնական ընտրակարգի համաձայն ընտրված է համարվում ընտրատարածքի ընտրողների կամ քվեարկության մասնակիցների, կամ (եթե անվավեր քվեաթերթիկները) չեն հաշվվում քվեարկողների իրական ձայների բացարձակ մեծամասնությունը կամ, որ նույնն է՝ ձայների կեսից ավելին ստացած թեկնածուն:

Բացարձակ մեծամասնական ընտրակարգը համատեղելի է միամանդատ կամ բազմամանդատ, բազմափուլ ընտրությունների հետ:

Կոմունիստիկ ընտրությունները ընտրական համակարգն է, որի ընթացքում ընտրողն իրավունք ունի քվեարկել ցուցակի թեկնածուների օգտին՝ յուրաքանչյուրին տալով համապատասխան թվային արտահայտությամբ գնահատական: Իսկ յուրաքանչյուր թեկնածուի համար արդյունքները հաշվարկվում են ըստ նրանց ստացած թվերի գումարի:

Համամասնական (պրոպորցիոնալ) ընտրակարգով ընտրություններում մանդատները բաշխվում են քվեարկվող պատգամա-

վորական թեկնածուների ցուցակների միջև, ինչպես ցուցակներին տրված, այնպես էլ ցուցակներում ընդգրկված պատգամավորներին տրված գումարային ձայներին համամասնորեն:

Համամասնական ընտրակարգով ընտրություններում մանդատները սովորաբար որոշակի քանակի ձայներից՝ ներքին քվոտայից, ավելի ձայներ ստացած ցուցակների միջև հիմնականում բաշխվում են, այնպես, որ յուրաքանչյուր ցուցակին հասանելիք մանդատների թիվը կազմի մանդատների ընդհանուր թվի այն մասը, որ մասը կկազմի տվյալ ցուցակին կողմ տրված ձայների թիվը՝ բոլոր ցուցակներին կողմ տրված ձայների ընդհանուր կամ ընտրություններին մասնակցած ընտրողների թվից:

Ցուցակին հասանելիք մանդատները տրվում են այն թեկնածուներին, որոնց հերթական համարները ցուցակում փոքր է ցուցակին հասանելիք մանդատների թվից կամ հավասար է, այդ թվին, եթե կիրառվում է **ընտրողի միայն ցուցակի օգտին քվեարկելու իրավունքի սկզբունքը**:

Միայն **որևէ ցուցակի մեկ թեկնածուի օգտին քվեարկելու իրավունքի և փոխանցվող ձայների սկզբունքի** համաձայն ընտրողը քվեարկում է, որևէ ցուցակի մեկ թեկնածուի օգտին, իսկ ընտրությունների արդյունքներն ամփոփելիս մանդատներն առաջին հերթին տրվում են սահմանված քվոտայից ավելի ձայներ ստացած թեկնածուներին, որից հետո մանդատներ ստացած թեկնածուների մնացորդային կամ, որ նույնն է՝ քվոտայից ավելի ձայները հաշվվում են նույն ցուցակի հաջորդ ամենաշատ ձայներ ստացած թեկնածուների օգտին, և քվոտայից ավելի ձայներ ստացվելու դեպքում մնացած մանդատները տրվում են նրանց:

Ընտրողի մեկից ավելի ձայնի իրավունքի և տեղափոխության սկզբունքի համաձայն ընտրողը քվեարկում է տարբեր ցուցակների թեկնածուների օգտին: Իսկ մանդատները տրվում են ցուցակների ամենաշատ ձայները ստացած թեկնածուներին:

Նախապատվության (պրեֆերենցիալ) սկզբունքի համաձայն ընտրողին իրավունք է վերապահվում ցուցակի օգտին քվեարկելուց բացի արտահայտելու իր նախապատվությունն այս կամ այն թեկնածուի օգտին, հիմնականում այն ցուցակի թեկնածուների օգտին, որին կողմ է քվեարկել: Իսկ մանդատները բաշխվում են ցուցակների միջև ցուցակներին տրված ձայներին համամասնորեն: Ցուցակին հասանելիք մանդատները բաշխվում են դրանում ընդգրկված թեկնածուների միջև, սկզբից ըստ նրանց

տրված նախապատվության, ապա միայն ցուցակին հասանելիք մնացած մանդատները տրվում են մյուս թեկնածուներին՝ ըստ նրանց ցուցակում զբաղեցրած հերթականության:

Դասական ձևով յուրաքանչյուր ցուցակին հասանելիք մանդատների թիվը հաշվում են յուրաքանչյուր ցուցակին տրված ձայների թիվը բազմապատկելով մանդատների ընդհանուր թվով և արդյունքը բաժանելով կամ բոլոր ցուցակներին տրված ձայների թվի վրա, կամ ընտրություններին մասնակցած ընտրողների թվի վրա, կամ, եթե սահմանված է քվոտա, ապա քվոտան հաղթահարած կուսակցությունների ձայների թվի վրա:

Յուրաքանչյուր ցուցակին հասանելիք մանդատների թիվը հավասար է՝ **(յուրաքանչյուր ցուցակին տրված ձայների թիվ X մանդատների ընդհանուր թիվ) բոլոր ցուցակներին տրված ձայների թիվ...**

Կամ որոշվում է մեկ մանդատի համար ձայների նվազագույն թիվը՝ պարզ քվոտան կամ բոլոր ցուցակներին տրված ձայների թիվը, կամ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը, կամ քվոտան հաղթահարած կուսակցությունների ձայների թիվը բաժանելով մանդատների ընդհանուր թվի վրա: Այնուհետև յուրաքանչյուր ցուցակին տրված ձայների թիվը բաժանվում է պարզ քվոտայի վրա:

Օրինակ՝ ենթադրենք մանդատների ընդհանուր թիվը 100 է, ցուցակներից մեկը ստացել է 21000 ձայն, իսկ բոլոր ցուցակներին տրված ձայները՝ 200000 են, նշված ցուցակին հասանելիք մանդատների թիվը՝ կլինի 10, քանի որ $21000 \cdot 100 / 200000 = 10,5$, իսկ մեկ մանդատի համար ձայների նվազագույն թիվը՝ պարզ քվոտան, կլինի 2000 ($200000 / 100 = 2000$): Ցուցակին հասանելիք մանդատների թիվը կլինի 10 ($21000 : 2000 = 10,5$): Եթե հաշվարկն իրականացվի ընտրություններին մասնակցած ընտրողների թվով, որը ենթադրենք 250000 է, ապա այդ ցուցակին հատկացված մանդատների թիվը կլինի 8, քանի որ $21000 \cdot 100 / 250000 = 8,4$, տվյալ դեպքում պարզ քվոտան կլինի 2500 ($250000 / 100 = 2500$), ($21000 / 2500 = 8,4$):

Իսկ եթե սահմանված է քվոտա, ասենք՝ բոլոր կողմ ձայների 5%-ը և քվոտան հաղթահարած կուսակցություններին տրված կողմ ձայների թիվը 150000 է, ապա այդ ցուցակին հատկացված մանդատների թիվը կլինի 14, քանի որ $21000 \cdot 100 / 150000 = 14$, պարզ քվոտան կլինի՝ 1500 ($150000 / 100 = 1500$), ($21000 / 1500 = 14$):

Մանդատների բաշխումն ըստ ցուցակների իրականացվում է նաև Դ՝ Շօնդոի² կամ որ նույնն է՝ ամենամեծ միջինի սկզբունքով,

համաձայն որի յուրաքանչյուր ցուցակի կողմ ձայների թիվը բաժանվում է հերթականությամբ 1, 2, 3 և այլն, մինչև մանդատների ընդհանուր թվի վրա և ըստ ստացված թվերի մեծության հերթականության կառուցվում աղյուսակ, որից որպես ամենամեծ միջին թիվ. որը կհանդիսանա մեկ մանդատի համար ձայների նվազագույն թիվ կամ, որ նույնն է պարզ քվոտա, վերցվում է այն թիվը, որի հերթական համարը համապատասխանում է մանդատների ընդհանուր թվին, և քանի անգամ, որ ամենամեծ միջին թիվն ամբողջական տեղավորվում է յուրաքանչյուր ցուցակի կողմ ձայների թվի մեջ, այդքան մանդատ էլ հասնում է յուրաքանչյուր ցուցակին:

Օրինակ ենթադրենք՝ քվեարկության են դրված Ա, Բ, Գ, Դ ցուցակները, իսկ ընտրատարածքին հասնում է 4 մանդատ: Ա ցուցակը ստացել է 15800 ձայն, Բ ն՝ 20000, Գ ն՝ 5000, Դ ն՝ 11000: Ամենամեծ միջինը որոշելու համար յուրաքանչյուր ցուցակին տրված ձայների թվերը հերթականությամբ բաժանվում է 1 ի, 2 ի, 3 ի, և 4 ի, քանի որ ընտրատարածքին հատկացված մանդատների թիվը 4 ն է:

$$15800/1=15800 \quad 20000/1=20000 \quad 5000/1=5000 \quad 11000/1=11000$$

$$15800/2=7900 \quad 20000/2=10000 \quad 5000/2=2500 \quad 11000/2=5500$$

$$15800/3=5266.7 \quad 20000/3=6666.6 \quad 5000/3=1666.7 \quad 11000/3=3666.7$$

$$15800/4=3950 \quad 20000/4=5000 \quad 5000/4=1250 \quad 11000/4= 2750$$

Այնուհետև կառուցվում է աղյուսակ ըստ բաժանման արդյունքում ստացված թվերի նվազման հերթականության՝ 20000, 15800, 11000, 10000, 7900, 6666.7, 5500, 5266.7, 5000, 3950, 3666.7, 2750, 2500, 1666.7, 1250: Որպես ամենամեծ միջին թիվ վերցվում է սկզբից հաշված 4րդ թիվը՝ 10000-ը: Յուրաքանչյուր ցուցակին հասանելիք մանդատների թիվը որոշելու համար, դրանց ստացած ձայներն առանձին-առանձին բաժանվում է պարզ քվոտայի՝ 10000 ի վրա և ըստ ստացված ամբողջ թվերի, ցուցակների միջև բաշխվում մանդատները: Ա ցուցակին տրվում է 1 մանդատ (15800:10000 = 1.58):

$$Բ \text{ ցուցակին տրվում է } 2 \text{ մանդատ } (20000:10000 = 2):$$

$$Գ \text{ ցուցակին մանդատ չի տրվում } (5000:10000 = 0.5):$$

$$Դ \text{ ցուցակին տրվում է } 1 \text{ մանդատ } (11000:10000 = 1.1):$$

Բոլոր երկրներում ընտրություններն անցկացվում են հիմնականում վերը նշված սկզբունքների տարբեր հնարավոր տարբերակների համադրությամբ ընտրական համակարգերով:

Գլուխ 2

ԸՆՏՐԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ³

Ժողովրդավարական երկրների պետաիրավական պատմական փորձը ցույց է տալիս, որ պաշտամենտների գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն այդ երկրների հասարակության սովորույթներով ու ավանդույթներով, հասարակությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտով, հասարակական փոխհարաբերությունները կարգավորող պետության կողմից սահմանված օրենքներով և դրանց կիրառման ապահովումով, ներպետական քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլ երկրների հետ ունեցած միջպետական փոխհարաբերություններով: Այն կախված է նաև նրանից, թե ինչպիսի կազմերով են դրանք ձևավորվում: Իսկ թե ինչպիսի կազմով կձևավորվեն ընտրովի մարմինները, նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ինչպիսի ընտրական համակարգերով են անցնում ընտրությունները:

Ներկայացնենք որոշ համեմատական վերլուծություն տարբեր ընտրական համակարգերի և դրանց կիրառման հետևանքով ստեղծվող իրավիճակների վերաբերյալ.

Եթե կիրառվում է ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով, միամանդատ, հարաբերական մեծամասնական ընտրական համակարգը և ընտրատարածքները փոքր են, ապա առավել հավանական է, որ կընտրվեն այն անձինք, ովքեր ունեն մեծ և ոչ միայն քաղաքական ազդեցություն համապատասխան ընտրատարածքի ընտրողների վրա:

Երբ քվորում և քվոտա չի սահմանվում, և կիրառվում է միամանդատ, հարաբերական մեծամասնական ընտրակարգերը, մնում է հնարավոր այն ելքը, երբ մի ընտրատարածքում ավելի շատ ձայներ ստացած, բայց 2-րդ տեղը զբաղեցրած թեկնածուն չի ընտրվում, իսկ մեկ այլ ընտրատարածքում ավելի քիչ ձայներ ստացած, բայց I-ին տեղը զբաղեցրած թեկնածուն ընտրվում է:

Եթե կիրառվում է սահմանված քվորումով, ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով, միամանդատ, մեծամասնական ընտրակարգերով ընտրություններ, ապա հնարավոր է, որ մի ընտրատարածքում ընտրությունները չկայանալու պատճառով, քվորումից մի փոքր պակաս ձայներ ստացած թեկնածուն չընտրվի, իսկ մեկ այլ ընտրատարածքում, ընտրությունները կայանալու դեպքում, մեկ այլ թեկնածու շատ ավելի քիչ թվով ձայներ

ստանալով ընտրվի: Տվյալ դեպքում, երբ սահմանվում է քվորումից պակաս քվոտա, իրավիճակը քիչ է փոխվում: Ցածր քվոտայի սահմանման դեպքում այդ իրավիճակը փոխվում է, բայց հնարավոր է մնում որոշ ընտրատարածքներում ընտրությունները չկայանալու և պառլամենտի կազմը երկար ժամանակ չլրանալու իրադրությունը: Այդ բացը լրացնելու նպատակով որոշ երկրներում երկրորդ փուլի ընտրությունների համար քվորումը և քվոտան հանվում են: Այդպես է, օրինակ՝ Ֆրանսիայում:

Ընտրողի մեկ ձայնի իրավունքով, բազմամանդատ, հարաբերական մեծամասնական ընտրակարգերը չեն վերացնում ընտրությունները մեկ փուլով չավարտվելու հնարավորություններն այն պատճառով, որ առաջադրվող թեկնածուների թիվը կարող է պակաս լինել ընտրատարածքին հասանելիք մանդատների թվից. հնարավոր է նաև այն իրադրությունը, երբ նույն և տարբեր ընտրատարածքներում թեկնածուներն ընտրվում են մեծապես տարբեր քանակի ձայներ ստանալու պայմանով:

Ընտրողի՝ ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայների իրավունքի սկզբունքով, բազմամանդատ, քվոտայի սահմանմամբ, մեծամասնական ընտրակարգերը նվազեցնում են ընտրությունները մեկ փուլով չավարտվելու հավանականությունը:

Համամասնական ընտրակարգերը շատ քաղաքացիների ընտրվելու հնարավորությունից զրկելու հնարավորություն են առաջ բերում և նպաստում փոքրաթիվ մարդկանց խմբերով մեծ թվով քաղաքական կազմակերպությունների առկայությանը պառլամենտում: Քվոտայի սահմանումը նվազեցնում է կուսակցու-թյունների թիվը պառլամենտում:

Ընտրողի՝ միայն ցուցակին ձայն տալու իրավունքի սկզբունքի կիրառմամբ ընտրողները զրկվում են կոնկրետ թեկնածուին ձայն տալու հնարավորությունից:

Երբ կիրառվում է նախապատվության կամ տեղափոխության սկզբունքը, թերևս չի վերանում այն դրությունը, երբ քաղաքական միություններին չհարող և ցուցակներում չընդգրկվող շատ քաղաքացիներ զրկվում են ընտրվելու համար քվեարկվելու հնարավորությունից:

Մեծամասնական և համամասնական ընտրակարգերի մասնակի խառը համակարգով ընտրությունները կուսակցական և ոչ կուսակցական թեկնածուների համար առաջ են բերում ոչ համարժեք իրավիճակ:

Եթե կիրառվում է ընտրողի 2 ձայնի իրավունքը. մեկը՝ մեծամասնական ընտրակարգի համար առաջադրված թեկնածուի, մյուսը՝ համամասնական ընտրակարգի ցուցակի համար, և առանձին առաջադրված թեկնածուներին և ցուցակներին հասանելիք մանդատների թվաքանակների չափեր չեն սահմանված, հնարավոր է դառնում պատգամավորական մանդատներն առանձին թեկնածուների և կուսակցական ցուցակների միջև բաշխել ըստ I-ին և II-րդ ձայների հարաբերակցության, իսկ կուսակցական ցուցակներով ընտրված և ընտրատարածքներից ընտրված պատգամավորների թվաքանակները պառլամենտում կախված կլինի ընտրողների առաջին ու երկրորդ ձայների հարաբերակցությունից:

Եթե կիրառվում է ընտրողի մեկ ձայնի իրավունքի, սահմանված քվոտայի, մեծամասնական և համամասնական փոխանցվող ձայնի սկզբունքներով ընտրակարգերի խառը համակարգ, ապա թերևս կուսակցական ցուցակներով քվեարկվող թեկնածուները որոշակի առավելություն կունենան առանձին առաջադրված թեկնածուների նկատմամբ, քանի որ ցուցակի որոշ թեկնածուների համար լրացուցիչ հնարավորություն է ստեղծվում մանդատ ստանալ փոխանցվող ձայների հաշվին...

Ընտրական իրավունքի բոլոր սկզբունքների և ընտրակարգերի հնարավոր տարբեր տարբերակների համադրությամբ ընտրական համակարգերը բազմազան են: Իսկ ներկայցված տարբեր ընտրական համակարգերով ընտրությունների հնարավոր արդյունքների փոքրիկ վերլուծությունն իսկ ցույց է տալիս, որ ընտրովի մարմինների կազմը կախված է նաև ընտրական համակարգից: Այդ է պատճառը, որ երբեմն այս կամ այն երկրում պետական կառավարման համակարգային վերափոխումների շեմին փոխում են իշխանությունների կազմավորման համար նախատեսված ընտրական համակարգերը:

Ժողովրդավարական երկրների պետական կառավարման համակարգի հիմքում՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների տարանջատվածությունն է ու դրանց միմյանց հետ որպես հակակշիռներ գործելու մեխանիզմների գործնական ապահովումն է, որը կախված է այն բանից, թե ինչպես են դրանք կազմավորվում, միմյանցից կախվածության աստիճանն ինչպիսին է, ինչ մակարդակի հասարակական վերահսկողության ներքո են դրանք և որքանով են կախված հասարակությունից: Այսինքն ժողովրդավարական երկրների իշխանությունների գործունեության

հիմքում հասարակական կարծիքն է ու իշխանությունների հասարակությունից կախվածության բարձր աստիճանը:

Իսկ հասարակության յուրաքանչյուր անդամի ստույգ կարծիքն իմանալու ձևը հանրաքվեն է, իշխանությունների հասարակությունից կախվածությունը ապահովվում է ընտրություններով: Իշխանությունների հասարակությունից կախվածության աստիճանը պայմանավորված է ընտրական համակարգով: Ոչ ժողովրդավարական երկրների համար վերը թվարկված պայմաններն իրականում պարզապես անտեսվում են:

Այսպիսով ցանկացած երկրում արդյունավետ կգործի ընտրական համակարգի այն մոդելը, որը կբավարարի այդ երկրի ժողովրդի, եթե ոչ բոլորի, քանզի կան նաև հանցագործներ, խաբեբաներ, սրիկաներ, ապա գերակշիռ մեծամասնության ցանկությանը համարժեք իշխանությունների կազմավորման պահանջին: Բոլոր դեպքերում շահում են այն երկրների ժողովուրդները, որտեղ ընտրական համակարգը բավարարում է պետության արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ իշխանության կազմավորման և քաղաքական ազատությունների ու տնտեսական զարգացման մակարդակի բարձրացման պահանջներին, իսկ ընտրությունները նպաստում են հասարակության ներդաշնակ ու քաղաքակիրթ փոխհարաբերությունների հաստատմանն ու սեփական երկրի, իշխանությունների, հանդեպ վստահության բարձրացմանը:

Որևէ երկրում Ներկայացուցչական ժողովրդավարությունից առավել բարձր որակի ժողովրդավարություն, հասարակական համերաշխության առավել բարձր մակարդակ ապահովվում է, եթե լայնորեն կիրառվում է նաև Ուղիղ ժողովրդավարությունը, այսինքն էրբ կարևորագույն, օրենքներն ու որոշումները մշակվում են ներկայացուցչական մարմինների կողմից և ընդունվում են հանրաքվեների միջոցով:

Գլուխ 3

ԸՆՏՐԱԿԵԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրակեղծիքների դերը պետական կառավարման համակարգում

Ընտրակեղծիքները հատկանշական են տնտեսական զարգացման և քաղաքական ազատությունների ցածր մակարդակ, պետական կառավարման թվացյալ բազմակուսակցական, բայց իրականում, միակուսակցական ու արտադրա-առևտրական փոխհարաբերությունների կանոնավորման կոռուպցիոն համակարգ ունեցող երկրներին: Այդ երկրներում ընտրակեղծիքների կանխարգելման օրենսդրական նորմերի անհրաժեշտությունն ակնհայտ է, որոնք համարյա բացակայում են:

Ոչ ժողովրդավարական երկրներում ընտրակեղծիքների կանխարգելման օրենսդրական նորմերի բացակայությունը պարզապես նպաստում է ընտրակեղծիքներով իշխանությունների կազմավորման հնարավորություններին, քանի որ իշխանություն ստանձնելը, թեկուզ ձևականորեն, իրականացվում է իրավական հիմքերով: Իսկ եթե օրենսդրությունները ընտրակեղծիքների հնարավորությունները չեն բացառում ու իրենց մեջ չեն ներառում ընտրակեղծիքների բացահայտման ու դրանք հաշվի առնելու հստակ մեխանիզմների նորմերի փաթեթ, ապա դժվար թե ընտրակեղծիքներ չլինեն:

Ներկայումս բոլոր երկրներում էլ իշխանությունները կամ դրանց ներկայացուցչական թևերը կազմավորվում են ընտրությունների միջոցով: Իշխանություններ ասելով նկատի ունենք երկրի սահմաններում մարդկանց փոխհարաբերությունների կարգավորման նորմեր սահմանող, տվյալ երկրի տարածքների տիրապետման, կառավարման ու հասարակական փոխհարաբերությունները կանոնավորող կանոնները հաստատող, հասարակական կյանքի կառավարումն իրականացնող և երկրում սահմանված կանոններից ու նորմերից շեղումների վերաբերյալ որոշումներ կայացնող օրենսդիր, գործադիր և դատական մարմինները: Իշխանության ներկայացուցչական թև ասելով նկատի ունենք իշխանության ընտրովի մարմինները:

Որևէ երկրի ժողովրդավարական լինելու չափանիշը պայմանավորված է նաև հասարակական կարծիքին համապատասխան իշխանության կազմավորման հնարավորությամբ և իշխանությունների հասարակության կարծիքից կախված լինելու աստիճանով: Իշխանության վերաբերյալ հասարակության

յուրաքանչյուր անդամի կարծիքի բացահայտման և ըստ դրա իշխանության ընտրովի մարմնի կազմավորման միջոցը արդար ընտրություններն են: Իսկ ընտրակեղծիքներով ընտրությունները պարզապես հասարակական կարծիքի խեղաթյուրում է՝ իշխանության բռնազավթման նպատակով:

Եթե իշխանությունն ունեցողները կամ դրան ձգտողները հնարավորություն ունենան, իշխանությունը կպահեն կամ այն կվերցնեն առանց ընտրությունների:

Իշխանությունը այն ունեցողների կամ դրան ձգտողների, քաղաքական գործիչների համար նախ առաջ իրենց հետաքրքրությունների բավարարման ու այլոց իրենց կամքին ենթարկելու միջոց է:

Քաղաքական գործիչների բացարձակ մեծամասնության, այսինքն՝ իշխանության ձգտմամբ միավորված մարդկանց համար իշխանությունը, հնարավորության դեպքում, սեփական շահերին ծառայեցնել ու անձնական բարեկեցության խնդիրները լուծելու և փող աշխատելու միջոց է: Լավ է, եթե քաղաքական համակարգն այնպիսին է, որ իշխանությունները առավել կախվածություն ունեն սեփական ժողովրդից, այլ ոչ թե այլ պետությունների ղեկավարներից, և ժողովուրդն առանց դրսի ուժերից կախվածության ու արյունահեղության քաղաքակիրթ ընտրություններով իշխանափոխության հնարավորություն ունի:

Իշխանությունների առավել կախվածությունը ժողովրդից և առանց բռնության ու արյունահեղության իշխանափոխությունը կարող են ապահովել միայն առանց ընտրակեղծիքների, բոլորի համար վստահելի ընտրությունները:

Ընտրակեղծիքները հանցագործ ճանապարհով իշխանություն պահելու կամ այն վերցնելու միջոցներից մեկն է, որը կիրառվում է գրեթե բոլոր իրեն ժողովրդավարական երկիր հռչակած բռնապետություններում: Ավելին մարդկանց խմբերը, որոնք մասնակցում են ընտրակեղծիքների կազմակերպմանն ու իրականացմանը՝ հանցագործությանը, անում են դա, որովհետև դա հարիր է կյանքի ու ապրելաձևի նկատմամբ ունեցած իրենց մոտեցումներին ու համոզմունքներին, իսկ մյուս մասն անձնական շահագրգռվածության կամ ճնշումների ազդեցության տակ են միավորվում հանցանք կատարելու համար: Իսկ ցանկացած երկրում, բռնապետական, ավտորիտար պետական կառավարման համակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակությամբ մարդիկ կգտնվեն: Իսկ հատկապես ոչ զարգացած երկրներում արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման

գլխավոր խոչընդոտներից մեկը հասարակության մեծամասնության գիտակցությունն ու բարքերն են, հասարակական բնութագիրը, մենթալիտետի, այդ թվում նաև այն անձանց, ովքեր հանդես են գալիս մարդու իրավունքների ու ազատությունների և օրենքի գերակայության պաշտպանության դիրքերից, բայց իրականում գերադասում են հարցերի՝ ծանոթների, կաշառքների ու այլ ճանապարհով լուծելու մեթոդներն օրենքից ու օրինականությունից դուրս:

Ընտրակեղծիքները պարզապես հաստատում են տվյալ երկրի ժողովրդի անազատ լինելու և մարդու իրավունքներն ու ազատությունները գերադասող արժեհամակարգի վրա խարսխված քաղաքակրթական ոչ բարձր աստիճանի վրա գտնվելու փաստը: Իսկ անազատության մեջ գտնվող ու բռնությունների ենթարկվող ժողովուրդը պահի հասունացման դեպքում դիմելու է բռնությամբ իշխանությունը փոխելու միջոցների:

Ցավալին այն է, որ ցանկացած ընտրակեղծ երկրի ղեկավար ավելի է գերադասում իշխանությունը, թեկուզ դրսից կախված, քան թե արդարությունն ու սեփական երկրի քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Իհարկե, եթե բանն հասնում է ընտրակեղծ երկրի ղեկավարի սեփական կաշին փրկելու մասին մտածելուն, ապա նա առաջին հերթին հույսը դնելու է այն անձանց, այդ թվում այն երկրի ղեկավարների օգնության վրա ում շահերին ծառայել է:

Ոչ ժողովրդավարական երկրների իշխանությունները, քաղաքական և տնտեսական էլիտան իրենց առջև արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդիր չեն դնում: Ավելին, նրանք ընտրակեղծիքներն անիմաստացնող նորմերի, իրավակիրառական մեխանիզմների, մշակման և գործադրման համար չէ որ մտահոգված են, այլ հակառակը՝ ինչպես անեն, որ իրավական հիմք ստեղծեն և իրականում ընտրակեղծիքներով ընտրությունների իրենց ձեռնադրությունները ընդունելի կամ համակերպելի դարձնեն ժողովրդի ու միջազգային հանրության համար:

Զավեշտն այն է, որ ոչ ժողովրդական երկրների ընդդիմադիր քաղաքական գործիչների մեծ մասը, ժողովրդավարական արժեքների ու արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման կողմնակից են, քանի դեռ իշխանություն չունեն, հենց ունենում են միանգամից մոռանում են թե՛ ժողովրդավարական արժեքների, թե՛ արդար ընտրություններով

իշխանությունների կազմավորման մասին:

Որքան էլ, որ միջազգային հանրության թվացյալ ճնշման տակ ժողովրդավարական զարգացումների իմիտացիա է արվում, միևնույն է, եթե երկրում օրենքի գերակայություն չի ապահովվում, ընտրությունները կեղծվում են և արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման հարցը լուծելու խնդիր չի դրվում ու չի լուծվում, ապա տվյալ երկրի ժողովրդավարական զարգացումների մասին հայտարարությունները մերկապարանոց են:

Տարօրինակ է, երբ արդար ընտրությունների անհրաժեշտության մասին խոսում են մարդիկ, որոնք կազմակերպում են ընտրակեղծիքներն ու մասնակցում դրան կամ պաշտպանում ընտրակեղծիքներով ընտրված անձանց: Հարց է, թե ով կհավատա, որ ընտրակեղծիքներ չեն լինի, եթե նույնիսկ, մինչ ընտրությունները չեն ձեռնարկվում արդար ընտրությունների կազմակերպման համար իրական լուրջ քայլեր:

Այն, որ ընտրությունները կեղծվում են չեն ժխտում նույնիսկ այդ երկրների իշխանությունները, սակայն պարզապես հավաստիացնում են, որ դրանք էապես չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա: Իսկ միջազգային դիտորդները կամ ելնելով քաղաքական նկատառումներից, կամ իրենց հարմար թեկնածուով իշխանափոխություն կազմակերպելու հնարավորությունից հայտարարում են հակառակը կամ ընդունում են ընտրակեղծիքներով ընտրությունների արդյունքները:

Տեղին է նշել, որ ընտրակեղծիքները միշտ էլ ազդում են ընտրությունների արդյունքների վրա, իսկ էապես ազդելու հարցը պարզապես մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխելու կամ որևէ թեկնածուի փաստացի ընտրված կամ չընտրված լինելու առնչությամբ ընտրական թվերի գնահատման խնդիր է, որը պարզապես ավելի քան սուբյեկտիվ բնույթ է կրում քան օբյեկտիվ:

Ընտրակեղծիքները հատկանշական են ոչ ժողովրդավարական գրեթե բոլոր երկրների համար անկախ այն բանից, թե տեղի է ունենում գունավոր հեղափոխություն, թե անգույն կամ ավելի ճիշտ սև նշանակում կամ հակաժողովրդավարական ճահճացում:

Նշենք, որ ընտրակեղծիքներով իշխանությունների կազմավորումը պետական կառավարման բռնապետական, կոռուպցիոն համակարգի և իշխանությունների հասարակության մեծամասնությունից կախվածության ցածր մակարդակի արդյունք

է: Իսկ հասարակության մի մասի ազատությունների համար կազմակերպված գործողությունները հակազդվում է իշխանության տարբեր` այդ թվում ուժային կառույցների, անարդար գործողություններով, ընդհուպ մինչև հասարակության այդ մասի առավել ակտիվ ու ազդեցիկ մարդկանց նյութական միջոցներից, ապրուստի հնարավորությունից զրկելով, երբեմն էլ ազատագրվելով կամ ստիպելով ծառայել իշխանությանը: Երկրում, որտեղ նյութատեխնիկական ու ֆինանսական միջոցներն անարդար բաշխվում են հիմնականում իշխանության հենարանը հանդիսացող անձանց միջև, ընտրակեղծիքները` որպես երևույթ սովորական են:

Ոչ ժողովրդավարական երկրներում, որտեղ մարդկանց մեծամասնությունը քաղաքական և քաղաքացիական ազատությունների իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից զրկված են, դատաիրավական համակարգի կոռուպցիայով լինելու ու բացառապես իշխանություններին ծառայելու պատճառով, որտեղ սահմանված չեն և չեն գործում մարդկանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն ապահովող օրենսդրական լիարժեք նորմեր, օբյեկտիվորեն չեն կանխարգելվում և հնարավորություն չեն ընձեռում հասարակությանը կանխարգելել ընտրակեղծիքները, որտեղ օրենսդրություններում սահմանված չեն ընտրությունների օբյեկտիվ գնահատման մեխանիզմներ, իշխանություններն հիմնականում կազմավորվում են ընտրակեղծիքներով:

Ցանկացած երկրի հասարակության թեկուզ և փոքր հատվածը, առավել ևս անժողովրդավար երկրների հասարակության զգալի մասը` մի քանի տասնյակ տոկոսը, միշտ իշխանությունների կողմն է, ուստի ընտրակեղծիքների` ավելի ճիշտ անարդարության, կողմնակիցներ կան ցանկացած երկրում: Ընտրակեղծ երկրի արժեհամակարգը թույլ է տալիս ընտրակեղծիքներով իշխանությունների կազմավորումը, քանզի քաղաքական բիզնես-էլիտան` մենաշնորհատերերն, օգտվելով օրենքն ու իշխանությունը սեփական շահերին ծառայեցնելու հնարավորությունից, նույնիսկ քաղաքակրթության շրջանակներից դուրս բիզնեսից ու հենվելով կաշառքից օգտվող պետական ծառայության աշխատակիցների ու նրանցից կախված բիզնես խավի վրա, ստանալով աջակցություն ներսից ու դրսից, կազմակերպում է ընտրակեղծիքները և շահագրգռված չէ երկրում արդար արժեհամակարգի հիմքեր դնելու մեջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՆՈՅՄԱՆ ԴԵՐԸ ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Քաղաքակրթությունը վաղուց է փորձում ընտրակեղծիքների դեմն առնելու միջոցներ գտնել և այն կիրառել: Մակայն նույնիսկ ժողովրդավարության անունից հանդես եկող միջազգային հանրությունը ներկայացնող քաղաքական գործիչների, հատկապես աշխարհաքաղաքական խնդիրները լուծող պետությունների ղեկավարների մեծ մասն, իրականում, ոչ թե ընտրակեղծիքների դեմ են, այլ դրանք ծառայեցնում են սեփական շահերից բխող աշխարհաքաղաքական խնդիրների լուծման համար: Այլապես ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ չեն աջակցի, նշանակի կամ հանդուրժի ընտրակեղծ երկրների ղեկավարներին, անկախ այն բանից, թե վերջիններս ձեռնառու են նշված պետությունների և միջազգային հանրության, քաղաքական գործիչներին, թե ոչ:

Չնայած եթե որևէ երկրի հասարակության մեծամասնությունն հանդուրժում է իր երկրում, կաշառքով հարցերի լուծումն ու այլոց նկատմամբ անազնվությունը, թալանչիությունն ու խաբեբաությունը, երբեմն էլ մարդասպանությունը, գերադասում է ոչ ազնիվ մարդկանց իշխանությունը, որի հետևանքն էլ ընտրակաշառքով քվեարկելն ու ընտրակեղծիքներն են, ապա հարց է, թե ինչու մեղադրել միջազգային որոշ գործիչների ընտրակեղծիքներով նշանակված ղեկավարներին աջակցելու, իրենց կամքին ենթարկելու շահախնդրության ու համապատասխան երկիրն իրենց ազդեցության ոլորտում կամ կախվածության մեջ պահելու համար, չէ որ դա էլ է բնական:

Ցանկացած կառույցի, առավել ևս հզոր երկրի ղեկավարի համար, հատկապես, կախյալ այլ երկրի ներսում հարցեր լուծելն ավելի հեշտ է եթե ընտրակեղծ երկրի ղեկավարի վրա ավելի մեծ ազդեցություն ունի, քան այդ երկրի ժողովուրդը:

Պարզ է, որ աշխարհաքաղաքական ազդեցություն ունեցող երկրները, կառույցները, կախված իրենց շահերից ու իրադրությունից, տարբեր ձևերով ու միջոցներով են ազդում կախյալ ընտրակեղծ երկրների վրա, ուստի և տարբեր գնահատական են տալիս ընտրակեղծիքներին ու տարբեր մոտեցումներ են ցուցաբերում դրանց արդյունքներին ու երբեմն էլ տարբեր ժամանակ նույն ընտրությունների վերաբերյալ հակասական հայտարարություններ անում:

Ինչ վերաբերում է ընտրություններ անցկացնող երկիրն ընդգրկող

միջազգային կառույցներին, եթե ընտրություններ անցկացնող երկրի իշխանությունները ձեռնառու լինեն կառույցում քաղաքական կշիռ ունեցող երկրներին, ապա կառույցի ներկայացուցիչներն անկախ այն բանից, թե ինչպիսի ընտրություններ են անցել իրականում կամ կհայտարարեն, թե ընտրությունները նորմալ էին, կամ չեն ցանկանա կոշտ որոշում կայացնել համապատասխան երկրի նկատմամբ, եթե նույնիսկ այդ երկրի իշխանություններն անօրինական լինեն: Իսկ կառույցի գործունեությունը կանոնավորող անդամների համար, իբր, կատարման համար պարտադիր պայման սահմանող ամրագրված սկզբունքները քաղաքականության մեջ, նաև եվրախորհրդում, գործում են ոչ որպես ամենակարևոր ու հիմնական սկզբունքային չափանիշ ու պարտադիր պայման: Ինչևէ ցանկացած իրավաքաղաքական, քաղաքատնտեսական կառույցում առաջնորդվում են առաջին հերթին սեփական, կառույցի ղեկավարների շահերից, իրավաքաղաքական ու քաղաքատնտեսական կոնյունկտուրայի պահանջներից ելնելով, ապա նոր կառույցի ամրագրած սկզբունքների պահանջներին համապատասխան:

Ընտրակեղծիքների մեխանիզմներն ու դրանց կիրառման փաստերը, դրանց նկատմամբ միջազգային կառույցների երբեմն ոչ օրյեկտիվ վերաբերմունքները հատկանշական են գրեթե բոլոր ընտրակեղծիքներով իշխանություն կազմավորող երկրների համար, անկախ այդ երկրների քաղաքական ուղղվածությունից դեպի այս կամ այն պետությունները կամ դրանց միավորումները, որոնք լուրջ ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Իսկ ընտրակեղծիքների վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականների հնարավորությունները, կարծես թե ձեռնառու են աշխարհաքաղաքական զարգացումների վրա ազդեցություն ունեցող միջազգային կառույցների համար:

Վերջի վերջո արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդիրը՝ դա ընտրություններ անցկացնող երկրի ժողովրդի, իշխանությունների խնդիրն է, ու այլոք կարող են ընդամենը քննադատել, ինչ որ հայտարարություններ անել կամ տվյալ երկրի հետ փոխհարաբերությունները կառուցել այլ կերպ, բայց ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ընդունում են անարդար կազմավորված իշխանություններին ու համագործակցում նրանց հետ, եթե իրենց ձեռք է տալիս:

Գլուխ 4

ՀԱՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Նախ ներկայացնենք ընտրակեղծիքների մեխանիկան, օրենսդրական նորմերից շեղումները՝ հաշվի առնելով նաև օրենսդրությամբ սահմանված ոչ նորմալ պայմաններն ու նորմերը, այդ թվում նաև մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հնարավորություններն ապահովող մեխանիզմների բացակայությունը, որն էական նշանակություն ունի ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրների համար և հիմնականում նպաստում է ընտրակեղծիքներով իշխանությունների կազմավորմանը:

Բաժանենք ընտրությունները տարբեր փուլերի.

- 1. Մինչ քվեարկությունների ժամանակահատված,**
- 2. Քվեարկության ընթացք,**
- 3. Արդյունքների ամփոփման ընթացք,**
- 4. Արդյունքների հաստատման գործառույթներ,**

Դիտարկենք ընտրությունների նախապատրաստման և անցկացման տարբեր փուլերում անարդար երևույթները:

1. Մինչ ընտրությունների քվեարկությունն անարդար գործառույթները

Հնտրական գործառույթներում վարչական լծակների օգտագործումը: Իշխանության ներկայացուցիչների պաշտոնական դիրքի չարաշահումները հօգուտ իշխող կուսակցությունների ներկայացուցիչների:

Ոչ իշխանական թևի կուսակցությունների ներկայացուցիչների համար խոչընդոտների ստեղծումը:

Տեղեկատվական արգելքները:

Միակողմանի տեղեկատվությունը:

Կեղծ վարկաբեկիչ տեղեկատվության տարածումը:

Հնտրական հանձնաժողովների հիմնականում իշխող կուսակցության օգտին գործող անձանց մեծամասնությամբ կազմավորելու գործառույթը:

Հնտրողներին խաբելու, մոլորեցնելու, վախեցնելու, այս կամ այն կուսակցությանը, (հիմնականում իշխող կուսակցությանն) անդամագրվելու պարտադրման գործունեությունը:

Թեկնածուների առաջադրման, գրանցման ժամանակ թեկնածուին չգրանցելու կամ նրա թեկնածությունը չառաջադրելու,

թեկնածությունն հանելու կամ առաջադրվելու և մեկ այլ թեկնածուի, կուսակցության, օգտին գործելու և նախատեսվող ընտրակեղծիքները պաշտպանելու պարտադրանքի գործառույթները:

Նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների համար անհավասար պայմանների, հնարավորությունների ապահովման գործառույթները:

Հնտրողների հետ հանդիպումներ կազմակերպելիս, թեկնածուներից ոմանց համար, ստեղծվող արհեստական խոչընդոտները:

Հնտրական ցուցակների ոչ ճիշտ ու պատշաճ կազմելը, ավելորդ մարդկանց ընտրացուցակներում ընդգրկելը՝ հետագայում դրանց փոխարեն այլոց միջոցով քվեարկություն իրականացնելու նպատակով:

Մինչ քվեարկությունները ընկած ժամանակահատվածում անարդար գործառույթների կիրառումը որոշակի տարբերություններով ու չափերով հատկանշական են համարյա թե բոլոր երկրներին, բացառությամբ որոշ քաղաքակիրթ երկրների, որոնցում թերևս դրանք գրեթե չեն կիրառվում:

2. Հնտրակեղծիքները քվեարկության ընթացքում

Առավել էական անարդար գործառույթներն են քվեարկությունների ու քվեարկության արդյունքների կեղծելն ու այդ արդյունքները հաստատելը:

2.1 Լցում

Հնարավոր է, որ տեղամասի քվեատուփում մինչ քվեարկության սկսվելը լինեն քվեաթերթիկներով քվեարկության ծրարներ, ինչը բացահայտ կեղծիք է և վերահսկողություն իրականացնողները կնկատեն, ուստի այն հնարավոր է կիրառել այն տեղամասերում, որտեղ հանձնաժողովականները և վերահսկողություն իրականացնողները համաձայնության են եկել տվյալ հարցում:

Քվեարկության ընթացքում՝ հնարավոր է, որ որևէ մեկը քիչ-քիչ գցի քվեաթերթիկներով քվեարկության ծրարներ տեղամասի քվեատուփի մեջ, այդ դեպքում հանձնաժողովի նախագահը, մյուս անդամները հատկապես ընտրացուցակների համար պատասխանատու անդամը պետք է ապահովի համապատասխան թվով կեղծ ստորագրություններ ընտրացուցակում, այլապես ընտրական թվերն իրար չեն համապատասխանի:

Մասնակցության և քվեատուփում առկա քվեաթերթիկների համապատասխանությունն ապահովելու համար հնարավոր է, որ

ընտրացուցակները մասնակցության ստորագրություններով նախապես պատրաստվեն՝ օգտվելով նախորդ ընտրությունների ստորագրություններով ընտրացուցակներից և դրանցով քվեարկությունից հետո ընտրացուցակները փոխարինվեն:

Յուրաքանչյուր ընտրատեղամաս ունի թողունակության որոշակի սահման, այսինքն՝ յուրաքանչյուր տեղամաս կախված տեղամասում առկա ընտրողների ստորագրացուցակների, քվեախցիկների թվից մեկ ժամում կարող է սպասարկել որոշակի թվով ընտրողների միայն, որից ավել ընտրողների սպասարկելը ֆիզիկապես հնարավոր չէ: Ուստի, եթե որևէ տեղամասում, որևէ ժամի արձանագրվում է նրա թողունակությունից ավել ընտրողների մասնակցություն, ապա տվյալ տեղամասում իրականացվել է բացահայտ լցում և ստորագրություններ են կեղծվել:

Եթե քվեատուփ է լցնվել տվյալ տեղամասի կնիքով կնքված ծրարներ և քվեաթերթիկներ, բայց փաստը չի արձանագրվել, իսկ ընտրացուցակում կեղծ ստորագրություններ չեն դրվել, ապա քվեատուփում առկա ծրարների թիվն ավելին կլինի ընտրողների ստորագրությունների թվից, որը նշանակում է, որ ծրարի վրա կնիք դնող հանձնաժողովի անդամը կամ քվեատուփին հետևող անդամը թույլ է տվել կամ մասնակցել է լցումանը:

Եթե քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվն ավելին է ծրարների թվից, ապա պարզ է, որ քվեատուփ է լցնվել քվեաթերթիկներ, ինչն առանց հանձնաժողովի անդամների հնարավոր չէ, եթե փաստը չի արձանագրվել:

Լցումում կարող է իրականացվել նաև տեղամասում խառնաշփոթ ստեղծելու պահին, իսկ խառնաշփոթն աննկատ չի լինում: Ուստի, եթե տեղամասում եղել է խառնաշփոթ, իսկ ընտրաթվերն արդյունքների ամփոփման ժամանակ չեն համընկնում, ապա պարզ է, որ տվյալ տեղամասում արդյունքները կեղծվել են և դժվար թե արդյունքների իրական ստույգ պատկերը պարզ լինի, եթե դրանք մանրազնին ստուգման չենթարկվեն: 2009թ. Երևանի ավագանու ընտրությունների տեղամասերից մեկում խառնաշփոթի ժամանակ քվեատուփի մեջ են գցվել պատճենահանված քվեաթերթիկներով այդ տեղամասի ծրարներ, ինչն էլ հիմք է հանդիսացել ընտրական հանձնաժողովի անդամի և այդ գործառույթն իրականացնող մեկ այլ քաղաքացու դատապարտման:

Հայաստանի նախորդ բոլոր ընտրություններում բազմաթիվ տեղամասերում արձանագրվել են ընտրողների ընտրացուցակներ-

րում ստորագրությունների թվի պակաս քվեատուփում առկա ծրարների և դրանցում եղած քվեաթերթիկների թվից, այսինքն՝ լցուման փաստեր:

Մակայն այդ տեղամասերի մեծամասնության քվեարկության արդյունքները չեն ստուգվել և հետևություններ չեն արվել: Տեղամասում յուրաքանչյուր ընտրողի տրվում է մեկ քվեաթերթիկ, որը դրվում է ծրարի մեջ և գցվում քվեատուփ: Եթե քվեատուփում քվեաթերթիկներն ավելին են քան ծրարները, ապա նշանակում է, որ լրացուցիչ քվեաթերթիկ է գցվել քվեատուփի մեջ, այսինքն՝ միայն քվեաթերթիկի լցումում է եղել: Նշված անհամապատասխանությամբ տեղամասերի քանակները քիչ չեն եղել Հայաստանի ընտրություններում:

Հայաստանի ընտրություններում քիչ չեն եղել խառնաշփոթի մեջ հայտնված տեղամասերի թվերը, վստահված անձանց, նույնիսկ հանձնաժողովի անդամների նկատմամբ բռնությունների կիրառման և տեղամասերից հեռացնելու դեպքերը: Բազմաթիվ են դեպքերը, երբ ընտրացուցակում արդեն իսկ եղել է նախապես դրված ստորագրություն նոր տեղամաս մտած ընտրողի անվան դիմաց կամ երկրից բացակայող և քվեարկությանը մասնակցելու ֆիզիկապես հնարավորություն չունեցող ընտրողի անվան դիմաց:

2.2 Այլոց փոխարեն քվեարկություններ

Իշխանության կողմնակից անձանց, տարբեր տեղամասերի, հատկապես քաղաքների ընտրացուցակներում ընդգրկելով, և նրանց տարբեր տեղամասերում իշխանության օգտին քվեարկելը կազմակերպելու դեպքում հնարավոր է դառնում առանց բացահայտ կեղծիքների ապահովել անհրաժեշտ կեղծ քվեներ: Եթե յուրաքանչյուր տեղամասի ընտրացուցակում վերը նշված անձանց մի քանի տասնյակ ավելացվի, ապա ողջ հանրապետությունում ընտրողների թիվը կավելանա մի քանի տասնյակ կամ հարյուր հազարներով: Իսկ եթե իշխանությունների համար ոչ բարենպաստ տեղամասերում, ոչ կողմնակից ընտրողներին հանեն ընտրացուցակներից և ստիպեն, որ իրենց քվեարկելու իրավունքն այդ ընտրողները դժվարությամբ իրականացնեն, ապա կպակասի ընդդիմության քվեները: Իհարկե, հնարավոր է ընտրացուցակներն ստուգել, բայց եթե բոլոր տեղամասերի ընտրացուցակային տվյալները քվեարկությունից առաջ և հետո ամբողջական հասու լինեն դրանց ճշգրտությունը ստուգել ցանկացողներին:

Նշվածի բացահայտ օրինակ է 2003 թվականի Հայաստանի

նախագահի ընտրությունները. Ըստ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի <<elections.Am>> կայքի տվյալների, ընտրությունների երկու փուլերի միջև ընկած կարճ ժամանակահատվածում ընտրողների թվերն, ըստ տեղամասերի, լուրջ փոփոխությունների են ենթարկվել: Ընտրողների թիվն առաջին փուլում եղել է 2317447, մասնակցությունը՝ 1463635, ընտրողների թիվը երկրորդ փուլում եղել է 2333342, մասնակցությունը՝ 1595702: Ընտրողների թիվը երկրորդ փուլում ավելացվել է 15895-ով, ընդ որում ընտրողների թվերը փոխվել են 1866 տեղամասերից 1722-ում, տեղամասերից 606-ում ընտրողների թիվը պակասել է 212335-ով, 1116 տեղամասերում ընտրողների թիվը ավելացել է 228230-ով: Նշված փաստը հիմք է տալիս եզրակացնելու, որ կազմակերպվել է այլոց փոխարեն կազմակերպված քվեարկություններ:

Եթե ընտրողների ցուցակներում առկա են տվյալ տեղամասում չբնակվող կամ հաշվառված, բայց տարածքից բացակայող անձանց տվյալներ, ապա այն կարող է կիրառվել վերջիններիս փոխարեն քվեարկություն կազմակերպելու միջոցառման համար: Սա էլ կիրառվել է գրեթե բոլոր նախորդ ընտրություններում: Առավել ևս՝ եթե օրենքով ամրագրված ընտրողների ցուցակում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների ստուգման հնարավորություն ապահովող նորմ չկա կամ ստորագրացուցակներն ինչ-որ պատճառաբանությամբ հրապարակման ենթակա չեն, և դա չեն ցանկանում իշխանությունները, ապա կեղծ ստորագրությունների ստուգման հնարավորությունը դառնում է անհնար: Այսինքն՝ ընտրակեղծիքների, կեղծ ստորագրությունների բացահայտման հնարավորություն չկա: Իսկ նախորդ ընտրություններում ընտրատեղամասերում առկա ընտրողների թվից ավելի մասնակցություն արձանագրվել են բազմաթիվ տեղամասերում: Ավելին, եղել են տեղամասեր, որտեղ արձանագրվել են ընտրատեղամասում հաշվառված ընտրողների թվից ավել քվեարկողներ, այսինքն՝ 100%-ից ավել մասնակցություն: Քվեարկության օրը մարդկանց խմբերով ավտոբուսներով տեղամասից տեղամաս տեղափոխելու փաստերը խոսում են այլոց փոխարեն քվեարկություններ կազմակերպելու հնարավորությունների կիրառման մասին:

2.3 Պարտադրանքով և ընտրողի քվեարկությունը վերահսկելով քվեարկության կազմակերպում

Կարող են ընտրողներին պարտադրել քվեարկել որևէ թեկնածուի օգտին՝ առանց քվեն անմիջականորեն վերահսկելու,

ընտրողին պատժով վախեցնելով, եթե չստացվի պարտադրողի ցանկալի արդյունքը:

Ընտրողին պարտադրում են քվեարկել վերահսկողի ներկայությամբ կամ քվեարկված քվեաթերթիկը վերահսկողին ցույց տալուց հետո նոր դնել ծրարի մեջ, այսինքն՝ վերահսկողի համար բաց քվեարկության կազմակերպում, որը թերևս օրենսդրորեն արգելվում է, բայց նախորդ ընտրություններում լայն կիրառում է ունեցել:

Եթե քվեատուփի ծրարների թիվը պակաս է, քան քվեաթերթիկներն են, ապա նշանակում է որ ընտրողը քվեաթերթիկը դուրս է տարել, ուստի հնարավոր է, որ գործել է կարուսելի մեխանիզմը: Քվեարկված քվեաթերթիկները դրսում տրվում է ընտրողներին, ընտրողը ստանալով տեղամասում երկրորդ քվեաթերթիկը, առանց նշումների այն կարող է դուրս բերել տեղամասից, որպես ապացույց, որ ինքը քվեարկել է տեղամասից դուրս իրեն տրված քվեաթերթիկով, իսկ մաքուր քվեաթերթիկը վերադարձնել այդ ընտրողի քվեարկությունը վերահսկողին: Վերահսկողը դրսում քվեարկում է մաքուր քվեաթերթիկում և այն տալիս տեղամաս մտնող հաջորդ վերահսկվող ընտրողին: Այսպես կոչված՝ կարուսելի մեխանիզմը դժվար է բացահայտել, քանի որ այն ընտրողի և նրա քվեարկությունը վերահսկողի միջև իրականացվող գործարք է: Սակայն քվեատուփում առկա քվեաթերթիկի ավել ծրարը կողմնակիորեն նշում է նման մեխանիզմի կիրառման հնարավորությունը տվյալ տեղամասում:

Նշված մեխանիզմի կիրառման մասին խոսում են նախորդ ընտրություններում բազմաթիվ տեղամասերի քվեատուփերում առկա քվեաթերթիկների և ծրարների թվերի արձանագրված անհամապատասխանությունները, խմբերով ընտրողներին ավտոբուսներով տեղամաս բերելու փաստերը:

3. Արդյունքների ամփոփման ընթացքը:

3.1 Քվեների ոչ ճիշտ հաշվարկի իրականացում:

Արդյունքների ամփոփումը տեղամասային հանձնաժողովներում հաճախ տեղի է ունենում քվեների ոչ ճիշտ հաշվարկի իրականացմամբ:

Մեկի քվեները հաշվարկվում է մյուսի օգտին:

Ավելացվում կամ պակասեցվում է որևէ մեկի քվեների թիվը:

Փոխվում են քվեաթերթիկները, նույնիսկ ընտրողների ստորա-

գրացուցակները:

Կազմվում են քվեարկության իրական արդյունքներին չհամապատասխանող արձանագրություններ:

Օրինակ՝ այս ամենը Հայաստանի ընտրություններում իրականացվել է ընտրական հանձնաժողովների մասնակցությամբ, նույնիսկ հանձնաժողովի այն անդամներն, ովքեր դեմ են եղել արձանագրությանը, բայց ճնշումների ազդեցությամբ ստորագրել են այն:

3.2 Արդյունքների ամփոփում վերադաս հանձնաժողովներում

Հնարավոր են դեպքեր, երբ փոխվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրային թվերը վերադաս հանձնաժողովներում:

Եղել են դեպքեր, երբ վերադաս հանձնաժողովում կեղծվել են, փոխվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրությունները և տեղամասային հանձնաժողովի կնիքով կնքվել:

3.3 Վերջնական արդյունքների ամփոփում

Արդյունքներն ամբողջական ամփոփող հանձնաժողովը, հաճախ քննելով բողոքները՝ դրանք համարել է անհիմն:

Ընտրական թվերի անհամապատասխանությունները տեղամասերում հաշվվել են, որպես տեխնիկական բնույթի սխալ և հաշվի չեն առնվել:

Հրապարակվել է այսպես կոչված խմբագրված թվեր:

Որոշ տեղամասերում արձանագրվել են 100%-ից ավել մասնակցություն, որն անհնար է ֆիզիկապես, սակայն իբր գտնվել է բացատրություն, թե տեղամասի ընտրողների թիվը քվեարկության օրն ավելացել է: Հետաքրքիրն այն է, որ նման բացատրությունն ընդունվել է, նույնիսկ միջազգային դիտորդների կողմից, չնայած օրենսդրությունը սահմանում է, որ ընտրողների թիվը հրապարակվում է ըստ տեղամասերի՝ մինչ քվեարկությունը:

4. Արդյունքների հաստատման գործառնությունները

4.1 Քվեարկության արդյունքների հաստատումը տեղամասերում

Արձանագրությունների կազմումը տեղամասային հանձնաժողովներում տեղի է ունենում բացահայտ կեղծիքով: Կազմվում են քվեարկության իրական արդյունքներին չհամապատասխանող արձանագրություններ և դրանք հաստատվում հանձնաժողովների մեծամասնության կողմից: Իսկ հանձնաժողովները կազմվում են

այնպես, որ մեծամասնությունը կողմնակալ լինի:

4.2 Քվեարկության արդյունքների հաստատումը վերադաս հանձնաժողովներում

Վերադաս հանձնաժողովներում փոխվում են տեղամասային հանձնաժողովի արձանագրությունները կամ կազմվում են արձանագրություններ նախապես որոշված թվերով:

4.3 Արդյունքների ամբողջական ամփոփումը

Եթե հանձնաժողովի մեծամասնությանը, այսինքն՝ իշխանությանը ձեռնտու է կեղծված արդյունքները, ապա ամփոփիչ արձանագրության կազմման ու կեղծված արդյունքների հաստատման գործառնությունները կենտրոնական մարմնում, որն է ինդիք չի հարուցում: Եթե հանձնարարված է աղմկահարույց ընտրակեղծիքը հաշվի առնել, ապա այն հաշվի կառնվի, բայց այնպես, որ իբր ընտրված անձինք չփոխվեն:

4.4 Բողոքարկման և ստուգման մեխանիզմները

Եթե պետք է, որ բողոքները չգրանցվեն, ապա չեն գրանցվի, իսկ եթե պետք է հաշվի չառնվեն, ապա դրանք հաշվի չեն առնվի կամ կքննարկվեն և կտրվի պատասխան, որ այն անհիմն է կամ բողոքում նշված փաստերը չեն ազդում ընտրության արդյունքների վրա: Եթե պետք է որևէ տեղամասում ստուգվեն քվեարկության փաստաթղթերն, ապա կստուգվեն, բայց այնպես, որ չազդեն ընտրության արդյունքների վրա:

4.5 Արդյունքների վերջնական հաստատումը

Ընտրության արդյունքները վերջնականապես հաստատվում են դատական կարգով, եթե բողոք է ներկայացված և այն գրանցված է:

Ընտրությունների օբյեկտիվ գնահատման օրենսդրական մեխանիզմների բացակայությունը հնարավորություն է ընձեռում դատարաններին հաստատել ընտրակեղծիքներով ընտրությունների արդյունքները:

Հայաստանում չի եղել նախադեպ, երբ նույնիսկ միջազգային դիտորդների գնահատմամբ, կեղծված նախագահական կամ Ազգային ժողովի համամասնական ընտրությունները Սահմանադրական դատարանը անվավեր ճանաչի: Մինչդեռ 2003 թվականի ընտրությունների արդյունքները հաստատելով կայացրել է որոշում, ըստ որի առաջարկել է անցկացնել վստահության հանրաքվե, որն այդպես էլ չի անցկացվել: ^{16.6}

Պետք է նշել, որ տարբեր երկրներում նաև Հայաստանում, որոշ մարդկանց, այդ թվում իշխանության կողմից հանձնաժողովում նշանակված անդամներին ընտրակեղծիքների համար ցուցադրաբար դատական կարգով պատժի են ենթարկել: Այն էլ, երևի թե խեղճերը համոզված են եղել, որ իրենցից պահանջել են ընտրությունները կեղծել, բայց չեն մտածել, որ դա պետք է աղմկահարույց ձևով չանել: Իսկ հիմնականում պատժվել են ընդդիմության ներկայացուցիչները ընտրական գործընթացում ակտիվ վերահսկողություն իրականացնելու կամ ընտրակեղծիքների դեմ բողոքելու համար: Նույնիսկ որոշ տեղամասերում քվեարկության արդյունքները ճանաչվել են անվավեր²¹, բայց արդյունքում արդար ընտրություններով առանց ընտրակեղծիքների իշխանությունների կազմավորման խնդիրը չի լուծվել: Նրանք, ումից կախված է խնդրի լուծումը, խնդիր չեն էլ դնում արդար ընտրությունների հարցը լուծելու համար՝ մեղադրելով ժողովրդին ոչ քաղաքակիրթ լինելու մեջ: Մինչդեռ ցանկացած ժողովրդի մեծամասնությունն արդար քվեարկությունների անցկացման և ձայների (քվեների) ճշգրիտ, առանց կեղծելու, հաշվելու ու դրա հիման վրա իշխանությունների կազմավորման կողմնակից է: Չկա որևէ ազգ, որը կգերադասի ընտրակեղծիքներով բռնությամբ ու խաբեությամբ իշխանություն ստանձնած մարդկանց լուծն արդար ընտրություններով կազմավորված իշխանությունից: Բայց և քիչ են մարդիկ՝ այդ թվում քաղաքական գործիչներ, ովքեր ժողովրդավարության, հատկապես, արդար ընտրությունների համար պատրաստ են անձնագոհության:

Գլուխ 5

ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտրակեղծիքներով ընտրությունների անցկացման հնարավորությունը կնվազի.

- եթե բացառապես ապահովված լինի քվեարկության գաղտնիությունը, մասնակցության, քվեների ճշգրիտ հաշվարկը, նաև ավտոմատացմամբ,
- եթե ապահովվի յուրաքանչյուր տեղամասից քվեարկության ընթացքի ու արդյունքների ամփոփման վերաբերյալ յուրաքանչյուր ընտրողի ուղղակի և անմիջական տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև ընտրությունների վերաբերյալ բազմակողմ վերլուծություններին ծանոթանալու հնարավորությունը,
- եթե բացահայտվի ցանկացած ընտրակեղծիք, թեկուզ և մեկ ձայն կեղծելու փաստը հրապարակվի ու անհետևանք չմնա:
- եթե միջազգային քաղաքակիրթ հանրությունը, այդ թվում նաև ժողովրդավարական երկրների իշխանություններն, առաջնորդվելով ոչ թե քաղաքական շահերով, այլ բարոյական նորմերով ու արդարության պահանջներից ելնելով՝ հրաժարվեն համագործակցել կեղծ ընտրություններով ընտրված իշխանությունների հետ:

Եթե ընտրողը համոզված լինի, որ ոչ ոք չի իմանա, թե ինքն ինչպես է քվեարկել, ապա չի վախենա պատժվելուց և պարտադրանքով չի քվեարկի:

Եթե ընտրակեղծիքների կազմակերպիչներն ու իրականացնողները համոզված լինեն, որ անիմաստ է ու հնարավոր չէ իրենց ուզած արդյունքին հասնել ընտրակեղծիքներով, ապա կմտածեն ընտրողներին քաղաքակիրթ ձևով համոզելու մասին, այլ ոչ թե վախեցնելու, կաշառելու և ընտրությունները կեղծելու ուղղությամբ:

Հնարավոր է արդյոք, իրավիճակն ամբողջությամբ հաշվի առնելով, արդար ընտրություններով իշխանության կազմավորման հարցը լուծել, եթե այդ, ապա ինչպես:

ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացնենք մի հանգամանք, որի դերը ընտրակեղծիքների բացահայտման ու գնահատման համար չափազանց կարևոր է:

Ցանկացած ընտրական համակարգում պարտադիր առկա են ընտրական թվերը:

Ընտրական թվերն են՝ ընտրողների քանակը տեղամասում, տեղամասին հատկացված ծրարների, քվեաթերթիկների, տեղամասում օգտագործված և չօգտագործված (մարված) քվեաթերթիկների, քվեարկությանը մասնակիցների, նրանց հատկացված ծրարների, քվեաթերթիկների, ընտրացուցակում ստորագրությունների, քվեատուփում եղած ծրարների, քվեաթերթիկների, թեկնածուների օգտին տրված քվեների, անվավեր, վավեր քվեաթերթիկների թվերը և այլն:

Ընտրական թվերը բազմաթիվ են և բոլոր թվերը պարտադիր պետք է որոշակի համապատասխանության մեջ գտնվեն իրար հետ:

Օրինակ՝ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը պետք է հավասար լինի ընտրաստորագրացուցակներում ընտրողների ստորագրությունների թվին և չպետք է ավելին լինի քան ընտրական տեղամասի ընտրողների ընդհանուր թիվն է կամ այն պետք է հավասար լինի քվեատուփում առկա քվեաթերթիկների թվին, կամ առնվազն չպետք է ավելին լինի այդ թվից և այլն:

Ընտրակեղծիքներին բնորոշ են, ըստ տեղամասերի, ընտրական թվերի անհամապատասխանությունները ընտրությունների հրապարակված արդյունքներում: Ուստի ընտրական թվերի անհամապատասխանությունների վերլուծությունները կարող են նույնպես բացահայտել, թե որևէ երկրում, որքանով են ընտրություններն արդար, ավելին, եթե դրանք համադրվում են, ընտրական գործընթացների հետ կապված, այլ երևույթների հետ: Ընտրակեղծիքների բացահայտման համար ընտրական թվերի բազմակողմ վերլուծությունը կարևոր նշանակություն ունի այն պարզ պատճառով, որ եթե քվեարկությունները և արդյունքների ամփոփումները կազմակերպվեն օրենսդրության պահանջներին խստագույնս հետևելով, ապա ընտրական թվերի անհամապատասխանություններ չպետք է լինեն:

Ընտրական թվեր ասելով նկատի ունենք ընտրությունների հետ կապված բոլոր այն թվերը, որոնք առկա են քվեարկությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ժամանակ: Ակնհայտ է, որ ընտրական թվերի անհամապատասխանությունները տեղամասում վկայում են, որ տեղամասի գործառույթները տեղի են ունեցել օրենքի պահանջներից որոշակի շեղումներով, այլապես, եթե ընտրողը չի իրականացնում օրենքով նախատեսված, ընտրական հանձնաժողովի համար տեսանելի

գործառույթ, որը կհանգեցնեք ընտրական թվերի անհամապատասխանության, ապա հանձնաժողովն այդ պահին պետք է կազմեր արձանագրություն: Իսկ եթե հանձնաժողովն արձանագրություն չի կազմել, և առկա են ընտրական թվերի այնպիսի անհամապատասխանություններ, որոնք չպետք է լինեին, եթե հանձնաժողովը խստագույնս գործեր օրենսդրության պահանջներին համապատասխան, օրինակ, եթե ընտրողն ընտրացուցակում ստորագրում է, բայց չի քվեարկում, որն հանգեցնում է այն բանի, որ քվեատուփի ծրարների թիվը պակաս է լինում ընտրացուցակում ստորագրությունների թվից կամ ավելի վատ, եթե որևէ մեկը քվեատուփի մեջ է գցում տեղամասի կնիքով կնքված մեկից ավելի ծրարներ, ապա ընտրական օրենսդրությունից շեղումներով քվեարկությունները կամ ընտրակեղծիքները տեղի են ունեցել հանձնաժողովի անդամների թողտվությամբ կամ անմիջական մասնակցությամբ:

Հաճախ ընտրակեղծիքների փաստը հավաստող ընտրական թվերի անհամապատասխանությունները դիտարկվում են, որպես տեխնիկական բնույթի թերացումներ և ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն չունեցող փաստեր, առանց հաշվի առնելու, որ տեղամասում, որտեղ կան ընտրական թվերի անհամապատասխանություններ, քվեարկություններն ու դրանց արդյունքները կեղծված են: Ուստի այդ տեղամասերի արդյունքներն ամբողջությամբ էական նշանակություն ունեն ընտրությունների իրական արդյունքների գնահատման համար, առավել ևս, երբ ազդում են մանդատների բաշխման հարաբերակցության վրա:

Կախված ընտրական համակարգերից ու ընտրական օրենսդրությամբ սահմանված արդյունքների ամփոփման համար անհրաժեշտ քանակական գնահատման նորմերից, կարելի է հաշվարկել այն նվազագույն թվաբանական սխալը, որը կարող է փոխել մանդատների բաշխման հարաբերակցությունը: Իսկ ընտրական թվերի անհամապատասխանությունների հանրագումարի ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա պարզել՝ համեմատելով բոլոր տեղամասերի սխալների հանրագումարը, մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող նվազագույն թվի (թվաբանական սխալի) հետ:

Եթե ընտրական թվերի անհամապատասխանությունների հանրագումարը մեծ է մանդատների բաշխման հարաբերակ-

ցությունը փոխող նվազագույն թվից, ապա քվեարկության իրական արդյունքներով մանդատը վիճարկող թեկնածուներից որևէ մեկին մանդատի տրամադրումը պարզապես սուբյեկտիվ մոտեցման արդյունք է, որովհետև պարզ չէ, թե իրականում ինչպիսին է ընտրողների քվեարկության արդյունքները ընտրական թվերի անհամապատասխանություններ պարունակող տեղամասերում: Իսկ եթե այդ տեղամասերում քվեարկությունները ճանաչվեն անվավեր և անցկացվեն կրկնական, արդար քվեարկություններ, ապա ոչ ոք չի կարող ասել, թե ինչ արդյունք կստացվի:

Մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող նվազագույն թվի մեծությունը կախված է ընտրական համակարգերում սահմանված թվերից, ընտրատարածքին հասանելիք մանդատների քանակից, ընտրվելու, մանդատ ստանալու համար սահմանված անհրաժեշտ ձայների քանակից կամ թվային, տոկոսային պայմաններից, ընտրողների՝ քվեարկությանը մասնակցության չափերից, քվեարկության արդյունքում ձայների բաշխման հարաբերակցությունից, և մի շարք ընտրական թվերից:

Ցանկացած դեպքում, ունենալով ընտրական համակարգի ու ընտրական թվերի վերաբերյալ տվյալները՝ կարելի է հաշվել ու գտնել այն ամենափոքր թիվը, որը կարող է փոխել մանդատների բաշխման հարաբերակցությունը:

Հնարավոր է, որ նույնիսկ մեկ ձայնը կարող է փոխել մանդատների բաշխման հարաբերակցությունը, այսինքն՝ մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող նվազագույն թվի մեծությունը կարող է հավասար լինել 1-ի:

Օրինակ՝ միամանդատ հարաբերական մեծամասնական ընտրական համակարգում սահմանված քվորումով և քվոտայով ընտրություններում, կարող է մեկ ձայնը չբավարարել քվորումն անցնելուն կամ ընտրվելու համար ձայների նվազագույն շեմը՝ քվոտան, հաղթահարելուն կամ բացարձակ մեծամասնական ընտրակարգով ընտրություններում մեկ ձայն պակասեցնելն ամենաշատ ձայներ ստացած թեկնածուից, կարող է նրա չընտրվելու հիմք հանդիսանալ կամ համամասնական ընտրություններում մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող նվազագույն թվի մեծությանը հավասար թվով ձայները որևէ ցուցակի օգտին չհաշվելու և դրանք այլ ցուցակի օգտին հաշվելու դեպքում կարող է տարբեր ցուցակներին հասանելիք մանդատների թիվը փոխվել:

Ընտրական թվերի համադրություններն ու համեմատությունները կարող են բացահայտել, թե որքանով են ընտրական գործընթացները, հատկապես քվեարկություններն ու արդյունքների ամփոփման գործառնությունները, կազմակերպվել օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ընտրական թվերի՝ իրար հետ պարզ համադրություններն ու համեմատությունները կարող են բացահայտել ընտրակեղծիքները:

Այսպիսով, եթե տեղամասում առկա են շեղումներ ընտրական թվերի իրար հետ պարտադիր համապատասխանություններից, ապա պարզ է, որ տեղամասում տեղի են ունեցել անարդար երևույթներ: Իսկ կախված այն բանից, թե ինչպիսի անհամապատասխանություններ կան տեղամասի ընտրական թվերի միջև, կարելի է բացահայտել համապատասխան տեղամասում ընտրակեղծիքների փաստերը:

«ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԲՑԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՃՇԳՐԻՑ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ» *հավելվածում՝* <<ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԸ>>, <<ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՀԱՍՏԱՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ>>, <<ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՃՇԳՐԻՑ ՀԱՇՎԱՐԿԸ>> *բաժիններում տարբեր ընտրական համակարգերի համար ներկայացվում է ընտրակեղծիքների բացահայտման տրամաբանությունն ու մաթեմատիկական հաշվարկները, ընտրությունների արդյունքների վրա սխալների ազդեցության չափի որոշելու բանձները՝ ընտրական թվերի իրար հետ համեմատելու և ճշգրիտ գնահատման մեթոդի միջոցով:*

«ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԲՑԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՃՇԳՐԻՑ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ» *հավելվածում ներկայացվում են նաև քվեարկությունների և քվեարկության արդյունքների ամփոփման, դրանց վերաբերյալ որոշում կայացնելու, արդարության չափը մաթեմատիկորեն ճշգրիտ գնահատելու մեխանիզմները, քվեարկության արդյունքների հաշվարկների, ինչպես նաև քվեարկության արդյունքների օբյեկտիվ գնահատման ճշգրիտ հաշվարկների մեթոդոլոգիան ու համապատասխան բանաձևերը, տարբեր ընտրական համակարգերի համար:*

ԸՆՏՐԱԿԵՂՈՒԹՅՈՒՆԻ ԴԵՄ ՈւՂՂՎԱԾ ՕՐԵՆՄԱՂԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Նախ նշենք, որ որքան էլ ընտրական օրենսդրությունը կատարյալ լինի հասարակության մեծամասնության վախի, անտարբերության ու հիասթափության, պետական մեքենայի, հատկապես ուժային կառույցների՝ հասարակության դեմ ուղղված գործողությունների արդյունքում, ընտրակեղծիքներով, զենքով, գոռով իշխանություն վերցնողն, այն կվերցնի:

Եթե ընտրակեղծիքներով իշխանություն կազմավորող երկրի օրենսդրությամբ սահմանված նորմերն այնպիսին են, որ օբյեկտիվորեն չեն կանխարգելում ընտրակեղծիքների հնարավորությունը, որոշ դեպքերում նպաստում են դժվար ապացուցվող, բայց պրակտիկայում կիրառվող ընտրակեղծիքներին և թույլ են տալիս ընտրակեղծիքներով ընտրությունների արդյունքները հաստատել, ապա նախ կարիք է առաջանում պարզել ընտրակեղծիքների ողջ մեխանիկան, հետո դրանց դեմ և ընտրակեղծիքների օբյեկտիվ գնահատման օրենսդրական համապատասխան նորմերի փաթեթ մշակել ու առաջարկել ժողովրդավարական զարգացումների ճանապարհն ընտրած երկրներին դրանք ընդունելու համար:

Իսկ համապատասխան երկրի քաղաքացիների և միջազգային հանրության համար, հատկապես օրենսդրությունից շեղումներով քվեարկության ընթացքն ու արդյունքների ամփոփումն ու ընտրական թվերի անհամապատասխանությունները հասու և վերահսկելի դարձնելու միջոցով կապահովվի տվյալ երկրի ընտրությունների և իշխանությունների վերաբերյալ օբյեկտիվ կարծիքի ձևավորմանն իր հետևանքներով:

Արդեն նշվել էր, որ եթե օրենսդրությունը ընտրակեղծիքների հնարավորությունները չի բացառում ու իր մեջ չի ներառում ընտրակեղծիքների բացահայտման հստակ մեխանիզմների, նորմերի փաթեթ, ապա դժվար թե ընտրակեղծիքներ չլինեն:

Եթե օրենսդրությամբ ընտրական թվերի օբյեկտիվ գնահատման և մանդատների բաշխման ճշգրիտ հաշվարկի նորմեր չեն սահմանվում, այսինքն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման սուբյեկտիվ մոտեցման հնարավորություններ են ընձեռվում, ապա նրանք, ովքեր հնարավորություն են ստանում ընտրակեղծիքներով իշխանության հասնել, դժվար թե չօգտվեն այդ հնարավորությունից: Ուստի օրենսդրությամբ պետք է հնարավորություններ նախատեսել ընտրակեղծիքների դեմն առնելու համար՝

սահմանելով նորմեր, որոնք՝

1. Քվեարկության և արդյունքների ամփոփման սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունները կնվազեցնեն կամ կբացառեն: Քվեների հաշվման գործառնություններն, այնպես կկանոնավորեն, որ դրանք կեղծելու հնարավորությունները կհասցնեն նվազագույնի կամ կբացառեն:
2. Քվեարկության ընթացքի և արդյունքների ամփոփման գործառնությունների վրա հասարակական, ոչ կողմնակալ վերահսկողության հնարավորությունները կմեծացնեն:
3. Քվեարկության ընթացքում ցանկացած տեղամասի քվեարկության մասնակցության վերաբերյալ պարբերաբար, մեծ հաճախականությամբ տրամադրվող տեղեկություններն անմիջապես ստանալու հնարավորություններ կապահովեն բոլոր ցանկացողների համար:
4. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ոչ պատշաճ աշխատանքի արդյունքում ընտրական թվերի անհամապատասխանությունների առկայության դեպքում այդ տեղամասի քվեարկության արդյունքները, ըստ օրենքի անվավեր կճանաչեն:

Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված առանձին տեղամասում վերաքվեարկության հնարավորություն կընձեռեն. եթե հաշվի առնվի տեղամասի ընտրողների թիվը, որը կփոխի մանդատների բաշխման հարաբերակցությունը:

Որպեսզի նշված մոտեցումների օրենսդրական նորմերով ամրագրման հնարավորությունն ապացուցենք, ներկայացնենք նաև օրենսգրքի համակարգված մի քանի դրույթներն ու դրանց վերաբերյալ նկատառումները:

Ընտրական հանձնաժողովներն ու նրանց վերապահվող գործառնությունները:

Ընտրությունների արդյունքները հասարակության համար վստահելի կլինեն.

- եթե ընտրական հանձնաժողովները իշխանություններից անկախ և ընտրության ժամանակ անձեռնմխելի լինեն՝ հատկապես կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- եթե ընտրական հանձնաժողովների կազմերը համալրվեն բոլոր քվեարկվող (մրցակցող) քաղաքական միավորների մեկական ներկայացուցիչներով և տարբեր տեղամասերի, ընտրատարածքների հանձնաժողովի նախագահները հավասար ներկայացման

սկզբունքով լինեն տարբեր մրցակցող կողմերի ներկայացուցիչներ.

- եթե ցանկացողի համար ապահովվի ստորագրացուցակներն ստուգելու ու տեղամասերում քվեարկության ամփոփված արդյունքները տեսնելու տեխնիկական հնարավորություն:

- եթե նախապես սահմանվի նորմ, ըստ որի բոլոր այն առանձին տեղամասերում, որտեղ տեղի են ունենում ընտրական ընթացակարգերից շեղումներ և ընտրական թվերի անհամապատասխանություններ, ընտրություններն ինքնաբերաբար անվավեր համարվեն: Իսկ անվավեր տեղամասերում անցկացվեն կրկնական քվեարկություններ այդ տեղամասերի ընտրական հանձնաժողովի անդամների միջոցներով:

Հաշվի առնելով քվեարկության և քվեների հաշվման ժամանակ կեղծիքները բացառող մեխանիզմների կարևորությունը, նկատի ունենալով, որ քվեարկության և քվեների հաշվման ժամանակ կեղծիքների իրականացումը հնարավոր չէ առանց տեղամասում քվեարկությունը կազմակերպող և քվեարկության արդյունքներն ամփոփող մարմնի, մարմինների (ընտրական հանձնաժողովների) թույլտվության ու անմիջական մասնակցության, չափազանց կարևոր է այդ մարմինների կողմից ընտրակեղծիքների կազմակերպման ու դրանց մասնակցության հնարավորությունները սահմանափակող մեխանիզմների կիրառումը, որի համար կարելի է կիրառել հետևյալ մոտեցումներից որևէ մեկը`

1. տեղամասում քվեարկության կազմակերպման ու քվեարկության արդյունքների ամփոփման ֆունկցիաներ իրականացնող մարմինները պետք է կազմավորվեն այնպես, որ դրանց անդամները լինեն տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ, ունենան հավասար իրավունքներ և փոխադարձ վերահսկողության հնարավորություն:
2. տեղամասում քվեարկության կազմակերպման ու քվեարկության արդյունքների ամփոփման ֆունկցիաները պետք է տարանջատվեն ու վերապահվեն տարբեր մարմինների: Ընդ որում այդ ֆունկցիաներն իրականացնող մարմինները պետք է կազմավորվեն այնպես, որ դրանց անդամները լինեն տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ և ունենան փոխադարձ վերահսկողության հնարավորություն:
3. ավելի ճիշտ կլիներ քվեների հաշվարկը քվեմեքենայով, բոլորի համար տեսանելի պայմաններում, իրականացնելը:

Քվեարկությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ նորմերը

Գաղտնիք չէ, որ ընտրողների ցուցակների ճիշտ կազմելը, ավելորդ ընտրողների ցուցակում ընդգրկելու և այլոց փոխարեն քվեարկություններ թույլ տալու հնարավորությունները բացառելը, չափազանց կարևոր է: Ուստի ցանկացած մարդու համար, ընտրողների ցուցակների ստուգելու հնարավորությունն ապահովելը, ըստ համապատասխան օրենսդրական նորմի, կարող է խոչընդոտ հանդիսանալ ընտրակեղծիքների դեմն առնելու համար և ներշնչել հանդուժալություն, որ իր քվեարկությունն անիմաստ չէ: Այլապես ինչ իմաստ, եթե նախապես պարզ է, որ մարդն ինչպես էլ քվեարկի միևնույն է վերջնական արդյունքները դրանից քիչ են կախված:

Եթե կիրառվի քվեարկողի մատները հատուկ թանաքով, որն ամբողջ օրվա ընթացքում չի մաքրվում, թանաքոտելու մեխանիզմ, ապա կկանխվի կամ կնվազի ընտրողի տարբեր տեղամասերում մի քանի անգամ քվեարկելու կամ այլոց փոխարեն քվեարկելու հնարավորությունը: Ի դեպ շատ երկրներում կիրառվում է նման մեխանիզմ, իսկ այն երկրների իշխանությունները, որոնք ինչ որ պատճառներով հրաժարվում են դրանից, ավելի շատ չեն հրաժարվում այլոց փոխարեն քվեարկություններ կազմակերպելու մտադրությունից:

Եթե սահմանվեն օրենսդրական նորմեր, ըստ որոնց մասնավորապես քվեարկությունները կազմակերպվեն այնպես, որ կարուսելի, իսկ ավելի ճիշտ վերահսկվող քվեարկության հնարավորությունները սահմանափակվեն: Եթե կարուսելի դեպքում քվեաթերթիկների ստուգմամբ, երևույթները հեշտությամբ բացահայտվեն, ապա թերևս նմանատիպ մեխանիզմների գործածության հնարավորությունները կկանխվեն կամ կնվազեն: Որի համար, եթե սահմանվի նորմ, ըստ որի ընտրողի կողմից քվեարկությունը տեղամասի քվեաթերթիկում նշումը կատարվի քվեարկության համար նախատեսված համապատասխան տեղամասի ռեկվիզիտները քվեաթերթիկի վրա դրոշմող, կրկնօրինակը չունեցող, նշիչով, ապա քվեաթերթիկի տվյալ տեղամասի պատկանելիության փաստը կարձանագրի ընտրողը քվեախցիկում քվեարկության պահին և դժվար չի լինի բացահայտել քվեատուփում առկա այլ ռեկվիզիտներով քվեաթերթիկների առկայության փաստը, եթե դրանք լինեն:

Կարուսել մեխանիզմը, այն կազմակերպողների կողմից վերահսկելու հնարավորությունը կանխելու և այդ մեխանիզմի կիրառումն անիմաստացնելու համար ճիշտ կլինի, որ կիրառվի տեղամասում ոչ ֆիքսված թվով քվեաթերթիկների ազատ տրամադրում ընտրողին, այսինքն նաև քվեախցիկում ազատ տեղադրված լինեն քվեաթերթիկները և ընտրողը հնարավորություն ունենա այն այնտեղից վերցնել նույնպես ու

քվեարկելով դնել ծրարի մեջ: Իսկ քվեների հաշվարկի ժամանակ, եթե ծրարում առկա լինի ավել քվեաթերթիկ, ապա ծրարը քվեաթերթիկների հետ անվավեր հաշվելով ձայն չհաշվվի, համարվի անվավեր քվե:

Սահմանվի նորմ, ըստ որի քվեաթերթիկներն ազատ լինեն և լրացուցիչ ազատ քվեաթերթիկների մեծ խմբաքանակ լինի քվեախցիկում այնպես, որ ընտրողը ստանալով տեղամասի ռեկվիզիտներով մեկ ծրար քվեախցիկում առանց որևէ մեկի միջնորդության ընտրի քվեաթերթիկ և դնի ծրարի մեջ ու փակ ծրարով գցի քվեատուփ: Իսկ եթե դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր թեկնածուի (կուսակցության) համար նախատեսվի համապատասխան գույնի կամ տարբերանշանով քվեաթերթիկների փաթեթ, ապա քվեներն հաշվելիս, ծրարից հանվող քվեաթերթիկների գույները տարբերանշանները միանգամից տեսանելի կլինեն ներկաներին և դժվար կլինի դրանք ուրիշի օգտին հաշվելը: Իսկ եթե ծրարում լինի մեկից ավելի տարբեր գույնի քվեաթերթիկներ, ապա այդ քվեարկությունը, ծրարը համարվի անվավեր:

Եթե նախատեսվում է քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացնել քվեարկության արդյունքների ամփոփման կենտրոնում, որը կարող է լինել ընտրատարածքում, մարզկենտրոնում կամ, որն ավելի ճիշտ է, կենտրոնական ընտրական հանձնաժողովում, ապա ընտրություններին մասնակցած ընտրողների ստորագրությամբ ցուցակների, չօգտագործված և մարված քվեաթերթիկների փաթեթավորված ու տեղամասի միայն քվեարկության օրն օգտագործված կնիքով կնքված փաթեթը, ընտրական մյուս փաստաթղթերը, ընտրական տեղամասերից քվեարկության օրը՝ քվեարկությունից առաջ, միանգամյա օգտագործման կնիքով կնքված քվեատուփերի հետ միասին կարող են տեղափոխվել քվեարկության արդյունքների ամփոփման կենտրոն և հեռուստախցիկի առաջ իրականացվեն քվեների հաշվարկը, ընդ որում հաշվարկը կարող է իրականացվել քվեների հաշվման մեքենայի օգնությամբ կամ վիճակահանու-

թյամբ ընտրված հաշվիչների օգնությամբ, բոլոր կողմերի ներկայացուցիչների ներկայությամբ և ստուգման հնարավորությամբ:

Ընտրողների ստորագրությունների իսկությունն ու հաշվարկը, ինչպես նաև քվեարկության արդյունքների հաշվարկը կարող է իրականացվել համակարգիչների միջոցով:

Ընտրությունների տվյալների հրապարակումը

Ըստ ՀՀ Ընտրական օրենսգրքի Հոդված 13.- ի, ՀՀ ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում հաշվառված կամ կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմվող ընտրողների ցուցակների, ազատ է ծանոթության համար: Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում:

Այսինքն՝ ոչ ոք չի կարող ստուգել այլոց փոխարեն ստորագրություն դնելու փաստերը կամ ստորագրությունների թվերի իսկությունը: Ոչինչ, որ օրենսգրքի այս նորմը հակասում է սահմանադրության պահանջներին և խախտում է քաղաքացիների իրավունքը: Արժեք մտածել այն մասին, որ մինչ այս նորմի մտցնելը օրենսգրքում առկա էր ճիշտ հակառակ պահանջն ամրագրող նորմ, այն է՝ ընտրության հաջորդ օրը ընտրողների ստորագրությամբ ցուցակները պատճենահանվում և փակցվում էին ընտրական տեղամասի մուտքի մոտ բոլորի համար տեսանելի տեղում: Նպատակը կարծեմ պարզ էր, ընտրողը կարող էր տեսնել կեղծված ստորագրությունները հետևաբար հանձնաժողովի անդամները զգուշանում էին այլոց փոխարեն քվեարկություն թույլատրելուց: Իսկ եթե նման բան լիներ, բացահայտելն ու ապացուցելը դժվար չեր լինի:

Չնայած վերը նշվածին միևնույնն է ընտրական գործընթացների և մասնավորապես ընտրացուցակների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներ կան: Դրանք կներկայացվեն ստորև:

Ընտրական թվերը, ըստ դրանց հայտնի լինելու ժամանակահատվածների, բաժանվում են մի քանի խմբերի: Ընտրությունների հասարակական վերահսկողության և քվեարկությունից հետո ընտրական թվերի հնարավոր փոփոխությունները հանձնաժողովների կողմից բացառելու համար կարելի է ընտրական թվերի տարբեր խմբերն արձանագրել առանձին և հրապարակել, ըստ դրանց հայտնի դառնալու ժամանակների:

Ընտրական թվերի առաջին խումբը, ըստ հիմնական ցուցակների ընտրողների, տեղամասին հատկացված քվեաթերթիկների և ծրարների թվերը հայտնի են քվեարկությունը սկսելուց առաջ: Այս տվյալները կարող են հրապարակվել ըստ տեղամասերի, քվեարկության օրը, տեղամասերը բացվելուց անմիջապես հետո:

Քվեարկության օրվա ընթացքում մասնակցության վերաբերյալ տվյալները կարող են հրապարակվել, ըստ հիմնական և լրացուցիչ ցուցակների, տարանջատ: Ընդ որում, եթե մասնակցության վերաբերյալ տվյալներն, ըստ տեղամասերի հրապարակվեն յուրաքանչյուր ժամը մեկ, ապա հաշվի առնելով յուրաքանչյուր տեղամասի թողունակությունը՝ կվերահսկվի ավել մասնակցության կամ լցոնման հնարավորությունը:

Ընտրական թվերի մյուս խումբը՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների, չօգտագործված և մարված քվեաթերթիկների ու ծրարների, օգտագործված էլունդների թվերը, տեղամասերում հայտնի են դառնում մինչ քվեատուփ բացելը: Այս տվյալները կարող են հրապարակվել քվեարկության ավարտից հետո, մասնակցության վերաբերյալ վերջին տվյալների հրապարակման ժամանակ:

Ընտրական թվերի հաջորդ խումբը՝ քվեատուփում առկա ծրարների, դրանցում եղած քվեաթերթիկների, վավեր և անվավեր ծրարների ու քվեաթերթիկների, քվեների բաշխման թվերը, հայտնի են դառնում քվեատուփը բացելուց հետո: Այս տվյալները կարող են հրապարակվել ընտրությունների նախնական տվյալների հրապարակման ժամանակ: Եթե ընտրական թվերն, ըստ խմբերի արձանագրվեն առանձին և անհապաղ հրապարակվեն ըստ տեղամասերի, ապա այն ինչ-որ չափով ձեռնպահ կպահեր ընտրական տեղամասերում, ընտրատարածքներում և կենտրոնական ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում այդ տվյալները փոխելուց:

Այսպիսով, եթե ընտրական թվերն, ըստ խմբերի, դրանց հայտնի լինելուն զուգընթաց, անմիջապես, ըստ առանձին տեղամասերի հրապարակվեն, ասենք՝ ինտերնետում, և ցանկացած մարդ կարողանա ծանոթանալ դրանց հետ, ապա հանձնաժողովի անդամներն ու կեղծիքների հակված անձինք ավելի զգոն կլինեն: Նշվածը կարևոր է նաև անճշտությունները գնահատելու և քվեարկության իրական արդյունքները խեղաթյուրելու հնարավորությունը բացառելու համար: Տվյալ դեպքում վստահությունը ընտրության և քվեարկության արդյունքները

փոփոխության չենթարկվելու հանդեպ կմեծանա:

Արդյունքների ճշգրիտ ամփոփումը

Այժմ ներկայացնենք ևս մի քանի մտտեցում, որոնք նույնպես կարող են ինչ-որ չափով նպաստել արդար ընտրություններին:

Անկախ այն բանից, թե ինչպիսի ընտրակարգերով ու ընտրական համակարգով են անցնում ընտրությունները, քվեարկության իրական արդյունքները պարզելու, հնարավոր կեղծիքները բացահայտելու և ընտրակեղծիքներն ի սկզբանե անիմաստ դարձնելու նպատակով կարևոր է, որ առանց բողոքների ու այլ պայմանականությունների վերջնական արդյունքներն ամփոփվեն այնպես, որ սխալների անճշտությունների ու անհամապատասխանությունների առկայության դեպքում, անճշտությունների, սխալների ու անհամապատասխանությունների պատճառներն ու դրանց առաջացման պատճառ հանդիսացողին բացահայտելու նպատակով համապատասխան տեղամասի քվեարկության արդյունքները պարտադիր ստուգվեն: Իսկ եթե սխալն այնպիսին է, որը կարող է ընկալվել, որպես ընտրակեղծիք, ապա տեղամասում ընտրություններն անվավեր ճանաչվեն: Ընդ որում, արդյունքների հնարավոր փոփոխության առումով, անվավեր տեղամասերի ընտրողների թիվն ամբողջությամբ հաշվվի և եթե տեղամասի ընտրողների ընդհանուր թիվը որևէ թեկնածուի, կուսակցության օգտին տրվելիք ձայներ հաշվելու դեպքում ընտրված թեկնածուն կարող է փոխվել, ապա համապատասխան տեղամասերում պարտադիր վերաքվեարկություններ նշանակվեն:

Տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվեն, եթե տեղամասի քվեարկության արդյունքների նախնական ամփոփման տվյալներում առկա է ընտրական թվաբանական այնպիսի անհամապատասխանություն, որը կարող է ընկալվել ուրիշի փոխարեն ստորագրելու կամ լցոնման արդյունք, այսինքն, երբ

- ա)** ընտրողների ցուցակում ստորագրություն պարունակող տողի, ընտրողի անվան դիմաց, հայտնաբերվում է ընտրողի անձնագրային տվյալների հետ անհամապատասխանություն,
- բ)** հայտնաբերվում է ընտրողների ցուցակում ընտրողի ստորագրության ոչ նմանություն անձնագրում ստորագրության հետ, կեղծ ստորագրություն,
- գ)** քվեատուփում առկա քվեաթերթիկներն ավելին են, քան ընտրա-

ցուցակներում ստորագրությունների թիվն է,

դ) քվեատուփում առկա են այլ տեղամասի քվեաթերթիկներ, ծրարներ,

ե) ընտրատեղամասում ստացված և մարված ծրարների, քվեաթերթիկների թվերի տարբերությունը հավասար չէ ընտրացուցակներում ընտրողների ստորագրությունների թվին,

զ) ընտրատեղամասում ստացված և մարված քվեաթերթիկների թվերի տարբերությունը պակաս է քվեատուփում առկա քվեաթերթիկների թվից:

է) անվավեր քվեաթերթիկների, դեմ և բոլոր թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկների թվերի գումարը տարբերվում է քվեատուփում առկա քվեաթերթիկների թվից:

Իհարկե, պարզ է, որ միայն լավ ընտրական օրենսդրությունը դեռ ազատ և արդար ընտրությունների անցկացման բավարար պայման չէ, բայց դրա նշանակությունը չափազանց կարևոր է, քանի որ եթե հաշվի առնենք նախորդ ընտրությունների փորձը, ապա պարզ կդառնա, որ ընտրակեղծիքներն ապացուցելը որոշակի դժվարություններ են պարունակել, իսկ ապացույցներն էլ դիտարկվել են, որպես արդյունքների վրա էական ազդեցություն չունեցող երևույթներ, նույնիսկ, եթե ընտրակեղծիքների դեմ բողոքողների թիվը չափազանց մեծ է եղել:

ՔՎԵՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

Վերը նշվածներն հաշվի առնելով՝ կարող է ներդրվել նաև էլեկտրոնափաստաթղթային քվեարկությունների մեխանիզմ: Այսինքն, եթե քվեարկություններն իրականացվեն քվեմեքենաների միջոցով, այնպիսի քվեմեքենաների, որը բացառի այլ մարդու փոխարեն քվեարկելու հնարավորությունը, քվեարկության արդյունքները որևէ մեկի կողմից փոխելու հնարավորությունը, ապահովված լինի անկախ, առանց արտաքին հնարավոր միջամտության գործելու տեխնիկական կարողությամբ, ապա կտրուկ կնվազի հանձնաժողովների կողմից ընտրակեղծիքներին մասնակցելու հավանականությունը:

Եթե ստեղծվում է բնակավայրի հասցեների, բնակչության և ընտրողների տվյալների էլեկտրոնային բազա, որի տվյալները հասու կլինեն բոլորին, ապա հեշտությամբ կարելի է պարզել այն հնարավոր սխալներն ու թերությունները, որոնք առկա կլինեն ընտրողների ցուցակներում: Իսկ դա հիմք կհանդիսանա մարդկանց տարբեր տեղամասերի ընտրական ցուցակներում ընդգրկելու և մեկ անձի բազմակի քվեարկության հնարավորությունը կանխելու համար: Առավել ևս, եթե այդ բազան պարունակի նաև ընտրողների բիոմետրիկ տվյալները, մատնահետքերը, ապա այն կարող է կանխարգելել այլոց փոխարեն քվեարկությունը:

Եթե կիրառվի էլեկտրոնային քվեմեքենա՝ էլեկտրոնային ընտրացուցակներով, ընտրողի մատնահետքի դրոշմի անմիջական համեմատության հնարավորությամբ, ձայների անմիջական էլեկտրոնային հաշվման հնարավորության ապահովմամբ, ապա ընտրողը կքվեարկեր ու կստանար նաև քվեմեքենայի տպած քվեաթերթիկը, որն էլ կդնեք ծրարի մեջ ու կզցրեր քվեատուփ՝ փաստաթղթային քվեարկության, քվեաթերթիկների ֆիզիկական հաշվման հնարավորություն ապահովելու համար: Տվյալ դեպքում նախ քվեարկության էլեկտրոնային հաշվարկի արդյունքները պարզ կդառնա անմիջապես, երկրորդ՝ մարդիկ հնարավորություն կունենան նաև ստուգել արդյունքները փաստաթղթային քվեաթերթիկներով: Այդ դեպքում կբացատրվեն քվեմեքենայի միջոցով հնարավոր կեղծիքները, ինչպես նաև մարդկանց կողմից կեղծիքների կազմակերպման ու արդյունքների կեղծման հնարավորությունները: Ժամանակակից տեխնիկայի հնարավորությունների օգտագործումը կարող է բացառել ընտրակեղծիքներով քվեարկության անցկացման և քվեարկության իրական արդյունքները փոխելու և սուբյեկտիվ մոտեցման հնարավոր-

րությունը, որը չափազանց կարևոր է քվեարկության արդյունքների նկատմամբ բոլորի վստահության հարցում:

Իսկ բոլոր դեպքերում ընտրությունները քվեմեքենաներով անցկացնելով ու քվեմեքենայի կողմից ամփոփված արդյունքներն անմիջապես բոլորի համար տեսանելի պայմաններում, հեռուստացույցով հրապարակելով, հանձնաժողովների սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունները բացառելով, ազատ և արդար ընտրությունների կազմակերպումը պետության և հասարակության առաջընթացի ու զարգացման երաշխիք կհանդիսանա:

Հարկ է նշել, որ քվեմեքենաներ կպահանջվեն ընդամենը տեղամասերի քանակի թվով: Ավելին, ժամանակակից տեխնոլոգիաները էլեկտրոնային անհատական քվեարկություններ կազմակերպելու հնարավորություն են ապահովում, թվային հեռահաղորդակցման կապի միջոցներով: Իսկ ինչպես ցույց է տալիս փորձը ժողովրդավարության հաստատման համար ծախսերի բացակայությունը կամ ձևական ծախսերով սահմանափակվելն ավելի թանկ է նստում ցանկացած ժողովրդի՝ այդ թվում նաև միջազգային հանրության վրա, քան թե քաղաքակիրթ ազատ և արդար ընտրություններով, ընտրողների մեծամասնության վստահությանն արժանի իշխանությունների ձևավորումը: Ընտրակեղծիքների կազմակերպման համար ավելի շատ ծախսեր են արվում, թեկուզ և իբր արդար ընտրությունների ապահովման պատրվակով, բայց իրական արդար ընտրությունների խնդիրը լուծելու համար միջոցներ չեն տրամադրվում:

Էլեկտրոնային քվեարկություններն կիրառվում են մի շարք երկրներում:

Գլուխ 6

ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆՏՐԱԿԱՐԳԵՐԸ

Մեծամասնական ընտրակարգով ընտրություններ անց են կացվում մի շարք երկրների սենատները կազմավորելու համար: ԱՄՆի կոնգրեսը (սենատը և ներկայացուցիչների պալատը) կազմավորվում է մեկ փուլով մեծամասնական ընտրակարգի հիման վրա, Ֆրանսիայի Ազգային Ժողովը՝ մեծամասնական միամանդատ, երկփուլ ընտրություններով: Մեծամասնական ընտրակարգով կազմավորվում է նաև Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների պալատը, Ավստրալիայի ներկայացուցիչների պալատը, Հնդկաստանի սենատը և այլն:

Համամասնական ընտրակարգով ընտրություններ անց են կացվում մի շարք երկրներում, հիմնականում ներկայացուցչական պալատները կազմավորելու համար:

Համամասնական տարբեր տարբերակներով ընտրություններ անց են կացվում հետևյալ երկրներում՝ Ավստրալիա, Բելգիա, Թուրքիա, Դանիա, Իսրայել, Իսլանդիա, Լյուքսեմբուրգ, Հունաստան, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ֆինլանդիա և այլն: Ընդ որում մի շարք երկրներում՝ Բելգիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա և այլն, մանդատների բաշխումն ըստ ցուցակների իրականացվում է Դ՝ Նոնդտի սկզբունքով: Նախապատվության սկզբունքը կիրառվում է Բելգիայի, Նիդեռլանդների և այլ երկրների ընտրություններում: Շվեյցարիայում կիրառվում է տեղափոխության սկզբունքը: Ցուցակներին մանդատներ հատկացնելու համար կողմ ձայների ներքին քվոտա է սահմանված Դանիայում, Գերմանիայում և այլն:

Գերմանիայի Բունդեսթագի, Ճապոնիայի Պառլամենտի և մի շարք այլ երկրների օրենսդիր մարմինների ընտրություններն անց են կացվում համամասնական և մեծամասնական ընտրակարգերի խառը համակարգով:

Բազմաթիվ երկրներում արդեն քվեարկություններն իրականացվում են բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ, քվեմեքենաների միջոցով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ⁴

ԱՄՆ - ի օրենսդիր իշխանությունը՝ Կոնգրեսը, կազմված է Սենատից՝ 100 սենատորներով և Ներկայացուցիչների պալատից՝ 435 անդամներով:

Ներկայացուցիչների պալատն ընտրվում է երկու տարին մեկ անգամ և այն կազմված է յուրաքանչյուր նահանգի բնակչության կողմից ընտրված անդամներից: Յուրաքանչյուր 30 հազար ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներից չի կարող ընտրվել ավելի քան մեկ ներկայացուցիչ, բայց ամեն մի նահանգ պետք է ունենա առնվազն մեկ ներկայացուցիչ: Ներկայացուցիչ չի կարող ընտրվել այն անձը, ում 25 տարին չի լրացել, առնվազն 7 տարի շարունակ չի հանդիսացել ԱՄՆ - ի քաղաքացի և ընտրությունների պահին չի հանդիսանում տվյալ նահանգի բնակիչ:

Սենատի կազմի մեջ են մտնում յուրաքանչյուր նահանգից 6 տարի ժամկետով ընտրված երկուական սենատորներ: Սենատի կազմի 1/3-ը 2 տարին մեկ վերընտրվում է: Սենատոր չի կարող դառնալ 30 - ից ցածր տարիք ունեցող, առնվազն 9 - ը տարի շարունակ ԱՄՆի քաղաքացի և ընտրությունների պահին այն նահանգի, որտեղից պետք է ընտրվի, բնակիչ չհանդիսացող անձը:

Սենատորների և ներկայացուցիչների ընտրությունների անցկացման ժամանակը, տեղը և կարգը որոշում է յուրաքանչյուր նահանգի օրենսդիր ժողովը, սակայն ցանկացած պահի Կոնգրեսը կարող է ընտրության կարգը սահմանող կամ փոփոխող, բացառությամբ սենատորների ընտրությունների վայրը փոխող օրենք հրապարակել:

Յուրաքանչյուր պալատ լուծում է ընտրությունների օրինաչափության ու իր անդամների լիազորությունների հարցերը, ինչպես նաև սահմանում է իր նիստերի աշխատակարգը և կարող է կարգի խախտման համար պատժել իր անդամին ու ձայների 2/3-ով հեռացնել նրան իր կազմից:

Չնայած տարբեր նահանգներում գործում են ընտրությունների մասին տարբեր օրենքներ, բայց դրանցում սահմանված են ինչոր չափով, որոշ ընդհանուր սկզբունքների հիման վրա ձևավորված ընտրակարգեր:

Տարբեր նահանգներում ակտիվ ընտրական իրավունքի համար սահմանված են տարբեր պահանջներ, ինչպիսիք են. 18 - ից ոչ պակաս տարիք ունենալու, համապատասխան նահանգի որոշակի ժամկետով բնակիչ լինելու, որոշակի ունեցվածք ունենալու,

լինելու, լեզուն իմանալու, անտուն չլինելու, մտավոր ունակություններով որոշ պայմանների բավարարելու, հանցագործ կամ նախկին հանցագործ չլինելու, պետությանը հավատարմության երդում տալու, իսկ գլխավոր ընտրությունների թեկնածուներին որոշելու համար անցկացվող նախընտրություններին (primary elections) մասնակցելուց որոշակի ժամկետ առաջ կուսակցական պատկանելիության մասին հայտարարություն տալու պահանջները և այլն:

Պասիվ ընտրական իրավունքի համար տարբեր նահանգներում սահմանված են համապատասխան նահանգի ակտիվ ընտրական իրավունքի նորմերին համապատասխան ավելի խիստ պահանջներ, ինչպես նաև այլ լրացուցիչ պահանջներ, ինչպիսիք են. պաշտոնանկ եղած չլինելու, համապատասխան կրթություն կամ աշխատանքային փորձ ունենալու, ֆինանսական դրության վերաբերյալ հրապարակավ հայտարարություն անելու և այլ պահանջներ:

Թեկնածուի առաջադրման, թեկնածու գրանցվելու՝ քվեարկվելու հնարավորություն (ballot access) ստանալու իրավունքների համար սահմանված են ինչ որ չափով ընդհանուր բնույթ ունեցող տարբեր նորմեր և դրանց իրականացման համար տարբեր կարգեր, որոնցից են նախընտրությունները, որոնք անց են կացվում մինչ գլխավոր ընտրությունները: Նախընտրությունները կոչված են քվեարկվելու իրավունք ձեռք բերող թեկնածուներին որոշելու և դրանց, որպես նահանգի ընտրողների ձայների մեծամասնությունն ունեցող կուսակցությունների թեկնածուներ կամ առանձին առաջադրված թեկնածուներ գրանցելու՝ այսինքն հիմնական, գլխավոր ընտրություններում քվեարկվելու իրավունք ընձեռելու համար: Ընդ որում՝ կիրառվում է ինչպես փակ նախընտրություններ, որի ժամանակ համապատասխան կուսակցության թեկնածուին որոշելու համար քվեարկությանը մասնակցում են այդ կուսակցությանն իրենց պատկանելիության վերաբերյալ հայտարարություն տված ընտրողները, այնպես էլ բաց նախընտրություններ, որի ժամանակ համապատասխան կուսակցության թեկնածուին որոշելու համար քվեարկությանը մասնակցում են, այդ կուսակցությանը պատկանելիության վերաբերյալ հայտարարություն տված ընտրողներից բացի, նաև տվյալ ընտրատարածքի այլ ընտրողներ:

Մի շարք նահանգներում նահանգապետի (գուբերնատորի), նախագահի կամ օրենսդիր մարմինների ընտրություններում

որոշակի ձայներ ստացած կուսակցություններն իրենց թեկնածուներին առաջադրում են նախընտրությունների կամ կուսակցության համագումարի (կոնֆերանսի) միջոցով: Իսկ փոքր կուսակցությունները կամ առանձին քաղաքական գործիչները նախընտրություններին մասնակցելու համար պետք է ունենան համապատասխան նահանգի ընտրողների որոշակի տոկոսի աջակցությունը՝ հիմնականում արտահայտված ընտրողների ստորագրություններով (petition):

Որոշ նահանգներում գլխավոր ընտրություններում քվեարկվելու իրավունք ձեռք է բերվում, թեկնածուներն առաջադրվում են, նաև միանգամից ընտրողների որոշակի քանակի, հիմնականում ստորագրությունների միջոցով՝ աջակցությունը ստանալով, առանց նախընտրությունների փուլն անցնելու:

Չնայած այն բանին, որ ԱՄՆ-ի տարբեր նահանգներում ընտրություններն իրականացվում են ինչ-որ չափով տարբեր ընտրակարգերով, բայց համարյա հատկանշական է, որ բոլոր նահանգների ընտրությունները անցնում են ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքի կիրառմամբ, միամանդատ, հարաբերական մեծամասնական ընտրակարգերով:

ԱՄՆ-ում գործող ընտրակարգերն ընդհանուր առմամբ ապահովում են երկկուսակցական ընտրությունների համակարգ: Իսկ կոնգրեսը հիմնականում ձևավորվում է Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունների անդամների ընտրությամբ:

Քվեարկություններն իրականացվում են քվեմեքենաների միջոցով:

ՖՐԱՆՍԻԱ⁵

Համաշխարհային պատերազմից հետո, մինչ 1958 թվականը, Ֆրանսիայում ընտրություններն անց էին կացվում համամասնական ընտրակարգով: Այնուհետև ընտրությունների հիմքում դրվեց մեծամասնական ընտրակարգը: Թերևս 1985 թվականին սոցիալիստական պառլամենտական մեծամասնությունը, հաշվի առնելով իր քաղաքական վարկանիշի ցածր լինելը, հաջորդ պառլամենտում իր համար ավելի շատ տեղեր ապահովելու համար անցավ համամասնական ընտրակարգի, բայց մեծամասնություն չստացավ: Դրանից հետո Ֆրանսիայում Ազգային Խորհրդը նորից է կազմավորվում մեծամասնական ընտրակարգով ընտրությունների միջոցով:

Ըստ Ֆրանսիայի ընտրական օրենսգրքի, Ազգային Խորհրդի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ունիոնմինալ, երկփուլ ընտրակարգով: Առաջին փուլում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ձայների պարզ մեծամասնությունը և ընտրատարածքի ընտրողների ոչ պակաս 25% - ի ձայները: Երկրորդ փուլ անցնում են այն թեկնածուները, որոնք ստացել են ընտրողների ոչ պակաս քան 12,5 % - ի ձայները կամ եթե ոչ մեկն այդքան ձայներ չի ստացել, ապա 2 - րդ փուլ անցնում են առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածուները: Երկրորդ փուլում, որն անցնում է մեկ շաբաթ հետո, ընտրվում է առավել շատ ձայներ ստացած թեկնածուն:

Ընտրելու իրավունք ունեն 18 - ից բարձր տարիք ունեցողները, իսկ ընտրվելու իրավունք՝ 23 - ից բարձր տարիք ունեցող քաղաքացիները, բացառությամբ պետական ծառայության բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների: Թեկնածուն առաջադրվում է իր դիմումի համաձայն, որը ներկայացնում է պրեֆեկտին, մուծում է 1000 եվրո ընտրական գրավ, որը վերադարձվում է, եթե նա հավաքել է ընտրատարածքի ընտրողների թվի 5%-ից ավելի կողմ ձայներ:

Ազգային խորհրդի պատգամավորների թիվը 577 է:

Պատգամավորության թեկնածուների քարոզչության համար սահմանվում են հավասար հնարավորություններ և դրանց օգտագործման հավասար պայմաններ: Օրինակ՝ սահմանված է քարոզչական նյութերի փակցնելու հավասար տեղեր, ընտրողների բաժանելու համար քարոզչության թերթիկների հավասար տպագրաքանակներ և այլն:

Օրենսգրքի քրեաիրավական դրույթների բաժնի մոտ 20 հոդված-

ներում նշվում են ընտրական օրենքի խախտումների համար վարչական, քրեական պատասխանատվության չափերը: Մասնավորապես՝ օրինակ, այն թեկնածուն, որը թույլ է տվել իրեն հատկացված պաստառի փակցնելու տեղը օգտագործել այլ թեկնածուի օգտին քարոզչության համար, տուգանվում է: Ընտրակարգի ընթացքի խախտման համար ընտրական բյուրոյի կամ պետական մարմնի ներկայացուցչի համար սահմանված է ազատազրկում 5 - ից 10 տարի: Մեկից ավելի ընտրական ցուցակում խաբեության միջոցով գրանցվելու համար սահմանվում է տուգանք և ազատազրկում մեկ ամսից մեկ տարի ժամկետով և այլն:

Մենատի ընտրությունները

Ֆրանսիայի սենատը կազմված է 305 անդամներից, որոնք ընտրվում են 9 տարի ժամկետով և 3 տարին մեկ 1/3 - ով վերընտրվում են:

Մենատորները ընտրվում են պատգամավորների ընտրական կոլեգիայով, որի մեջ մտնում են պատգամավորները, տարածաշրջանների խորհրդականները, գլխավոր խորհրդականները, մունիցիպալ խորհուրդների ներկայացուցիչները կամ նրանց տեղակալները, այսինքն՝ դեպարտամենտների բոլոր ընտրովի մարմինների ներկայացուցիչները:

Մենատորների ընտրություններն անց են կացվում մեծամասնական ընտրական համակարգով, երկու փուլով, իսկ 5 -ից ավելի սենատորներ ընտրող դեպարտամենտներում ընտրություններն անց են կացվում համամասնական, ներկայացուցչական, միջին մեծամասնության սկզբունքով:

Մենատորներ կարող են ընտրվել 35 ից բարձր տարիք ունեցողները:

ԳԵՐՄԱՆԻԱ⁶

Բունդեսթագի ընտրությունների ֆեդերալ օրենքի համաձայն 518 պատգամավորներից 259-ը ընտրվում են ընտրատարածքներից մեծամասնական ընտրակարգով առանձին առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից, իսկ մնացած պատգամավորներն ընտրվում են համամասնական ընտրակարգով, երկրամասային (հողատարածքային) ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից:

Յուրաքանչյուր ընտրող ունի 2 ձայն, 1-ին ձայնը ընտրատարածքից ընտրվող թեկնածուին ընտրելու համար, 2-րդ ձայնը՝ ցուցակներից որևէ մեկի օգտին քվեարկելու համար:

Ֆեդերալ ընտրությունների անցկացման ղեկավարը և նրա տեղակալը նշանակվում են ֆեդերալ ներքին գործերի նախարարի կողմից, իսկ երկրամասերում, ընտրատարածքներում և տեղամասերում՝ երկրամասի կառավարության կողմից, իսկ հանձնաժողովի անդամները նշանակվում են համապատասխան հանձնաժողովի ղեկավարի կողմից:

Ընտրողների ցուցակները կազմում են ընտրության օրից 20-ից 15 օր առաջ:

Ընտրատարածքներում թեկնածուներն առաջադրվում են կամ կուսակցությունների կողմից ընդհանուր, կամ ներկայացուցչական ժողովների միջոցով, կամ էլ ոչ պակաս, քան 200 ընտրողների ստորագրությամբ առաջադրումը հաստատելու միջոցով: Յուրաքանչյուր թեկնածու կարող է առաջադրվել միայն մեկ ընտրատարածքում:

Թեկնածուների երկրամասային կուսակցական ցուցակներն առաջադրվում են կուսակցությունների կողմից:

Յուրաքանչյուր կուսակցություն յուրաքանչյուր երկրամասում կարող է առաջադրել միայն մեկ ցուցակ:

Ընտրատարածքից ընտրվում է այն թեկնածուն, որն ստացել է ամենաշատ ձայները, ընդ որում ձայների հավասարության դեպքում հարցը լուծվում է վիճակահանությամբ:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների համար նախատեսված մանդատներն ազգային փոքրամասնության կուսակցությունների ցուցակների և ընտրությունների ամբողջ տարածքում 5% - ից ավելի 2 - րդ իրական ձայներ ստացած կամ ոչ պակաս քան 3 ընտրատարածքներից մեկական տեղեր ստացած

կուսակցությունների ցուցակների միջև բաշխվում են դասական ձևով: Ընդ որում՝ կուսակցական ցուցակներին տրված 2-րդ իրական ձայները հաշվելիս հաշվի չի առնվում ընտրատարածքի ոչ պակաս քան 200 ընտրողների ստորագրությամբ կամ տվյալ երկրամասում իր ցուցակն ունենալու թույլատրությունը չունեցող կուսակցության կողմից առաջադրված և ընտրատարածքում ամենաշատ ձայները ստացած, այսինքն՝ ընտրված թեկնածուի օգտին քվեարկած ընտրողների 2 - րդ ձայները:

Ընտրությունների արդյունքների ստուգման հետևանքով պատգամավորը կարող է կորցնել իր պատգամավորական լիազորությունները: Եթե ընտրատարածքում կամ ընտրական տեղամասում ընտրությունները չեն կայացել, ապա անցկացվում են լրացուցիչ ընտրություններ 3 շաբաթվա ընթացքում:

Եթե ընտրությունները մասնակի կամ ամբողջությամբ ճանաչվել են անվավեր, անցկացվում են կրկնական ընտրություններ ոչ ուշ, քան ընտրությունների անվավեր ճանաչման օրից 60 օր հետո: Կրկնական ընտրությունների արդյունքների հիման վրա նորից են ամփոփվում ընտրությունների արդյունքները:

ԻՏԱԼԻԱ ⁷

Իտալիայի Հանրապետության նախագահի 20.03.1967թ. դեկրետով հրապարակված <<Ակտիվ ընտրական իրավունքի և ընտրական ցուցակներ կազմելու ու վերանայելու մասին օրենքների տեքստերի ժողովածուի>> համաձայն ընտրելու իրավունքից օգտվում են 18 տարեկան դարձած քաղաքացիները, բացառությամբ Իտալիայի սահմանադրությամբ սահմանված ընտրական իրավունքից զրկված քաղաքացիների:

Ընտրական ցուցակները կազմվում են կոմունային ընտրական հանձնաժողովների կողմից և վեց ամիսը մեկ ստուգվում ու ճշտվում են:

Կոմունայի ընտրական հանձնաժողովն ընտրվում է Կոմունալ խորհրդի կողմից՝ Մինդիկի և Մունիցիպալ Ջունտայի (գործադիր մարմնի) ընտրվելուց հետո 1-ին նիստում՝ խորհրդի կողմից:

Գավառային խորհրդի գործունեության ժամանակամիջոցում ձևավորվում է մանդատային ընտրական հանձնաժողով, տրիբունալի Նախագահի գլխավորությամբ: Հանձնաժողովը քննարկում և ընդունում է ցուցակների հետ կապված վերջնական որոշումներ:

Կոմունայի ընտրական հանձնաժողովները կոմունաները բաժանում են 100-ից 800 կամ բացառիկ դեպքերում 50 - ից 100 ընտրողներով ընտրական տեղամասերի:

Ընտրվելու իրավունք ունեն 25 - ից բարձր տարիք ունեցող ընտրելու իրավունք ունեցողները, բացառությամբ ընտրություններից վեց ամիս առաջ լիազորությունները չդադարեցրած կառավարության և պետական ծառայության բարձրաստիճան պաշտոնյաների:

Ընտրությունները նշանակվում են նախագահի դեկրետով:

Ընտրությունների վավերության հարցը որոշում է պալատը:

Պառլամենտական հետևաբար և քաղաքական շարունակական ճգնաժամից դուրս գալու նկատառումներով Դեպուտատների պալատի ընտրությունների մասին օրենքը (նախագահի դեկրետ 30.03.1957թ.) 1993 թվականին հանրաքվեով փոխվեց, և Իտալիայում սահմանվեց մեծամասնական ընտրական համակարգ, պահպանվելով 25% առանձին բազմամանդատ ընտրատարածքներից, համամասնական նախապատվության սկզբունքով նախկինում գործող ընտրակարգով դեպուտատների պալատի դեպուտատների ընտրության ընտրակարգը, ըստ որի

ղեպուտատների պալատն ընտրվում էր համամասնական ընտրակարգով, ընդ որում ընտրատարածքներում ավելացած ձայները փոխանցվում էին ընդհանուր համազգային ընտրատարածք: Կիրառվում է նախապատվության (պրեֆերենցիա) սկզբունքը:

Մենատի ընտրությունները

Իտալիայի Հանրապետության սենատի ընտրությունների մասին հիմնադրույթների համաձայն՝ Մենատ կարող են ընտրվել՝ ընտրելու իրավունք ունեցող, 40-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիները: Ընտրելու իրավունք վերապահված է 25-ից բարձր տարիք ունեցողներին:

Երեքից ոչ պակաս և մարզի ընտրատարածքների թվից ոչ ավելի թվով թեկնածուների առաջադրումը կատարվում է կուսակցությունների կողմից: Իսկ առանձին թեկնածուների առաջադրումը, որոնք հետագայում կազմում են խմբեր՝ ցուցակներով քվեարկվելու համար, կատարվում է 350-ից 700 ընտրողների ստորագրություններով:

Յուրաքանչյուր թեկնածու կարող է քվեարկվել մեկ մարզում և ոչ ավելի, քան 3 ընտրատարածքներում: Ընտրողը քվեարկում է ցուցակի կամ թեկնածուի, կամ էլ և՛ ցուցակի, և՛ թեկնածուի օգտին:

Ընտրատարածքից ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել էր ձայների 65%-ը, պատգամավոր չընտրած ընտրատարածքների մնացած մանդատները մարզային ընտրական բյուրոն բաշխում է ըստ խմբերի ցուցակների, համամասնորեն՝ միջին մեծամասնության սկզբունքով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների թիվը:

Գլուխ 7

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՐԳԵՐԸ

Նախկին Խորհրդային Միության հանրապետություններում մինչ 1989 թվականը կիրառվում էր միամանդատ, ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով, ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելիի քվորումով և քվտայով մեծամասնական ընտրական համակարգը:⁸ Թերևս անիմաստ է ներկայացնել Խորհրդային Միության այդ ժամանակաշրջանի ընտրությունները, քանի որ յուրաքանչյուր ընտրատարածքում քվեարկվում էր մեկ թեկնածու և արդյունքում հայտարարվում էր, որ նրանք ստացել են ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի ձայների 90%-ից ավելին, եթե ոչ 99,9%-ը:

1989 թվականին Խորհրդային Միության թերևս ինչ-որ չափով ոչ ձևական գերագույն իշխանության նոր ներկայացուցչական մարմնի (ժողովրդական պատգամավորների համագումարի) ձևավորման համար կիրառվեց ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելիի քվորումով և մասնակիցների կեսից ավելիի ձայների քվտայով, մեծամասնական ընտրական համակարգ: Ընդ որում, գերագույն իշխանության՝ համագումարի, 2250 պատգամավորներից 750 - ը սահմանված կարգի համաձայն ընտրվեցին հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից, որոնք հիմնականում կոմունիստական ռեժիմի կողմից ստեղծված և հիմնականում նրա շահերն արտահայտողներն էին: Իսկ ընտրատարածքներից ընտրվող մնացած պատգամավորների մեծ մասը, որոնց թեկնածություններն առաջադրվում և պաշտպանվում էին կոմկուսի կողմից, ընտրվեցին կեղծիքների շնորհիվ: Չնայած դրան, սկսված վերափոխումները հանգեցրեցին նրան, որ պատգամավորների մի մասը ժողովրդավարության հաստատման, անձի ազատու-թյունների ու իրավունքների պաշտպանության համար բռնապետության դեմ պայքարող հայտնի քաղաքական գործիչներ էին և նրանց կողմնակիցները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում Անդրեյ Դմիտրիևիչ Սախարովը:

1991 թվականին Խորհրդային Միության լուծարման հետևանքով լուծարվեց ԽՍՀՄ ժողպատգամավորների համագումարը և նրա կողմից ընտրված Գերագույն Խորհուրդը:

Խորհրդային Միության կազմի մեջ մտնող հանրապետություն-

ների մի մասի Գերագույն Խորհուրդները 1990 թվականին ձևավորվեցին Միության ժողպատգամավորների ընտրությունների համար սահմանված ընտրակարգերով, առանց հասարակական կազմակերպությունների կողմից ուղղակիորեն պատգամավորներ ընտրելու և թերևս մի փոքր ավելի բարելավված օրենքներով ու քիչ խախտումներով:

Հանրապետությունների նորընտիր իշխանությունների անկախության նվաճման ուղղությամբ գործունեության, Խորհրդային իշխանության կայսերամետ ուժերի ռազմական լծակներով վարչակարգի պահպանման փորձերի անհաջողությունների հետևանքով, ժողովրդավարական ուժերի ջանքերի շնորհիվ, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելառուսի իշխանությունների և դրանց միացած մյուս հանրապետությունների միջպետական համաձայնագրերի համաձայն, հիմնականում հանրաքվեներով հանրապետությունների անկախության հռչակմամբ 1991 թվականին Խորհրդային Միությունն իրավաբանորեն դադարեց գոյություն ունենալուց և նրա կազմի նախկին հանրապետություններում՝ այժմ անկախ պետություններում, գործում են նոր ընտրակարգեր և ընտրություններն անցկացվում են տարբեր ընտրական համակարգերով:

ՌՈՍԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԸՆԿՆԱԿԱՐԳԵՐԸ

Ռուսաստանի Դաշնության Նախագահի 1993 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հրապարակված հրամանագրերով Ռուսաստանի ժողպատգամավորների համագումարն ու Գերագույն Խորհուրդը լուծարվեց և դեկտեմբերի 12-ին նշանակվեց նոր պառլամենտի՝ Ֆեդերալ ժողովի, ընտրություններ, որի անցկացման համար սահմանվեց նոր ընտրակարգեր, որն էլ հիմք հանդիսացավ հետագա ընտրությունների անցկացման համար, 1995 թվականին ընդունված Ռուսաստանյան Ֆեդերացիայի Պետական Դումայի Ֆեդերալ ժողովի դեպուտատների ընտրությունների մասին Ֆեդերալ օրենքի համար:

Ֆեդերալ ժողովը բաղկացած է 2 պալատից. Ֆեդերալ Խորհրդից և Պետական դումայից: Ֆեդերալ Խորհուրդը կազմված է Ռուսաստանյան ֆեդերացիայի սուբյեկտների ներկայացուցիչներից:

Ռուսաստանի Դումայի 225 դեպուտատների ընտրություններն իրականացվում էին ըստ միամանդատ ընտրատարածքների հարաբերական մեծամասնական, իսկ մյուս 225 դեպուտատներինը՝ ըստ համադաշնակցային ընտրատարածքի համամասնական ընտրակարգերով:

Ռուսաստանյան Դաշնության տարածքը բաժանվում էր մոտավորապես հավասար թվով ընտրողներ ունեցող ընտրատարածքների, բայց այնպես, որ յուրաքանչյուր սուբյեկտ ընդգրկի ոչ պակաս, քան մեկ ընտրատարածք:

Կուսակցությունների առաջադրած թեկնածուների ցուցակները պետք է պաշտպանվեին 200-հազար ընտրողների ստորագրությամբ:

Միամանդատ ընտրատարածքներում կուսակցությունները, ընտրական բլոկերը յուրաքանչյուր ընտրատարածքում կարող էին առաջադրել միայն մեկ թեկնածու՝ համամասնական ընտրությունների ցուցակներում գրանցված թեկնածուների թվից կամ այլ կարգով թեկնածուների առաջադրումը պետք է պաշտպանվեր համապատասխան ընտրատարածքի ընտրողների ոչ պակաս քան 1%-ի ստորագրությամբ:

Յուրաքանչյուր ընտրող ուներ մեկ ձայնի իրավունք՝ ընտրատարածքում քվեարկվող թեկնածուներից մեկի օգտին և մեկ ձայնի իրավունք՝ ցուցակներից մեկի օգտին:

Միամանդատ ընտրատարածքում ընտրությունները համարվում էր չկայացած, եթե մասնակիցների թիվը պակաս էր ընտրատարածքի ընտրողների 25% - ից կամ բոլոր թեկնածուներին միաժամանակ դեմ տրված ձայներն ավելին էին, քան ամենաշատ ձայները ստացած թեկնածուին տրվածը: Ընտրություններն հետաձգվում էին 60 օրով, եթե թեկնածուներ չէին գրանցվել կամ ընտրատարածքում գրանցվել էր միայն մեկ թեկնածու կամ ֆեդերալ ընտրական տարածքում գրանցվել էր թեկնածուների մեկ ֆեդերալ ցուցակ:

Ընտրված էին համարվում ամենաշատ իրական ձայները ստացած թեկնածուները:

Համադաշնակցային, ընտրատարածքային, համամասնական ընտրակարգով 5% - ից ավելի ձայներ ստացած ցուցակների միջև մանդատները բաշխվում էր տրված իրական ձայների համամասնորեն հետևյալ սկզբունքով՝ ընտրատարածքում ցուցակներին տրված իրական ձայները բաժանվում էր ընտրատարածքում բաշխվող մանդատների թվի վրա, իսկ յուրաքանչյուր մանդատ ստացող ցուցակին տրված ձայները բաժանվում էին վերը ստացված թվի վրա, արդյունքում ստացված ամբողջ թիվը հանդիսանում էր ցուցակին հասանելիք մանդատների թիվը: Մնացած մանդատները, ըստ մնացորդների բաշխվում է՝ մնացորդը բաժանելով մնացորդն ընդգրկող թվի վրա և արդյունքում ստացված թվերի մեծության համապատասխան տրվում մանդատ:

Ռուսաստանում այժմ անցել են ամբողջությամբ համամասնական ընտրական համակարգով ընտրությունների միջոցով Պետդումայի կազմավորման տարբերակին:

ԼԻՏՎԱ ¹⁰

Լիտվայի պառլամենտի նոր ընտրություններում կիրառվում է մեծամասնական և համամասնական ընտրակարգերը, ընդ որում 71 պառլամենտականներն ընտրվում են մեծամասնական ընտրակարգով, ընտրատարածքում ընտրությունների մասնակիցների կեսից ավելիի ձայները ստանալու պայմանով, եթե ընտրություններին մասնակցել է ընտրողների 40% ից ավելին, ընտրությունները չկայանալու դեպքում անցկացվում են կրկնական ընտրություններ: Ընտրությունները կայանալու և պատգամավոր չընտրվելու դեպքում առաջին 2 թեկնածուների համար երկու օրվա ընթացքում անցկացվում են կրկնական ընտրություններ:

Մնացած 70 պատգամավորներն ընտրվում են 1 բազմամանդատ ընտրատարածքից համամասնական ընտրակարգով: Համամասնական ընտրակարգով ընտրությունները համարվում են կայացած, եթե դրան մասնակցել են ընտրողների 25 %-ից ավելին, իսկ մանդատները տրված ձայներին համամասնորեն բաշխվում են այն ցուցակների միջև, որոնց օգտին քվեարկել են մասնակիցների 4%-ից ավելին:

Ընտրողն ունի մեկ ձայնի իրավունք՝ միամանդատ ընտրատարածքից պատգամավոր ընտրելու և մեկ ձայնի իրավունք՝ բազմամանդատ ընտրատարածքում ցուցակներից մեկի օգտին քվեարկելու համար:

ԷՍՏՈՆԻԱ ¹¹

Էստոնիայի պետական ժողովի 101 անդամների ընտրություններում կիրառվում է հարաբերական մեծամասնական և համամասնական նախապատվության, ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով ընտրական համակարգը: Ընտրություններն անց են կացվում 12 բազմամանդատ ընտրատարածքներում: Առանձին և ցուցակներով առաջադրված թեկնածուներից ընտրված են համարվում նրանք, ովքեր ստացել են ընտրատարածքի յուրաքանչյուր մանդատի համար հաշված (իրական ձայները բաժանած ընտրատարածքին հասանելիք մանդատների թվին) պարզ քվոտային հավասար կամ ավելի ձայներ:

Ընտրատարածքի ցուցակին հասնում է այնքան մանդատ, որքան անգամ որ ցուցակի թեկնածուների ձայների գումարի մեջ տեղա-

վորվում է պարզ քվոտան, իսկ ցուցակից մանդատներ ստանում են, ըստ հերթականության ամենաշատ ձայներ ստացած թեկնածուները: Մնացած մանդատները բաշխվում են համապետական մակարդակով, ըստ ցուցակներում թեկնածուներին տրված ձայների գումարային մեծության: Դ՝ Նոնդի մոդիֆիկացված սկզբունքի համաձայն, այն ցուցակների միջև, որոնց բոլոր թեկնածուների ստացած ձայների գումարն ավելին է էստոնիայում տրված ձայների 5% - ից կամ այդ ցուցակից ընտրվել է երեք և ավելի թեկնածուներ:

Քվեաթերթիկում գրանցվում են առանձին և ցուցակներով առաջադրված բոլոր թեկնածուների տվյալները համապատասխան գրանցման (ռեգիստրացիոն) համարներով: Ընտրողը քվեա-թերթիկի համապատասխան տեղում դնում է այն թեկնածուի ռեգիստրացիոն համարը, որին կողմ է քվեարկում:

ԼՍՏՎԻԱ ¹²

Լատվիայի 100 անդամանոց Մեյմի ընտրություններում կիրառվում է ըստ ցուցակների նախապատվության, յուրաքանչյուր ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով համամասնական ընտրական համակարգը:

Ընտրություններն անց են կացվում ըստ 5 բազմամանդատ ընտրատարածքների: Յուրաքանչյուր ընտրատարածքում ընտրվողների՝ ընտրատարածքին հասանելիք մանդատների, թիվը որոշվում է հետևյալ կերպ. Լատվիայի բոլոր ընտրողների թիվը բաժանվում է 100-ի, իսկ յուրաքանչյուր ընտրատարածքի ընտրողների թիվը բաժանվում է ստացված թվի վրա, արդյունքում ստացված ամբողջ թիվն էլ հանդիսանում է ընտրատարածքին հասանելիք մանդատների թիվը: Եթե բոլոր ընտրատարածքներին հասանելիք մանդատների թվերի գումարը ստացվում է պակաս 100-ից, ապա ընտրատարածքներում ըստ մնացորդների մեծության ավելացվում է մեկական մանդատ:

Գլուխ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆՉ 1999 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ^{13; 14}

ՀԽՄՀ, հետագայում վերափոխված Հայաստանի Հանրապետության, Գերագույն Խորհրդի 1990 թվականի ընտրությունների հիմքում դրվեց ընտրողի մեկ ձայնի իրավունքի սկզբունքով, 50% քվորումի սահմանմամբ, միամանդատ, բացարձակ մեծամասնական ընտրական համակարգը¹³, որը գործեց է մինչև 1995 թվականը:

Բացարձակ մեծամասնական ընտրական համակարգի կիրառման, սահմանված քվորումի՝ տվյալ դեպքում ընտրությունները կայանալու համար ընտրատարածքի ընտրողների կեսից ավելիի մասնակցության անհրաժեշտության, ընտրություններին մասնակցելն օրենքով պարտադրված չլինելու և ընտրողների նվազող ակտիվության պատճառով մի շարք ընտրատարածքներում ընտրությունները շարունակաբար կրկնվում էին:

1994-95թթ. քննարկվեց Ազգային Ժողովի պատգամավորների ընտրությունների մասին օրենքի 2 նախագիծ: ¹⁴

Թե ինչպիսին էր Գերագույն Խորհրդում ընտրությունների մասին նորմալ օրենքի ընդունման և ժողովրդավարական ընտրություններով պրոֆեսիոնալ պառլամենտ ձևավորելու հարցում շահագրգռվածությունը, ցույց տվեց ընտրությունների մասին ընդունված օրենքը: Բայց...

Ակնհայտ է, որ ընտրությունների մասին օրենքը կարևորագույն իրավաբաղաքական օրենքներից և ժողովրդավարության կարևորագույն չափանիշներից մեկն է:

Իսկ այս կամ այն ընտրակարգերով ու ընտրական նորմերով անցկացվող արդար և մաքուր ընտրությունները ժողովրդավարության զարգացման մակարդակի կարևորագույն ցուցանիշներից մեկն է:

Եթե նկատի ունենանք, որ ընտրությունների ժամանակ խաղաքարտի վրա է դրվում չափազանց կարևոր մի արժեք՝ իշխանություն, ապա կարծես պարզ կդառնա, թե նրանք ումից որ կախված է խաղի կանոնների հաստատումը, ինչո՞ւ են ձգտում, ըստ կանոնների, իրենց վերապահել որոշակի արտոնություններ, խաղն ավելի հեշտ շահելու, այն է՝ իշխանությունն ավելի հեշտ ձեռք բերելու կամ այն պահելու համար: Իսկ նպատակն արդարա-

ցնելու համար միշտ էլ կգտնվեն պատճառաբանություններ, փաստարկներ ու շեշտադրումներ՝ իբր այլ նկատառումներ հաշվի առնող:

Ինչևէ, եթե հարցին մոտենանք առավել իրատես, ապա կարելի է նշել այն հիմնական դրդապատճառները, որոնցով հիմնականում առաջնորդվում են պատգամավորները, պատգամավորական խմբերն ու Խմբակցությունները՝ ընտրությունների մասին օրենքի այս կամ այն նախագիծը պաշտպանելիս, իսկ դա բնական է, գուցե և ոչ այնքան էլ բարոյական, բայց և այնպես հիմնական դրդապատճառներն անձնական, կուսակցական ու խմբակային շահերն են:

Նշվածի լավագույն ապացույցը ընտրությունների մասին օրենքի նախագծերի քննարկումներն էին: Եթե սկզբում քննարկվում էր սկզբունքայնորեն իրարից տարբերվող 2 նախագծեր, որոնք են՝ 1-ին միամանդատ մեծամասնական և կապված ցուցակներով համամասնական ընտրական համակարգերի համադրությամբ ընտրությունների մասին օրենքի նախագիծը, 2-րդ՝ բազմամանդատ մեծամասնական ընտրական համակարգով ընտրությունների մասին օրենքի նախագիծը, ապա վերջում քննարկմանը թողնվեց միայն առաջին տարբերակը: Չնայած ռեյտինգային քվեարկության արդյունքներով 2-րդ նախագիծը 70 ից ավելի շատ ձայներ էր ստացել առաջինի մոտ 40 ձայների դիմաց, բայց և այնպես, թե իշխող և թե ընդդիմադիր կուսակցությունների, ավելի ճիշտ նրանց ղեկավարների տվյալ հարցում համընկնող շահերից բխող 1-ին նախագիծը պետք է որ Գերագույն Խորհրդում ավելի հեշտ անցնելու հնարավորություն ձեռք բերեր: Չնայած 2-րդ նախագիծը որոշ պատգամավորների պնդմամբ ստացավ չնչին՝ այն է 10 քույեանոց ելույթի կարգով ներկայացվելու հնարավորություն, բայց և այնպես 2-րդ նախագծի 2-րդ անգամ պատշաճ ձևով ներկայացվելու դեմ, ակնհայտաբար խոչընդոտներ դրվեցին թե իշխող կուսակցության ղեկավարների և թե ընդդիմադիր կուսակցությունների կողմից, որը հնարավոր է որ ինչ որ չափով ազդեց ընտրական համակարգերի վերաբերյալ ռեյտինգային քվեարկության արդյունքների վրա:

Բազմամանդատ մեծամասնական ընտրական համակարգով ընտրությունները պատգամավորների մեծամասնությանը ձեռք չէր տալիս, իսկ ժողովրդին...

1995թ. ընտրություններն անցան համամասնական և միամանդատ մեծամասնական ընտրական համակարգերի

համադրությամբ ընտրությունների մասին օրենքով: ^{14.1}

1996թ. տեղի ունեցան նախագահական ընտրություններ: ^{14.2}

Երկու ընտրություններում էլ իշխանությունների կազմավորման հարցը լուծվեց ոչ թե ընտրողների քվեներով, այլ իշխանությունների ցանկությամբ հանձնաժողովների որոշմամբ: ^{14.3 ; 14.4 ; 14.5} Չնայած ընտրողների քվեները մեծամասամբ հաշվի առնվեց Ազգային Ժողովի ընտրություններում:

1998-1999թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ¹⁵

Հանրապետության նախագահի և նրա հետ միասին Ազգային ժողովի ղեկավարի և կառավարության կազմի նրանց բոլոր թիմակիցների հրաժարականը փոխեց իրադրությունը:

Պատգամավորների զգալի մասը փոխեց կուսակցական պատկանելիությունը: Իսկ պառլամենտը շարունակեց իր աշխատանքը: Իրադրությունն այլ էր, իշխանության ներկայացուցիչների մի մասը փոխվել էր՝ համակարգը՝ ոչ: Պատգամավորների մի մասը, որոնք մեծամասնության մեջ էին, հայտնվել էին ընդդիմության մեջ, իսկ ընդդիմադիր մի շարք քաղաքական գործիչներ իշխանության կողքին էին:

Ընդունվել էր ընտրական նոր օրենսգիրք, բայց ընտրական համակարգը պահպանվել էր: Ընտրությունների արդյունքները նորից մեծամասամբ կախված էին ընտրական հանձնաժողովներից, այլ ոչ թե ընտրողներից:

Ընտրություններն անցան նոր ընտրական օրենսգրքով: ^{15.1}

Ըստ օրենսգրքի՝ համամասնական և միամանդատ մեծամասնական ընտրակարգերի համադրությամբ ընտրությունները, ըստ որի Ազգային Ժողովի 131 պատգամավորներից 56 պատգամավոր ընտրվելու են կուսակցություններին տրված ձայներին համամասնորեն, կուսակցությունների կողմից առաջադրված ցուցակներում ընդգրկված պատգամավորության թեկնածուների թվից, Հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից համամասնական ընտրական համակարգով: Իսկ մյուս մասը՝ 75-ը՝ համապատասխան թվով ընտրատարածքներից, առանձին առաջադրված ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների թվից, միամանդատ հարաբերական մեծամասնական ընտրական համակարգով:

Ա. համամասնական ընտրակարգերը ենթադրում էին.

- 1) Ըստ ընտրությունների արդյունքների պատգամավորական տեղերը կամ, որ նույնն է՝ մանդատները օրենքով հատկացվում էին կուսակցություններին:
- 2) Մանդատները տրվում էին վավեր ձայների 5%-ից ավելի ձայներ ստացած կուսակցություններին:
- 3) Քվեարկվում էին կուսակցությունները, որոնք հանդես էին գալիս իրենց թեկնածուների ցուցակներով, իսկ ցուցակների առաջադրումը պետք է պաշտպանվեր առնվազն 30000 ընտրողների կողմից:
- 4) Յուրաքանչյուր ընտրող իրավունք ունի քվեարկելու միայն մեկ կուսակցության օգտին:
- 5) Կուսակցությունների ստացած մանդատները համապատասխանաբար տրվում էին կուսակցությունների ցուցակներում գրանցված թեկնածուներին, ըստ գրանցման հերթականության:
- 6) Մանդատները 5% - ից ավելի ձայներ ստացած կուսակցությունների ցուցակների միջև բաշխվում էին ըստ դրանց ստացած ձայների՝ նրանց օգտին տրված ձայներին համամասնորեն: Յուրաքանչյուր ցուցակին կողմ տրված ձայների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ տրված ձայների ընդհանուր թվի վրա և առանձնացվում էին ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր ցուցակին հասանելիք մանդատների թվերն են: Մնացած մանդատները բաշխվում էին ըստ մնացորդի մեծության մեկական մանդատ սկզբունքով:

Բ. մեծամասնական ընտրակարգերը ենթադրում էին.

- 1) Հանրապետության տարածքը բաժանվում է համապատասխան թվով ընտրատարածքների:
- 2) Յուրաքանչյուր ընտրատարածքից ընտրվում է Ազգային Ժողովի մեկ պատգամավոր: Թեկնածուներ առաջադրում էին կուսակցությունները և ընտրատարածքի 50 ընտրողները, առաջադրումը պետք է պաշտպանվի առնվազն 500 ընտրողների կողմից:
- 3) Ընտրողը քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:
- 4) Ընտրված է համարվում առավելագույն կողմ ձայներ ստացած թեկնածուն:

Գ. Ընտրական հանձնաժողովները կազմավորվում էին հետևյալ կերպ.

- 1). կենտրոնական և մարզային ընտրական հանձնաժողովները կազմավորվում էին կառավարության կողմից նշանակված 3 անդամից, Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, դաշինքի նշանակած մեկական անդամներից, էթե նրանք ներկայացրել էին համամասնական ընտրություններին մասնակցելու հայտ և իրենց առաջադրումը պաշտպանող 30000 ստորագրություն և Ազգայն ժողովում խմբակցություն չունեցող, առնվազն 30000 ստորագրություն ներկայացրած, ամենաշատ ստորագրություն հավաքած առաջին 5 կուսակցությունների նշանակած մեկական անդամներից.
- 2). տեղամասային հանձնաժողովների անդամներին նշանակում էին մարզային ընտրական հանձնաժողովի անդամները՝ յուրաքանչյուրը մեկ անդամ.
- 3). հանձնաժողովի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում էին համապատասխան հանձնաժողովի անդամների ձայների երկու երրորդով կամ հանձնաժողովի անդամին նշանակողի որոշմամբ:
- Դ.** Ընտրողների ցուցակները կազմում էին համայնքի ղեկավարները ըստ բնակության վայրի հաշվառման:

Նոր ընտրական օրենսգրքով անցկացվեցին նոր ընտրություններ: 1998թ. տեղի ունեցան արտահերթ նախագահական ընտրություններ, իհարկե ընտրակեղծիքներով և ամենակարևորն է սահմանադրական նորմի խախտմամբ: Նախագահ դարձավ նա, ով ըստ սահմանադրության Հոդված 50-ի^{15,2} <<Հանրապետության նախագահ կարող է ընտրվել վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք>>, թեկնածու առաջադրվելու իրավունք չունեք: Ընդ որում՝ այդ ամենը տեղի ունեցավ այսպես կոչված քաղաքական էլիտայի, այդ թվում նաև մրցակցող թեկնածուների և հասարակության զգալի հատվածի, համաձայնությամբ և թողտվությամբ և ամենակարևորը դատարանի որոշմամբ, նույնիսկ առանց հաշվի առնելու, որ միջազգային հանրությանը Հայաստանի կողմից ներկայացվող ու պաշտպանվող այլ՝ թեկուզ և

միջազգայնորեն չճանաչված պետության, վերջին ոչ պակաս քան 6 տարիների նախագահը, չէր կարող վերջին տասը տարում մշտապես բնակվել Հայաստանի Հանրապետությունում: Քաղաքական գործիչների զգալի մասը, ովքեր հանդես էին գալիս իբր արդար և օրինական ընտրությունների կողմնակիցներ, պաշտպանեցին անօրինականություններն ու ընտրակեղծիքները: Իսկ երկրում օրինականության և արդարության պաշտպանությանը կոչված պետական մարմինները նպաստեցին անօրինական իշխանության կազմավորմանը:

1999թ. կազմավորվեց Ազգային ժողով: Ասել թե առանց ընտրակեղծիքների, անխղճություն կլինի, բայց ընտրողների քվեներն ավելի շատ հաշվի առնվեցին:

1999թ. հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովի նիստի ժամանակ ահաբեկության գոհ դարձան Ազգային ժողովի ղեկավարությունը և վարչապետը: Որոշ ժամանակ անց փոխվեց կառավարության կազմը: Պատգամավորների զգալի մասը փոխեց կուսակցական պատկանելիությունը:

2003թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ^{16:17}

2002 թվականին ընդունվեց ընտրական նոր օրենսգրքը: Փոխվեցին համամասնական և մեծամասնական ընտրակարգերով բաշխվող մանդատների թվերը, համապատասխանաբար համամասնական ընտրակարգով բաշխվող մանդատների թիվը 56-ից դարձավ 75, իսկ մեծամասնականինը 75-ից՝ 56, այսինքն՝ ըստ նոր օրենսգրքի Ազգային ժողովն ընտրվում էր համամասնական և միամանդատ մեծամասնական ընտրակարգերի համադրությամբ ընտրություններով, ըստ որի Ազգային ժողովի 131 պատգամավորներից 75 պատգամավոր ընտրվելու էին կուսակցություններին տրված ձայներին համամասնորեն, կուսակցությունների կողմից առաջադրված ցուցակներում ընդգրկված պատգամավորության թեկնածուների թվից, հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից համամասնական ընտրական համակարգով: Իսկ մյուս մասը, 56-ը համապատասխան թվով ընտրատարածքներից, առանձին առաջադրված Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների թվից, միամանդատ հարաբերական մեծամասնական ընտրական համակարգով:

Սահմանվեց ընտրական հանձնաժողովների կազմավորման

կարգ, ըստ որի կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են գործող կամ արձակված Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների), մշտապես գործող մարմնի (մարմինների) վավերացրած որոշմամբ նշանակված մեկական անդամից և Հանրապետության նախագահի նշանակած 3 անդամից: Իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ յուրաքանչյուրը նշանակում է մեկ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ:

Բացի վեր նշվածից և ոչ այլ էական նշանակություն ունեցող կամ վատ առումով նշանակություն ունեցող փոփոխություններից, ընտրական համակարգն հիմնականում պահպանվեց, ընտրությունների արդյունքները նորից մեծամասամբ կախված էին իշխանություններից, ընտրական հանձնաժողովներից, թաղային ու փողային հեղինակություններից, այդ թվում նաև իրավապահ մարմիններից: Իսկ ընտրությունների արդյունքների կախվածությունն ընտրողների իրական քվեներից ապահովվելու էր այնքանով, որքանով ընտրակեղծիքների դեմ կազմակերպված դիմադրողականության ուժի հնարավորություններն այն կկարողանային ապահովել սա առաջին և երկրորդ՝ որքանով, որ դա ձեռնտու կլիներ իշխանության լծակներին տիրապետողներին: Իսկ իշխանությունների կազմավորումը տեղի էր ունենալու ոչ թե ընտրողների իրական քվեների արդյունքներին համապատասխան, այլ իշխանապահպանական և իշխանափոխական ուժերի ու նրանց կողմնակիցների ոչ արդար պայքարի արդյունքում ձևավորված արդյունքներին համապատասխան:

2002թ-ին անցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, 2003թ.-ին նախագահական և Ազգային ժողովի ընտրությունները: Ազատ և արդար ընտրությունների մասին խոսելն ավելորդ է: Եղան առավել մեծամասշտաբ, բացահայտ, չքողարկված ու հիասթափեցուցիչ ընտրակեղծիքներով ընտրություններ նաև ըստ Եվրոպայի խորհրդի խորհրդա-րանական վեհաժողովի (ԵԽՄԿ), Եվրամիության դիտորդական առաքելության հայտարարությունների, ԱՄՆ պետդեպարտա-մենտի գնահատականի: 16.1; 16.2; 16.3; 16.4; 16.5; 16.6; 16.7

Իշխանությունները կազմավորվեցին ընտրակաշառքների

կիրառմամբ, հանդուգն ու բացահայտ ահաբեկչությամբ ու ընտրակեղծիքներով ընտրություններ կոչված միջոցառման միջոցով:

Եթե նույնիսկ ուշադրություն չդարձնենք նկատված, գրանցված ու հրապարակված ընտրակեղծիքների վերաբերյալ փաստերին, ապա ընտրությունների պաշտոնապես հրապարակված արդյունքների պարզ թվաքանական վերլուծությունն իսկ խորը կասկած է առաջացնում քվեարկության իրական արդյունքների ու հրապարակված արդյունքների համապատասխանության հանդեպ:

Ինչպես նաև կասկածելի է այն, որ օրվա որոշակի կարճ ժամանակում ընտրողների այնպիսի մասնակցություն է հայտարարվել, որն իրականում անհնար է, քանզի ընտրատեղամասերում ֆիզիկապես չէին կարող ապահովել նման մասնակցության հնարավորություն: Օրինակ՝ հանրապետության տարածքում քվեարկության մասնակիցների թիվն ասենք, մի քանի ժամում չէր կարող կրկնապատիկ կամ եռապատիկ անգամ գերազանցել բոլոր տեղամասերի հնարավոր առավելագույն թողունակությամբ պայմանավորված թիվը:

Իրականում քվեարկությունների արդար, օրինական, առանց կեղծիքների անցկացման ու ձայներն արդար հաշվելու դեպքում տեղամասում անճշտություններ չպետք է լինեին, այլապես կեղծիքներ են եղել կամ տեղամասային, տարածքային, ընտրական հանձնաժողովներն անփույթ են եղել: Իսկ կենտրոնական ընտրական հանձնաժողովին չի էլ հետաքրքրել պատճառները: Երկու դեպքերում էլ քվեարկության իրական արդյունքների խեղաթյուրման փաստն առկա է:

Մինչդեռ ազատ և արդար ընտրությունները ենթադրում են թեկուզև մեկ ձայնի կեղծման բացառում, իսկ կեղծման դեպքում՝ կեղծիքի հեղինակի բացահայտում: Չնայած՝ ի նչի մասին է խոսքը, երբ ընտրակեղծիքներն մեծածավալ են լինում, իսկ այն իրականացնողները՝ մեծաքանակ:

Ստորև ներկայացվում է պաշտոնապես հրապարակված, նախագահական և Ազգային ժողովի ընտրությունների տվյալների վերլուծությունն ու ընտրական թվերի միջև առկա անհամապատասխանությունները, որոնք չպետք է լինեին, եթե քվեարկությունները չկեղծվեին, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփվեին առանց կեղծիքների: 17.1; 17.2

Նախագահական ընտրությունների առաջին փուլում, ըստ

կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների, ք. Երևանի Ավան ընտրատարածքում մինչ քվեարկության ավարտը ընտրողների մասնակցությունը եղել է 62,44%, իսկ քվեարկության ավարտից հետո մասնակցությունը նվազել է 56,86%, Էրեբունի ընտրատարածքում 62,89%-ից նվազել է 62,51%: Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների Գեղարքունիքի մարզում մինչ քվեարկության ավարտը ընտրողների մասնակցությունը եղել է 71,63%, իսկ քվեարկության ավարտից հետո մասնակցությունը նվազել է 71,43%, Սևանում 76,59%-ից նվազել է 71,38%, առնվազն անհասկանալի է, թե ինչպես կարող էր մասնակիցների թիվը նվազել:

Տեղամասում մարված ու օգտագործված քվեաթերթիկների թվերի գումարը պետք է հավասար լինի տեղամասի ստացած քվեաթերթիկների թվին, այլապես քվեաթերթիկներն օգտագործվել են անօրինական կամ տեղամասային ընտրական հանձնաժողովն անփույթ է եղել: Երկու դեպքում էլ անճշտություններ են արձանագրվում:

Նախագահական ընտրությունների առաջին փուլում պաշտոնապես հրապարակված տվյալների համաձայն, ըստ տեղամասերի ընտրական թվերի միջև անհամապատասխանություններ կան 306 տեղամասերում, իսկ անհամապատասխանությունների գումարային ընդհանուր թիվն ավելին է քան 5658-ը:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում 226 տեղամասերում անհամապատասխանությունների գումարային ընդհանուր թիվն ավելին է, քան 1574-ը:

Ազգային ժողովի համամասնական ընտրությունների արդյունքում 346 տեղամասերում անհամապատասխանությունների գումարային ընդհանուր թիվն ավելին է, քան 5806-ը:

Տեղամասում ընտրություններին մասնակցած ընտրողների և ընտրական ցուցակներում ստորագրած ընտրողների թիվը չպետք է պակաս լինի քվեատուփում եղած քվեաթերթիկների թվից: Սակայն նախագահական ընտրությունների առաջին փուլում, ըստ տեղամասերի, նման անհամապատասխանություններ կան 124 տեղամասերում, իսկ անհամապատասխանությունների գումարային ընդհանուր թիվն ավելին է, քան 4782-ը:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում 72 տեղամասերում անհամապատասխանությունների գումարային ընդհա-

նույն թիվը 1816-ն է:

Ազգային Ժողովի համամասնական ընտրությունների 346-ից ավելի տեղամասերում անհամապատասխանությունների գումարային ընդհանուր թիվն ավելին է, քան 3305-ը:

Նախագահական ընտրությունների առաջին փուլում պաշտոնապես տարբեր թվեր հայտարարված անձնությունների թիվն իբր կազմել է 2536, իսկ իրականում այն, ըստ տեղամասերի, կազմում է 11460-ը: Անձնություններ արձանագրած տեղամասերի թիվը կազմում է 435-ը:

Ի դեպ, ըստ ընտրական օրենսգրքի Հոդված 86-ի Հանրապետության նախագահի ընտրությունը ցանկացած փուլում անվավեր է ճանաչվում, եթե

1) թեկնածուի օգտին տրված ձայների քանակի վրա ազդող անձնությունների չափը գումարային առումով էպպես ազդում է ընտրության արդյունքի վրա, այն է՝ հնարավոր չէ վերականգնել ընտրության իրական արդյունքները և պարզել ընտրված թեկնածուին,

2) ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա: ^{15.1; 16.2}

Թողնենք նշված հոդվածի երկրորդ մասը, ըստ պաշտոնական տվյալների թեկնածուների օգտին տրված ձայների քանակը կազմում է 1416357, երկրորդ փուլ անցած թեկնածուներից ամենաշատ ձայներ ստացած թեկնածուի օգտին տրված ձայների քանակը կազմում է 701462, այսինքն՝ նա ընտրված կլիներ եթե նրա օգտին հաշվարկված ձայների քանակը լիներ (1416375/2)-ից ավելին կամ 708188, եթե նույնիսկ ըստ տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունների անձնությունների թիվը կազմեր (708188-701462) - ից ավելին, այն է 6727, ապա անձնություններ արձանագրած տեղամասերում քվեարկության արդյունքները պետք է ստուգվեին, իսկ եթե հնարավոր չլիներ վերականգնել ընտրության իրական արդյունքներն, ապա ըստ օրենսգրքի, կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ընդուներ որոշում ընտրությունն անվավեր ճանաչելու մասին: Պատշաճ ստուգումներ չեղան, եղավ երկրորդ փուլ:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում 313 տեղամասերի անձնությունների թիվն է 3638-ը:

Ըստ հրապարակված տվյալների 190 տեղամասերից երկուական

և ավելի տեղամասեր գտնվել են նույն հասցեով շենքերում, որոնց թիվը կազմել է 94-ը: Իսկ փոքր բնակավայրերի հարևան տեղամասերում և նույն հասցեում գտնվող տեղամասերում ընտրությանը մասնակցած ընտրողների թվերի համեմատությունը ցույց է տալիս, որ 10% - ից ավելի մասնակցության տարբերություն կա: Նախագահական ընտրությունների առաջին փուլում ոչ պակաս, քան 60 հասցեում, նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ոչ պակաս, քան 80 հասցեում:

5%-ից ավելի մասնակցության տարբերություն կա նախագահական ընտրությունների առաջին փուլում ոչ պակաս քան 107 հասցեում, նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ոչ պակաս, քան 145 հասցեում:

Նախագահական ընտրությունների առաջին փուլում արձանագրվել է 100% մասնակցություն 7 տեղամասերում:

Նախագահական ընտրությունների առաջին փուլում արձանագրվել է 90%-ից ավել մասնակցություն 96 տեղամասերում, երկրորդ փուլում 147 տեղամասերում, առաջին փուլում արձանագրվել է 80%-ից ավել մասնակցություն 305 տեղամասերում, երկրորդ փուլում 455 տեղամասերում: Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ընտրողների ընդհանուր թիվն ավելացել է 13500-ից ավելի ընտրողներով՝ մոտ 0,6%-ով, իսկ մասնակցությունը 132200-ից ավելի ընտրողներով՝ մոտ 10%-ով: I-ին և II փուլերի ժամանակահատվածում տեղամասերի բացարձակ մեծամասնությունում ընտրողների թվերը փոփոխվել են:

Չեն համապատասխանում 2003 թվականին միաժամանակ անցկացված հանրաքվեի և ընտրության ընտրողների ընդհանուր և քվեարկության մասնակիցների թվերը: ^{17.1}

Ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների Ազգային Ժողովի համամասնական ընտրությունների մասնակիցների ընդհանուր թիվը հանրապետությունում կազմում է 1197075:

Արձանագրվել է 100% և ավելի մասնակցություն 10 տեղամասերում, 90%-ից ավել մասնակցություն 181 տեղամասերում, 80%-ից ավել մասնակցություն 318 տեղամասերում:

Քվեարկված 21 կուսակցություններից բոլոր կուսակցությունների օգտին տրված ձայների ընդհանուր (1163536) և պաշտոնապես հայտարարված անձնությունների թվի (8582) գումարի առնվազն 5% ձայներ հաշվարկվել է 6 կուսակցությունների համար:

Հայաստանի Հանրապետական կուսակցություն 270829 (23 մանդատ)
 Արդարություն դաշինք 160796 (14 մանդատ)
 Օրինաց երկիր 146035 (12 մանդատ)
 Հայ Յեղափոխական Դաշնակցություն 130596 (11 մանդատ)
 Ազգային միաբանություն 103938 (9 մանդատ)
 Միավորված աշխատանքային կուսակցություն 67863 (6 մանդատ)

Իսկ հաջորդ ամենաշատ ձայներ ստացած կուսակցության քվեների թիվն հավասար է 53909-ի:

Ի դեպ, եթե ընտրություններում անճշտություններ չլինեին, ապա ներկայցված տվյալների համաձայն, մանդատների բաշխումը կարող էր լինել այլ կերպ կամ եթե անճշտությունների ազդեցությունը ճշգրիտ հաշվի առնվեր, ապա մանդատների բաշխման հարաբերակցությունը կփոխվեր: Իսկ դա նշանակում է, որ ընտրությունները կեղծված են և այդկեղծիքներն ազդել էին քվեարկության արդյունքների վրա:

Ազգային Ժողովի համամասնական ընտրությունների արդյունքներում, ըստ տեղամասերի անճշտություններ, կան 587-ից ավելի տեղամասերում, իսկ անճշտությունների գումարային ընդհանուր թիվն է 10424-ը:

Ազգային Ժողովի համամասնական և մեծամասնական ընտրությունների ընտրողների մասնակցության թվերն, ըստ ընտրատարածքների պետք է որ իրար համապատասխանեն, սակայն 5 ընտրատարածքներում մեծամասնական ընտրությունների մասնակիցների թիվը 13573-ով ավել է համամասնական ընտրությունների մասնակիցների թվից, 41 ընտրատարածքներում համամասնական ընտրությունների մասնակիցների թիվը 49082-ով ավել է մեծամասնական ընտրությունների մասնակիցների թվից: Ստացվում է, որ 46 ընտրատարածքներում մասնակցության թվերն իրարից տարբերվում են և տարբերությունների բացարձակ թվերի գումարը կազմում է 62655: Նշված թվերը պարզապես չէին կարող չազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ըստ ընտրական օրենսգրքի Հոդված 115-ի 7-րդ կետի, Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ընդհանուր առմամբ ընտրական թվաբանական անհամապատասխանությունների գումարն, ըստ տեղամասերի՝

ա) Նախագահական ընտրությունների առաջին փուլում, 435 տեղամասերում, կազմել են 11460 -ը

բ) Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, 313 տեղամասերում, կազմել են 3638-ը

գ) Ազգային ժողովի համամասնական ընտրություններում, 587 տեղամասերում, կազմել են 10424-ը, առանց արտերկրի տվյալներն հաշվի առնելու:

դ) Ազգային ժողովի նույն տեղամասերով ու ընտրատարածքներով միաժամանակ անցկացված համամասնական և մեծամասնական ընտրություններում, 56 - ից 46 ընտրատարածքներում արձանագրվել է մասնակցության թվերի տարբերություն 62655-ով, որը կազմում է մասնակիցների 5.2%-ը:

Կարծում եմ՝ թվարկածը բավարար է եզրակացությունների համար, հիմնականում այն առումով, որ նույնիսկ ընտրական թվաբանական սխալները ցույց են տալիս, թե ինչպիսի ընտրություններ են եղել իրականում և ինչպիսի վերաբերմունք է դրսևորվել քվեարկության արդյունքների ամփոփման հանդեպ:

Իհարկե, ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել խախտումներ, որը չի ժխտվում ոչ մեկի կողմից:²¹

Առավել մտահոգիչ է այն, որ ընտրություններն անցան լրատվամիջոցների ոչ օբյեկտիվ, կողմնակալ տեղեկատվությամբ:

Քվեարկություններն անցան՝

1. Բազմաթիվ մարդկանց ընտրակեղծիքներին մասնակցելով, այլոց փոխարեն քվեարկելով ու ընտրողների ցուցակներում ուրիշների փոխարեն կեղծ ստորագրություններ դնելով, որոնց իրական չափերը բացահայտելու նպատակով ստուգումների հնարավորություններից զրկված էին շահագրգիռ կողմերն ու հասարակությունը:

2. Քվեաթերթիկների քվեատուփեր լցոնումներով:

3. Չայների որոշակի արդյունքների բավարարման նպատակով, մինչ քվեարկության ավարտը կեղծված քվեարկության արդյունքների, քվեատուփերում առկա քվեների բացահայտ կեղծ հաշվումով, նույնիսկ բացահայտ ընտրական թվաբանական անհամապատասխանությունները հաշվի չառնելով:

4. Օրենքի և օրինականության պահպանմանը կոչված կառույցների ընտրակեղծիքներին մասնակցությամբ, ընտրակեղծիքներն իրականացնողներին հովանավորելով, աջակցելով ու պաշտպանելով:

Իրականում կասկածելի մանդատների հարցը պարզելու համար նախ կարող էին ստուգվել ընտրողների ցուցակներում ընտրությունների մասնակցած ընտրողների ստորագրությունների իսկությունը, համեմատելով դրանք ընտրողների իրական ստորագրությունների անձնագրում եղած նրանց ստորագրությունների հետ: Ժամանակակից տեխնիկան այդ հնարավորությունն ընձեռում է առանց ընտրողներից յուրաքանչյուրից ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու վերաբերյալ հայտարարություն հավաքելու: Նկատի առնենք, որ բոլոր ընտրողների ստորագրությունների նմուշներն անձնագրային վարչությունում կա, իսկ մասնակցության փաստն հավաստող ստորագրություններն առկա են ընտրողների ցուցակներում, ավելին, ցուցակներում լրացվում են նաև անձնագրային տվյալները, որոնք այլոց փոխարեն քվեարկությունների դեպքերում ինչ որ չափով նույնպես կեղծված են:

Կարող էին ստուգվել քվեատուփերում առկա իրական քվեները:

Ավելին, եթե համեմատվեին բնակավայրերի բնակչության թվերի^{18.2} վերաբերյալ պաշտոնապես հրապարակված մարդահամարի տվյալները համապատասխան բնակավայրերի ընտրողների թվերի և ընտրություններին մասնակցած ընտրողների թվերի հետ^{18.1}, ապա միանգամից պարզ կդառնար, որ արձանագրվել են մասնակցության անտրամաբանական թվեր: Օրինակ՝ պարզ է, որ անհնար էր որ բնակավայրի ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը գերազանցեր համապատասխան բնակավայրի բնակչության թիվը, ներառյալ բնակավայրի երեխաները:

Մակայն պաշտոնական հրապարակված տվյալների համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ բնակավայրերում առկա են նման ակնհայտ հակասություններ:

<<armstat.am>>^{17.1} և <<Elections.am>>^{17.2} կայքերի տվյալների հիման վրա մի շարք բնակավայրերի համար կազմված աղյուսակից պարզ կերևա նման հակասությունները:

Մարզը	Բնակավայրը	Բնակչության թիվը	Նախագահական ընտրությունների		Ազգային ժողովի ընտրությունների		
			1-ին փուլ ընտրողների թիվը	2-րդ փուլ	ընտրողների թիվը	Մասնակիցների թիվը	
Արագածոտն	Վ.Սասունիկ	81	132	62	75	136	72
Արագածոտն	Սասունիկ	2239	2431	1072	1113	2426	974
Արագածոտն	Տեղեր	90	192	77	122	191	65
Արագածոտն	Ղաբաղթափա	161	162	95	74	163	63
Արագածոտն	Շամիրամ	945	984	249	307	985	150
Արարատ	Երասխավան	729	467	358	397	1160	970
Արարատ	Լակշառ	240	129	95	100	359	287
Արարատ	Լուսաշող	601	363	280	295	1264	647
Արարատ	Շաղափ	899	540	412	410	1733	830
Արարատ	Պ.Սևակ	623	348	209	229	1792	1019
Արմավիր	Մրգաստան	960	922	488	794	1045	1045
Արմավիր	Շահումյան	1119	1655	944	1142	1659	1285
Արմավիր	Զրառատ	2808	2867	1396	1359	2843	1856
Արմավիր	Փարաքար	5041	5572	3450	4063	5570	3871
Արմավիր	Արագափ	1402	835	502	510	1446	799
Արմավիր	Արգավանդ	2191	1420	791	956	2193	1289
Արմավիր	Տալվորիկ	204	1235	154	135	1238	117
Գեղարքունիք	Կուլթ	226	1706	1564	1681	1863	1860
Գեղարքունիք	Սոթք	1118	1638	1390	1246	1437	1337

Մարզը	Բնակավայրը	Նախագահական ընտրությունների				Ազգային ժողովի ընտրությունների	
		Բնակչության թիվը	ընտրողների թիվը	1-ին փուլ		2-րդ փուլ	
				Մասնակիցների թիվը	Մասնակիցների թիվը	ընտրողների թիվը	Մասնակիցների թիվը
Գեղարքունիք	Սոթք	1118	1638	1390	1246	1437	1337
Գեղարքունիք	Ազատ	165	91	76	433	286	273
Գեղարքունիք	Ն.Շորժա	44	55	44	50	56	54
Լոռի	Հալավար	98	140	125	129	137	132
Լոռի	Պուշկինո	411	639	524	541	406	287
Լոռի	Մեղվահովիտ	101	112	89	98	106	103
Լոռի	Ալավերդի	16641	16678	8747	9196	16245	9056
Լոռի	Մեծ Այրում	638	653	328	335	659	321
Կոտայք	Արտավազ	575	670	394	439	685	428
Շիրակ	Մուսայեյան	386	740	213	216	243	226
Սյունիք	Աղիտու	209	303	247	263	289	245
Սյունիք	Ղզլշուղ	147	146	98	96	151	85
Սյունիք	Նորավան	517	1263	1172	1163	436	365
Սյունիք	Դարբաս	698	747	606	574	752	604
Սյունիք	Ակներ	655	696	476	573	699	428
Սյունիք	Քարաշեն	576	1724	1586	1620	1991	1852
Սյունիք	Արավուս	168	82	79	79	1130	1070
Սյունիք	Արավուս	168	82	79	79	1130	1070
Սյունիք	Հարթաշեն	662	1434	1293	1356	1689	1426
Սյունիք	Ներքին Ննձորեսկ	184	895	806	794	1243	1243
Սյունիք	Տեղ	2333	3816	3599	3750	3629	3175
Սյունիք	Եղեգ	166	641	40	48	68	55

Մարզը	Բնակավայրը	Նախագահական ընտրությունների				Ազգային ժողովի ընտրությունների	
		Բնակչության թիվը	ընտրողների թիվը	1-ին փուլ		2-րդ փուլ	
				Մասնակիցների թիվը	Մասնակիցների թիվը	ընտրողների թիվը	Մասնակիցների թիվը
Սյունիք	Կաղնուտ	117	124	123	125	132	124
Սյունիք	Սյունիք	1023	1688	808	861	1221	1151
Սյունիք	Գեղանուշ	280	177	163	159	1534	1482
Սյունիք	Ծավ	157	1601	1416	1806	294	236
Սյունիք	Շիկահող	272	1521	1456	1848	181	143
Սյունիք	Սրաշեն	105	68	62	1308	73	72
Սյունիք	Փայախան	53	481	46	49	54	52
Սյունիք	Ճակատեն	190	117	99	102	1522	1522
Սյունիք	Ներքին Հանդ	113	1875	1751	1860	79	66
Սյունիք	Լիճք	201	410	373	374	414	379
Վայոց Ձոր	Արին	264	183	143	977	1081	1072
Վայոց Ձոր	Գնիշիկ	39	136	105	109	138	88
Վայոց Ձոր	Վարդահովիտ	94	169	106	106	161	114
Տավուշ	Լուսաձոր	624	1128	1065	1095	1131	1057
Տավուշ	Ակնաղբյուր	506	615	513	268	362	277
Տավուշ	Դիտավան	429	489	409	609	690	612
Տավուշ	Այգեպար	609	697	498	508	699	500
Տավուշ	Չինարի	1253	1286	1110	1131	1323	939
Տավուշ	Ազատամուտ	2446	2555	1291	1310	2560	1130
Տավուշ	Կողբ	4610	4851	3493	3260	5218	4952

Մտացվում է որ, նախագահական ընտրությունների առաջին փուլում ընտրողների թիվը մոտ 20000-ով ավելին է, քան բնակավայրի բնակիչներն, առնվազն 48 գյուղերում, իսկ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 12000-ով

ավելին է բնակչության թվից, առնվազն 21 գյուղերում: Եթե համարենք, որ մշտական բնակչության 70-ից 80%-ը ընտրական տարիքի քաղաքացիներ են և նրանց 70-ից 80%-ն առկա են եղել բնակավայրում ու մասնակցել են ընտրությանը, այսինքն՝ մշտական բնակչության մոտ 50-ից 60%-ը մասնակցել է ընտրությանը, ապա 100-ից մինչև 340 գյուղերում ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 25400-ից մինչև 62200-ով ավելին է, քան հնարավոր առկա ընտրողները:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ընտրողների թիվը մոտ 20000-ով ավելին է, քան բնակավայրի բնակիչներն, առնվազն 48 գյուղերում, իսկ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 15700-ով ավելին է բնակչության թվից, առնվազն 27 գյուղերում: 100-ից մինչև 430 գյուղերում ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 31100-ից մինչև 97500-ով ավելին է քան հնարավոր առկա ընտրողները: Ազգային ժողովի ընտրություններում ընտրողների թիվը մոտ 21300-ով ավելի է քան բնակավայրի բնակիչներն առնվազն 53 գյուղերում, իսկ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 13600-ով ավելին է բնակչության թվից առնվազն 32 գյուղերում: 150-ից մինչև 360 գյուղերում ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը մոտ 35100-ից մինչև 67600-ով ավելին է, քան հնարավոր առկա ընտրողները: Միայն ոչ մեծ բնակավայրերում առկա է ընտրություններին մասնակցության մոտ 10-ից 15% ով ավելի բացահայտ հավելագրում:

2005թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ^{17.1}

Նշենք 2005 թվականին ընդունված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ՀՀ օրենքով նախատեսված փոփոխություններով ու լրացումներով հանդերձ ընտրական օրենսգրքով ամրագրված մի շարք համակարգված դրույթներ ու դրանց վերաբերյալ որոշ նկատառումներ:

1. Համապատասխանաբար համամասնական ընտրակարգով բաշխվող մանդատների թիվը 75-ից դառնում է 90, իսկ մեծամասնականինը՝ 56-ից 41: Մի փոքր առաջընթաց քայլ, բայց...

2. Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի, և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները տպագրված 2 օրինակից, նաև էլեկտրոնային կրիչով, լիազոր մարմինը կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարը քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ տրամադրում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:

Չնայած այդ մասին ուղղակի չի նշվում, բայց կարծես՝ ենթադրվում էր, որ տեղամասերը պետք է ապահովված լինեն համակարգիչներով: Եթե դա այդպես լիներ, ապա դա դրական առաջընթաց էր, սակայն օրենսգրքի հետագա դրույթների համադրությունից պարզվում է, որ համակարգիչներով պետք է ապահովված լինեն միայն ընտրատարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովները:

3. Հայաստանի Հանրապետության ընտրողների գրանցամատյանում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը հրապարակվում է քվեարկության նախորդ օրը, նախորդում եղած երեք օր առաջվա փոխարեն:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մինչև ժամը 21. ը, երեքժամյա պարբերականությամբ հրապարակում է տեղեկություններ մինչև նախորդ ժամն ընտրություններին մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ տեղամասերում քվեարկությունն ավարտվում է ժամը 20.00-ին, ենթադրվում է, որ ժամը 21.00-ից ոչ ուշ հրապարակվելու են ընտրություններին մասնակցած ընտրողների թվի մասին, վերջին տվյալները: Այսինքն՝ մինչ այդ տեղամասերից պետք է ստացված լինեն քվեարկության մասնակիցների թվերի վերաբերյալ վերջնական տվյալները, որն, ըստ իս, հնարավոր է, եթե ապահովված կլինի տեղամասերի, ընտրա-

տարածքային ընտրական և կենտրոնական ընտրական հանձնաժողովների միջև ուղիղ էլեկտրոնային կապ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփումն ավարտում է ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո: Տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 28 ժամ հետո ամփոփում է համապետական ընտրությունների նախնական արդյունքները:

5. Զինվորական մասերում, կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմված և ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում:

Գուցե ազգային անվտանգության առումով իմաստ կա, բայց ընտրական գործընթացների թափանցիկության համար խոչընդոտ է: Իսկ եթե, հաշվի առնենք, որ բազմաթիվ տարբեր տեղամասերում զինվորների շրջապատույտ քվեարկության կազմակերպմամբ հնարավոր է ապահովել ցանկացած թեկնածուի ընտրվելու հնարավորություն, ապա արդար ընտրությունների մասին խոսելը, կարծես թե դառնում է անիմաստ:

6. Քվեաթերթիկը պետք է լինի դակված (պերֆորացված), պարունակի տպագրատան անվանումը: Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը: Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին: Վերջինս անջատում է քվեաթերթիկի (քվեաթերթիկների միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացվելու դեպքում) ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը հանձնում ընտրողին, ով անցնում է քվեարկության խցիկ (սենյակ) քվեարկելու:

Հանձնաժողովի քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամը քվեաթերթիկների ելունդները, կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, ըստ հերթականության դասավորում և հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վերջինս դրանք առանձին կապերով տեղադրում է չիբկիզվող պահարանում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, ըստ հերթական համարների դասավորում է օգտագործված քվեաթերթիկների ելունդները և հաշվարկում դրանց թիվը, ապա փաթեթավորում է օգտագործված քվեաթերթիկների ելունդները և կնքում փաթեթը:

Որոշակի առաջընթաց մեխանիզմ, սակայն եթե քվեարկությունից անմիջապես հետո օգտագործված քվեաթերթիկների փաթեթավորված ելունդները (համարները) և փաթեթավորված ու կնքված ընտրողների ստորագրություններով ցուցակներն անմիջապես ուղարկվեին վերադաս հանձնաժողովներ, համապատասխանաբար տարածքային ու կենտրոնական ընտրական հանձնաժողով, ապա քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում նշված փաստաթղթերի հետ տեղում հնարավոր գործառույթը կբացառվեր:

Չնայած պետք է նշվի, որ ընտրողների ցուցակներում կեղծ ստորագրությունները կարող են դրվել մինչ քվեարկության ավարտը:

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության մշտապես գործող մարմնի որոշմամբ, իսկ դաշինքի դեպքում դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների համատեղ՝ ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, նշանակված մեկական անդամից:

Հանրապետության նախագահի նշանակած մեկ անդամից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմինների առաջարկությունների հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը սահմանվում է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով:

Եթե նշանակվել է նրա անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Եթե մինչև նոր կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման վերջին օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թիվը չի նշանակվել, ապա այն մինչև սահմանված նվազագույն թիվը լրանալը նշանակում է Հանրապետության նախագահը վճռաբեկ դատարանի դատավորների թվից:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկ անդամ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով, մասնագիտական դասընթացներին մասնակցած

և համապատասխան որակավորում ստացած անձանցից, բացառությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովում վճարելի դատարանի և Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նշանակած ներկայացուցիչների, որոնք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կազմից:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կազմավորող մարմինների առաջարկությունների հիման վրա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմը սահմանվում է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ, տեղամասային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով:

Այսինքն ընտրական հանձնաժողովներում բոլոր մրցակցող կողմերին հավասար ներկայացուցչության հնարավորություն ընձեռված չէ: Նախագահին հնարավորություն է ընձեռված իր համար անցանկալի մարդկանց հանձնաժողովի կազմից դուրս թողնելու և ցանկության դեպքում, քիչ թե շատ, իր ուզած հանձնաժողովը կազմավորելու հնարավորություն է տրված: Խնդիրն այն է, որ անկախ այն բանից նախագահը քվեարկվում է թե ոչ բոլոր դեպքերում նա հանդես է գալիս, որպես մրցակցող կողմ: Առկա է դատական մարմինների ներկայացուցիչներին հանձնաժողովներում ընդգրկելու հնարավորություն, այն դեպքում, երբ դատական մարմինները պետք է լուծեն նաև հանձնաժողովների հետ կապված դատական վեճերը:

8. Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները, սոցիալական ապահովության մարմինների (ծառայությունների) աշխատակիցները: Վերոհիշյալ անձինք Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել իրենց լիազորությունները վայր դնելու դեպքում:

Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները: Վերոհիշյալ անձինք Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել իրենց լիազորությունները վայր դնելու դեպքում:

Նախկինում նշված ցուցակում էին նաև նախարարները, փոխնախարարները, Երևանի քաղաքապետը, փոխքաղաքապետը, մարզպետները, փոխմարզպետները, համայնքապետերը:

Այսինքն՝ նրանք այժմ կարող են առանց պաշտոնները վայր դնելու գրանցվել պատգամավորության թեկնածու:

9. Ազգային ժողովի պատգամավորների առաջադրման համար ընտրողների ստորագրությամբ առաջադրումը պաշտպանելու պահանջը հանված է:

10. Վստահված անձի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանող նոր հոդվածը, ընդհանուր առմամբ, ավելացրել է վերջիններիս իրավասությունները ընտրական գործառնություններում:

Սակայն օրենսգրքում ամրագրված՝ վստահված անձի իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում դրույթի, ըստ որի <<Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանա-վորելու դեպքերի: Վստահված անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել ընտրությունների ընթացքի և արդյունքների ամփոփման վերաբերյալ իր հայտնած կարծիքի համար>>, կետերն համադրելով 2003 թվականի ընտրություններում արձանագրված կալանավորման ու ձերբակալության փաստերի հետ, ապա կարելի է նշել, որ օրենսդրական որոշ բարեփոխում կա, բայց ոչ արդար ընտրությունների անցկացման օրենսդրորեն սահմանված լիարժեք երաշխիքներ:


ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2005թ. 17, 18

2005թ. տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած թվերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ համայնքներում ընտրություններն անցել են նախկին ընտրությունների նման ոչ արդար և ոչ էլ մաքուր, ավելին, եթե օրենսդրության պահանջները հաշվի առնվեին, ապա շատ ու շատ տեղերում ընտրությունները պետք է ճանաչվեին անվավեր, միմիայն արձանագրված թվերի անհամապատասխանությունների հիման վրա հաշվարկող անձնությունների կամ արձանագրված անձնությունների հիման վրա, որոնք էապես ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Մակայն նույնիսկ ընտրությունների հետ կապված դատական վեճերի հետ կապված հարցերի վերաբերյալ կայացվել են կամայական որոշումներ, որոնք չեն բխել օրենսդրության պահանջներից: Օրինակ՝ Շենգավիթի համայնքի ավագանու ընտրությունների հարցում, որտեղ նույնիսկ ընտրական հանձնաժողովը ընտրությունները ճանաչել էր անվավեր, իսկ դատարանը վավեր:²¹


Կենտրոնական ընտրական հանձնաժողովի [www. Elections.am](http://www.Elections.am)^{17.1} կայքի տվյալների հիման վրա մի քանի բնակավայրերի համար կազմված գրաֆիկական արտապատկերներից ու աղյուսակներից պարզ կդառնա վերը նշվածի իսկությունը:

Ք. Երևան Շենգավիթ համայնք 2005թ.

ընտրություններ	Ղեկավարի
բնակչությունը	140417
ընտրողների թիվը	98150
քվեաթերթիկները	100100
ստորագրությունները	29035
չօգտագործված քվեաթերթիկները	69587
ելուդների համարները	0
ելուդների թիվը	29648
քվեատուփի քվեաթերթիկները	29399
վավեր քվեաթերթիկները	27911
անվավեր քվեաթերթիկները	1488
դեմ քվեաթերթիկները	0
բոլորին կողմ քվեաթերթիկները	27911
անճշտությունները	1114
պաշտոնական անճշտությունները	991
անցած և չանցած թեկնածուների ձայների տարբերությունը	5




Ք. Երևան Շենգավիթ համայնք 2005թ



Ք. Երևան Արաբկիր Համայնք 2005թ.

Արաբկիր համայնքի ընտրություններ	Համայնքի ղեկավար առաջադրված թեկնածուի ընտրություն անվանվել է ձևաչվում, եթե ձայների քանակի վրա ազդող անձնությունների չափը բացառում է ընտրված թեկնածուին պարզելու հնարավորությունը	Համայնքի ավագանու անդամ առաջադրված թեկնածուների ընտրություն անվանվել է ձևաչվում, եթե ձայների քանակի վրա ազդող անձնությունների չափը բացառում է ընտրված թեկնածուին պարզելու հնարավորությունը	Համայնքի ղեկավարի եվկամանքի ավագանու անդամների ընտրություն անվանվել է ձևաչվում, եթե ձայների քանակի վրա ազդող անձնությունների չափը բացառում է ընտրված թեկնածուին պարզելու հնարավորությունը
համադրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը (Ա)	90274	90274	
մարված քվեաթերթիկների թիվը (Գ)	62643	62741	
քվեատուփի վավեր (Դ1)	26356	26484	
եւանվանվել (Դ2)	1298	1211	
քվեաթերթիկների թիվը գումարի (Դ) հետ:	90297	90436	
Տարբերությունը թվի բացառակալ արժեքով, նշվում է որպես առաջին անձնություն չափ:	23	162	
համադրվում է ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը (Բ)	27654	27654	0
քվեատուփի վավեր եւ անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի (Դ) հետ:	27654	27695	-41
Եթե քվեատուփի վավեր եւ անվավեր քվեաթերթիկների թվերի գումարը (Դ) մեծ է ընտրողների ցուցակում ստորագրությունների թվից (Բ), ապա տարբերությունը նշվում է որպես երկրորդ անձնություն չափ: Եթե քվեատուփի վավեր եւ անվավեր քվեաթերթիկների թվերի գումարը (Դ) փոքր է կամ հավասար ընտրողների ցուցակում ստորագրությունների թվին (Բ), ապա երկրորդ անձնություն չափը նշվում է 0:	0	41	
համադրվում է օգտագործված քվեաթերթիկների երունքների թիվը (Ե)	27654	27702	-48
քվեատուփի վավեր եւ անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի (Դ) հետ:	27654	27695	
Տարբերությունը թվի բացառակալ արժեքով, նշվում է որպես երրորդ անձնություն չափ:	0	7	
գումարվում են սույն կետի 1-ի, 2-րդ եւ 3-րդ ենթակետում նշված անձնությունների թվերը: Այդ թվերի գումարը համարվում է տվյալ տեղամասում անձնությունների չափ:	23	210	
արձանագրված անձնություն	53	427	
(կանցած-չանցած) թեկնածուների ձայների տարբերություն	10082	23	

Ք. Երևան Արաբկիր Համայնք 2005թ.



Ք. Երևան Էրեբունի համայնք 2005թ.

ընտրություններ Ավագանու Ղեկավարի



բնակչությունը	119205	119205
ընտրողների թիվը	87949	87949
քվեաթերթիկները	80007	80011
ստորագրությունները	33002	33000
չօգտագործված քվեաթերթիկները	46999	47033
եյունդների համարները	0	0
եյունդների թիվը	33004	32674
քվեատուփի քվեաթերթիկները	33037	32993
վավեր քվեաթերթիկները	32465	32305
անվավեր քվեաթերթիկները	572	688
դեմ քվեաթերթիկները	0	924
բոլորին կողմ քվեաթերթիկները	32437	31381
անձնությունները	-29	-15
պաշտոնական անձնությունները	253	411

անցած և չանցած թեկնածուների ձայների տարբերությունը 4 Մեկ թեկն.





Ք. Երևան Աջափնյակ Համայնք 2005թ

ընտրություններ	Ավագանու
բնակչությունը	106700
ընտրողների թիվը	73977
քվեաթերթիկները	78196
ստորագրությունները	27883
չօգտագործված քվեաթերթիկները	48313
ելուսղների համարները	0
ելուսղների թիվը	27883
քվեատուփի քվեաթերթիկները	27883
վավեր քվեաթերթիկները	26682
անվավեր քվեաթերթիկները	1201
դեմ քվեաթերթիկները	0
բոլորին կողմ քվեաթերթիկները	26682
անճշտությունները	2000
պաշտոնական անճշտությունները	14
անցած և չանցած թեկնածուների ձայների տարբերությունը	11



Ք. Երևան Դավթաշեն Համայնք 2005թ.

ընտրություններ	Ավագանու	Ղեկավարի
բնակչությունը	40572	40572
ընտրողների թիվը	28451	26835
քվեաթերթիկները	27500	28086
ստորագրությունները	11486	12508
չօգտագործված քվեաթերթիկները	16008	15576
ելուսղների համարները	0	0
ելուսղների թիվը	11494	11707
քվեատուփի քվեաթերթիկները	11488	11707
վավեր քվեաթերթիկները	10933	12044
անվավեր քվեաթերթիկները	555	0
դեմ քվեաթերթիկները	0	0
բոլորին կողմ քվեաթերթիկները	10943	11707
անճշտությունները	4	803
պաշտոնական անճշտությունները	28	13
անցած և չանցած թեկնածուների ձայների տարբերությունը	25	915



2005թ. ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 17:18

Անցկացվեց Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, որի արդյունքների հավաստությունը կասկածի տեղիք տվեց, ընդ որում մասնակցության չափերի վերաբերյալ կասկած հայտնեցին իշխանությունները նույնպես, բայց արդյունքները մնացին այնպես, ինչպես որ կային:

Սահմանադրական փոփոխությունները հաստատվեցին, այսինքն՝ ստացվեց այնպես, որ շատերի՝ հատկապես իբր ժողովրդավարության անհրաժեշտությունը գիտակցող շատ ու շատ կուսակցությունների և քաղաքական գործիչների մեծամասնության կարծիքով Սահմանադրական փոփոխությունները ընտրակեղծիքներով անցկացնելն առաջընթաց էր, քանզի ընդհանուր առմամբ փոփոխությունները մղված էին երկրի ժողովրդավարացմանը:

Հանրաքվեի արդյունքներ կասկածի տակ դրվեց նաև միջազգային կառույցների կողմից, բայց համարվեց, որ այն հայաստանցիների մեծամասնության կարծիքին համարժեք է: Այսինքն այն որակյալ մեծամասնության, որի քվեարկությանը մասնակցելը կասկածի տակ է դրվել: Ավելին, մեղադրվեց նաև հանրաքվեին բոյկոտ հայտարարած ընդդիմությունը ընտրակեղծիքներին նպաստելու համար:

Ինչ վերաբերում է հանրաքվեի արդյունքներին, ապա

Ընտրողների ընդհանուր թիվը, ըստ ընտրողների ցուցակների	2317462
Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված սահմանված նմուշի քվեաթերթիկների թիվը	2364469
Մարված (չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը	849466
Գրանցված և քվեաթերթիկ ստացած ընտրողների թիվը, ըստ ստորագրությունների	1514307
Անվավեր քվեաթերթիկների թիվը	20364
Օգտագործված քվեաթերթիկների ելուսղների թիվը	1514545
Յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	1411711
Կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը (մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում չի լրացվում)	1411711
Թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (լրացվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում)	82018
Վավեր քվեաթերթիկների թիվը	1493729
Անճշտությունների չափը	1582
Քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվը	1514093

653 ընտրատեղամասերի արձանագրություններում ամփոփված թվերի վերլուծությունից պարզվում է, որ միայն այդ ընտրատեղամասերից 47-ում արձանագրված անճշտությունների չափը կազմում է **2219,08** կոտորակային թիվ, որովհետև Երևանի թիվ 12/5 տեղամասում արձանագրված է 4,08 անճշտություն երևի հանձնաժողովի անդամները որոշել են կատակել կամ ցույց տալ անհեթեթության հասնող քվեարկության արդյունքներ: Իսկ ընտրական թվերի իրական անհամապատասխանությունները ըստ 190 արձանագրություններում առկա թվերի, հավասար է 65915-ի:

Նշված 653-ից 50 տեղամասերի արձանագրությունների տվյալներով քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվը 8411-ով ավելին է, քան քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը, ըստ ընտրողների ցուցակների:

Այսինքն՝ պաշտոնապես արձանագրված լցոնումները կազմում են 8411 հետևյալ տեղամասերում:

տեղամաս	ստորագրություններ ը պակաս են քվեատուփում առկա թվերներից (անվավեր-դեմ-կողմ թվերների գումարից)	տեղամաս	ստորագրություններ ը պակաս են քվեատուփում առկա թվերներից (անվավեր-դեմ-կողմ թվերների գումարից)	տեղամաս	ստորագրությունները պակաս են քվեատուփում առկա թվերներից (անվավեր- դեմ-կողմ թվերների գումարից)
1/7	1	14/30	9	20/19	3
5/5	30	16/16	600	20/30	6
5/6	158	16/23	182	20/41	30
5/8	2	16/39	100	21/17	3
5/13	10	16/47	10	21/21	1
5/14	38	17/5	1	21/27	3
6/13	100	17/9	10	21/41	748
6/18	750	17/15	7	28/19	1000
7/2	694	17/16	8	28/21	1
8/27	46	17/18	5	28/27	200
9/21	1057	17/37	60	28/28	3
11/3	6	17/40	73	36/16	455
11/9	60	17/44	1	36/20	2
13/6	36	20/5	496	36/24	109
13/32	222	20/7	41	36/25	200
14/3	1	20/12	182	36/48	47

Քվեարկվող քվեաթերթիկներից անջատվող ելունդների համարների հետ կապված թվաքանական անհամապատասխանությունները, ըստ 422 տեղամասերի արձանագրությունների կազմում է 195968:

6/13 տեղամասի արձանագրությունում լրացված չէ ընտրողների թիվը, իսկ 6/18 տեղամասի արձանագրությունում լրացված չէ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների և մի քանի այլ պահանջվող թվեր:

Ըստ վերը նշված 653 տեղամասերի արձանագրությունների 50 տոկոսից պակաս մասնակցություն է արձանագրված 107 տեղամասերում:

Իսկ ընտրողների ցուցակային թվի 1/3-ից պակաս կողմ ձայների թիվ արձանագրված է 25 տեղամասերում: Ըստ ՀՀ սահմանադրության Հոդված 113. Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդը:

2007թ. ՀՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՄԱՍԻՆ¹⁹

Հնտրական օրենսգիրքը մինչ 2007 թվականի ընտրությունները նորից ենթարկվեց փոփոխությունների:

Սակայն օրենսգրքում առկա են լուրջ թերություններ, անհասկանալիություններ և ներքին հակասություններ:

Հնտրական համակարգից ու իրավիճակից կախված, օրենսգրքում ընտրակեղծիքների գնահատման չափանիշների ու ընտրություններն անվավեր ճանաչելու համար սահմանվեցին ոչ միարժեք նորմեր, որի հետևանքով հնարավոր է ընտրությունների արդյունքներն ամփոփող, որոշում կայացնող, հաստատող ու վերանայող մարմինների սուբյեկտիվ մոտեցումները:

Ստացվում է, որ օրենսգրքում սահմանված նորմերը ընտրակեղծիքներով իշխանության կազմավորման հնարավորությունը գոնե օրենսդրորեն միանշանակ բացառելու համար լիարժեք չեն: Այն երևաց 2007 թվականի մայիսի 12ի Ազգային ժողովի ընտրություններում:

Նկատի ունենալով, որ ընտրական օրենսգիրքը ենթակա է լրամշակման, ներկայացնենք օրենսգրքի համակարգված դրույթներն ու դրանց վերաբերյալ նկատառումները:

1. Հնտրությունների տվյալների հրապարակումը

Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների մի շարք ընտրական հանձնաժողովների արձանագրություններում փոփոխվեցին ընտրական թվերը:

Հնտրությունների հասարակական վերահսկողության և քվեարկությունից հետո ընտրական թվերի հնարավոր փոփոխությունները հանձնաժողովների կողմից բացառելու համար ընտրական օրենսգրքում կարելի է սահմանել նորմ, ըստ որի ընտրական թվերի տարբեր խմբերն արձանագրվեն առանձին: Այդ արձանագրություններն ուղարկվեն կենտրոնական ընտրական հանձնաժողով և դրանց տվյալները հրապարակվեն ըստ դրանք հայտնի դառնալու ժամանակների: Քանի որ ընտրական թվերը ըստ դրանց հայտնի լինելու ժամանակահատվածների բաժանվում են մի քանի խմբերի:

Հնտրական թվերի առաջին խումբը՝ տեղամասի ընտրողների, տեղամասին հատկացված քվեաթերթիկների և ծրարների թվերը հայտնի են քվեարկությունը սկսելուց առաջ: Այս տվյալները կարող են հրապարակվել քվեարկության օրը մասնակցության վերաբերյալ առաջին տվյալների հրապարակման ժամանակ:

Հնտրական թվերի երկրորդ խումբը՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների, չօգտագործված և մարված քվեաթերթիկների ու ծրարների, օգտագործված ծրարների ու քվեաթերթիկների, էլունդների թվերը, տեղամասերում հայտնի են դառնում մինչ քվեատուփ բացելը: Այս տվյալները կարող են հրապարակվել քվեարկության ավարտից հետո մասնակցության վերաբերյալ վերջին տվյալների հրապարակման ժամանակ:

Հնտրական թվերի երրորդ խումբը՝ քվեատուփում առկա ծրարների, դրանցում եղած քվեաթերթիկների, վավեր և անվավեր ծրարների ու քվեաթերթիկների, քվեների բաշխման թվերը, հայտնի են դառնում քվեատուփ բացելուց հետո: Այս տվյալները կարող են հրապարակվել ընտրությունների նախնական տվյալների հրապարակման ժամանակ:

Եթե նախատեսվեր համապատասխան նորմ, ըստ որի ընտրական թվերի խմբերի տվյալների համար կազմվեին առանձին արձանագրություններ և այդ տվյալներն անհապաղ հաղորդվեին վերադաս հանձնաժողովներ և հրապարակվեին, ապա այն կբացառեր ընտրական տեղամասերում, ընտրատարածքներում և կենտրոնական ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում այդ տվյալները փոխելու հնարավորությունը:

Վերոնշյալները կարևոր են անճշտությունները գնահատելու և քվեարկության իրական արդյունքները խեղաթյուրելու հնարավորությունը բացառելու համար: Տվյալ դեպքում վստահությունը քվեարկության արդյունքները փոփոխության չենթարկվելու հանդեպ կմեծանա: Իսկ հանձնաժողովի անդամներն ավելի զգոն կլինեն:

2. Հնտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումների ընդունումը

Ներկայացնենք Հոդված 39-ի կետ 6-ի երկրորդ պարբերությունը և 7-րդ կետի երկրորդ պարբերությունը:

Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ, հերթական նիստերն իրավագոր են անկախ նիստին ներկա անդամների թվից, եթե սպառված են հանձնաժողովի՝ նիստ գումարելու համար անհրաժեշտ թվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները:

Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ, որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած հանձնաժողովի անդամների թիվը մեծ է դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների թվից:

Նախատեսվում է իրավիճակ, երբ ընտրական հանձնաժողովի որոշման ընդունումը, թեկուզ և մեկ անդամով կհամարվի օրինական:

3. Տեղամասային արձանագրություններում սխալների ուղղումը

Ըստ հոդված 63-ի կետ 1-ի Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, և թվաքանակային սխալների առկայության դեպքում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում:

Եթե հաշվի առնենք, որ օրենսգրքում ելակետային տվյալների սահմանումը տրված չէ և հնարավորություն է տրված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասերի արձանագրությունների թվաքանակային սխալները վերացնել ու ուղղումները ստորագրություններով վավերացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և քարտուղարին, ապա հարց է, թե որ տվյալներն ինչպես են ուղղվելու և ինչ փոփոխություններ կկրի արձանագրությունը:

Ստացվում է, որ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, կարող են ուղղումներ մտցնել տեղամասի արձանագրությունում:

Անճշտությունների չափը փոխելու հնարավորությունը չի բացառված: Թեկուզ և հնարավոր է, որ մեկ անճշտությունը կարող է գրկել որևէ կուսակցության կամ կուսակցության դաշինքի մանդատներից:

4. Շրջիկ արկղերով քվեարկություն կազմակերպելու մասին

Ըստ հոդված 46-ի ստացիոնար բուժում իրականացնող բժշկա-

կան հաստատություններում՝ նախապես կազմվում է ընտրողների լրացուցիչ ցուցակներ՝ դրանցում ընդգրկված ընտրողներին հանելով հաշվառման վայրի ցուցակներից: Ըստ հոդված 53-ի կետ 2-ի, քվեարկության օրը շրջիկ արկղի միջոցով հանձնաժողովի, վիճակահանությամբ որոշված, մեկ անդամը կազմակերպում է ստացիոնար բուժում իրականացնող, բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների քվեարկությունը, որին կարող են ներկա գտնվել նաև վստահված անձինք, դիտորդներ և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ըստ օրենսգրքի հոդված 492-ի կետ 4-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները փաթեթավորում է, կնքում է դրանք և հանձնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին, յուրաքանչյուր տեղամասին մեկ կնիք հաշվարկով: Ըստ կետ 5-ի. փաթեթները կնքվում են և քվեարկության նախորդ օրը հանձնվում տեղամասային ընտրական հանձնաժողովների Նախագահներին յուրաքանչյուրին մեկ փաթեթավորված կնիք:

Քվեարկության օրը, ըստ հոդված 53-ի կետ 3-ի, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կնիքը հանձնում է քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:

Ըստ հոդված 591-ի Քվեարկության չսահմանված նմուշի ծրարներ են համարվում սահմանված նմուշից տարբերվող կամ չկնքված, կամ այլ կնիքով կնքված քվեարկության ծրարները:

I. Տեղամասին հատկացվում է մեկ կնիք, որով քվեարկության ընթացքում կնքվում են քվեարկության ծրարները, իսկ տեղամասից դուրս նախատեսվում է շրջիկ տուփերով քվեարկություն, որտեղ նույնպես պետք է կնքվեն ծրարները: Նկատենք, որ մեկ կնիքը միաժամանակ չի կարող երկու տարբեր վայրերում լինել, իսկ քվեարկության օրը քվեարկության դադարեցում տեղամասում նախատեսված չէ:

Հարց է առաջանում, թե ինչ կնիքով է կնքվելու ծրարները, որոնցով իրականացվելու է շրջիկ քվեատուփով քվեարկությունը: Եթե չի կնքվելու, ապա չսահմանված նմուշի քվեաթերթիկներով քվեարկություն կազմակերպելու իմաստը որն է: Չնայած Ազգային ժողովի 2007 թվականի ընտրություններում տվյալ հարցը, կարծես թե լուրջ խնդիրներ չառաջացրեց:

II. Օրենսգրքով նախատեսված է բուժման մեջ գտնվող ընտրողների ընտրելու իրավունքն իրականացնելու հնարավորություն: Բայց շրջիկ արկղի միջոցով քվեարկության արդյունքներն ամփոփվում են միասնաբար տեղամասում քվեարկության արդյունքների հետ, առանց առանձին արձանագրություն կազմելու: Եթե հաշվի առնենք անցյալի փորձը և այն, որ չի նախատեսված շրջիկ արկղի միջոցով քվեարկության արդյունքների առանձին ամփոփում և առանձին արձանագրության կազմում, ապա չի բացառվում նշված հանգամանքների օգտագործման հնարավորությունը հոգուտ որևէ թեկնածուի, կուսակցության կամ կուսակցության դաշինքի:

5. Անճշտությունների գնահատման հարցը

Արժեք, որ անճշտությունները հաշվարկվեին և արձանագրվեին ընտրությունների արդյունքների ամփոփումն իրականացնող և մանդատները բաշխող հանձնաժողովներում, այլ ոչ թե տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրություններում: Իսկ տեղամասերում արձանագրվեին տեղամասերի հետ կապված ընտրական թվերը միայն:

Նկատենք, որ համամասնական ընտրակարգով ընտրությունների համար նույնպես միշտ էլ առկա է մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող անճշտությունների նվազագույն չափ: Այն կախված է քաղաքական կազմակերպությունների օգտին կամ դեմ հաշվարկված քվեներից, սահմանված քվոտաներից, բաշխվող մանդատների քանակից: Նշված պարամետրերի ցանկացած թվային տվյալների համար ընտրությունների արդյունքի վրա էականորեն ազդող անճշտությունների նվազագույն չափը հաշվվում է համապատասխան մաթեմատիկական բանաձևերով: Սակայն օրենսգրքում համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքի վրա էականորեն ազդող անճշտությունների նվազագույն չափը գնահատելու համապատասխան նորմ չկա: Հետևաբար անճշտությունների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա գնահատելու հարցը թողնված է որոշում կայացնող մարմինների հայեցողությանը:

Եթե անցած ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներն ամփոփելիս հաշվի առնվեր անճշտությունների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, ապա մանդատների բաշխման հարաբերակցությունը կենթարկվեր փոփոխության: Պարզ չէր լինի

համամասնական ընտրակարգով մանդատներ ստացած թեկնածուների որոշ մասի՝ իրականում ընտրված լինելու հարցը:

Եթե անցած ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներն ամփոփելիս հաշվի առնվեր անճշտությունների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, ապա մանդատների բաշխման հարաբերակցությունը կենթարկվեր փոփոխության: Պարզ չէր լինի համամասնական ընտրակարգով մանդատներ ստացած թեկնածուների որոշ մասի՝ իրականում ընտրված լինելու հարցը:

Չնայած նույնիսկ պաշտոնապես արձանագրված անճշտությունների չափն ազդում էր մանդատների բաշխման հարաբերակցության, հետևաբար նաև ընտրությունների արդյունքների վրա, բայց անկախ նշված հանգամանքից անճշտությունները չդիտարկվեց, որպես հետևանք ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի ունեցած, օրենսգրքի պահանջների, այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ըստ օրենսգրքի հոդված 115-ի կետ 2-ի. Ազգային ժողովի համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար, առնվազն կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Ըստ կետ 3-ի, յուրաքանչյուր ցուցակին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են: Ըստ կետ 4-ի, մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության, յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով:

Թվում է, թե մանդատների բաշխման համար անճշտությունները հաշվի է առնված, բայց իրականում՝

I. Այն հաշվարկվում է ի վնաս քվոտային մոտ համապատասխան քվեներ ունեցող քաղաքական կազմակերպությունների և ի օգուտ քվոտան հաղթահարելու համար քվեներ ապահոված մյուս քաղաքական կազմակերպությունների:

II. Հաշվի չի առնվում անճշտությունների իրական ազդեցությունը մանդատների բաշխման հարաբերակցության վրա և մանդատների բաշխման փոփոխության հնարավորությունը:

Օրինակով ցույց տանք վերը նշվածը՝

Ազգային ժողովի 2007 թ. ընտրությունների արդյունքները վերլուծելով երևում է, որ մանդատներ կստանար, այսինքն՝ 5 տոկոսի շեմը կհաղթահարեր ևս մեկ կուսակցություն, եթե 14665 արձանագրված անճշտությունները հետևանք լինեին նրա քվեների նվազման: Իսկ 5 տոկոսի շեմը հաղթահարելու համար նրան չի բավարարել 9033 քվե:

Կախված քվեներից և անճշտությունների չափից հնարավոր են նաև դեպքեր, երբ մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխվի միայն քվոտան հաղթահարած կազմակերպությունների համար:

Եթե 14665 արձանագրված անճշտությունները հետևանք լինեին 5 տոկոսի շեմը հաղթահարած կուսակցություններից որևէ մեկի քվեների նվազման, ապա քվեները ճշտելուց վերջինս ավելի շատ մանդատներ կստանար:

Ըստ հրապարակված ընտրական թվերի տվյալների, մանդատների բաշխման հարաբերակցությունը փոխող, հաշվարկված ամենափոքր թվաբանական սխալը (ընտրություններն անվավերության հանգեցնող ամենափոքր անճշտության չափը) 664 է, ըստ մնացորդների բաշխվող մանդատը կստանար մնացորդի մեծությամբ հաջորդ կուսակցությունը, եթե նրա քվեներն ավելի լինեին, իսկ այդ մանդատը ստացող կուսակցության քվեները պակաս լինեին նշված թվով:

Ըստ մնացորդների բաշխվող մանդատը կստանար մնացորդի մեծությամբ հաջորդ կուսակցությունը, եթե նրա քվեներն ավելի լինեին 980 - ով:

Ըստ մնացորդների բաշխվող մանդատը կստանար մնացորդի մեծությամբ հաջորդ կուսակցությունը, եթե այդ մանդատը ստացող կուսակցության քվեները պակաս լինեին 2059-ով:

Ըստ օրենսգրքի խրախուսվում է նաև լցումը, որովհետև եթե որևէ կազմակերպության օգտին իրականացվել է կազմակերպված

լցումներ, ապա այն համարվել է նրան կողմ ձայներ և անճշտություններ բոլորի համար: Արդյունքում կազմակերպությունը, որի օգտին ավելացվել են քվեաթերթիկները, ստացել է ավելի շատ մանդատներ: Իսկ ըստ հրապարակված տվյալների, բազմաթիվ տեղամասերում արձանագրվել են ընտրություններին մասնակցած ընտրողների թվերից ավելի քվեատուփում առկա ծրարների, քվեաթերթիկների թվեր: Ստացվում է, որ եթե անճշտություններն օրենսդրության պահանջին համապատասխան չհաշվարկվեին ի վնաս որևէ կազմակերպության կամ կազմակերպությունների, հօգուտ մյուսների, ապա մանդատների բաշխման հարաբերակցությունը կփոխվեր:

Նկատենք, որ անճշտությունները հետևանք են նաև օրենսդրության պահանջների խախտմամբ քվեարկության անցկացման և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում թույլ տրված խախտումների:

6. Տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Ըստ հոդված 40-ի կետ 4-ի, տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու իրավասությունը ուղղակիորեն վերապահված է միայն տարածքային ընտրական հանձնաժողովին:

Ըստ կետ 13-ի, քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվում է, որպես տեղամասում անճշտությունների չափ և այն հաշվի է առնվում ընտրությունների արդյունքներն ամփոփելիս:

Ըստ օրենսգրքի մյուս նորմերի, համամասնական ընտրությունների արդյունքներն ամփոփվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովում, իսկ վերջինիս կողմից տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու ուղղակի նորմ չկա: Չկա նաև մանդատների բաշխման հարաբերակցության վրա անճշտությունների ազդեցությունն ուղղակի և ճշգրիտ գնահատող նորմ:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների համար սահմանված չէ ընտրությունների արդյունքի վրա էականորեն ազդող անճշտությունների նվազագույն չափի հաշվարկի ձև: Իսկ արձանագրված անճշտությունները ընտրությունների արդյունք-

ների վրա ազդող օրենսգրքի խախտման փաստ դիտարկելը վերապահված է կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեծամասնությանը կամ Սահմանադրական դատարանին: Համամասնական ընտրությունները ճանաչվում են անվավեր ամբողջությամբ կամ մանդատները բաշխվում են ցանկացած անճշտությամբ:

Ստացվում է, որ եթե նույնիսկ հանրապետության 41 ընտրատարածքների մոտ 2000 ընտրատեղամասերում կատարվել են ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ, ապա մեկ տեղամասի պատճառով կարող են մնացած բոլոր տեղամասերի քվեարկության արդյունքները համարվել անվավեր:

Այսինքն, եթե նույնիսկ ընտրություններն արդար լինեն, բայց տվյալ պահին քաղաքական որոշում թելադրող որևէ խմբի այն չբավարարի, ապա որևէ ընտրատարածքային հանձնաժողով ընտրատարածքի որևէ տեղամասում քվեարկության արդյունքները կարող է ճանաչել անվավեր: Տեղամասի մասնակիցների թիվը կդառնա անճշտություն: Նշվածը կարող է դիտվել համամասնական ընտրությունների արդյունքների վրա ազդող խախտում և հիմք համամասնական ընտրություններն անվավեր ճանաչելու համար: Նույնը վերաբերում է նաև հանրապետության նախագահի ընտրություններին:

Մյուս կողմից, եթե դիտարկենք անճշտությունները, որպես ավելի շատ ընտրակեղծիքների արդյունք, իսկ մանդատների բաշխման հաշվարկի համար անճշտությունները քվեների հետ չի համադրվում ու նախատեսված է ցանկացած անճշտությամբ մանդատների բաշխման հնարավորություն, ապա կարծես թե համամասնական ընտրությունների համար խրախուսվում են ընտրակեղծիքները:

Առկա է հնարավորությունը, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, ոչ ցանկալի տեղամասերում քվեարկության արդյունքները ճանաչեն անվավեր կամ անճշտությունների չափը հասցնեն չափազանց մեծ թվերի:

Համամասնական ընտրակարգով ընտրությունները կճանաչվեն անվավեր կամ մանդատները կբաշխվեն ցանկացած անճշտությամբ, կախված նպատակահարմարությունից, իրավիճակից ու այս կամ այն որոշմանը կողմ ուժերի դասավորությունից:

7. Հանրապետության նախագահի ընտրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ

Ըստ Հոդված 86 – ի, հանրապետության նախագահի ընտրությունը ցանկացած փուլում անվավեր է ճանաչվում, եթե անճշտությունների չափը մեծ է կամ հավասար առավել թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երկու թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունից, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում, թեկնածուին կողմ և դեմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունից:

Ստացվում է, որ եթե երկու թեկնածու անցնում են երկրորդ փուլ, իսկ անճշտությունների չափն ավելին է երկրորդ և երրորդ թեկնածուների քվեների տարբերությունից կամ առաջին տեղն զբաղեցրած թեկնածուի ու երրորդ թեկնածուի քվեների տարբերությունից, ապա դա որևէ նշանակություն չունի և անցկացվելու է երկրորդ փուլ:

8. Համայնքի ավագանու անդամի ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ

Ըստ հոդված 134-ի կետ 5-ի 1) ենթակետի, համայնքի ավագանու անդամի ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե անճշտությունների չափը բացառում է ավագանու անդամների թվերի առնվազն կեսին համապատասխան թվով ընտրված թեկնածուներին պարզելու հնարավորությունը, այն է՝ ընտրված թեկնածուին և չընտրված թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունը փոքր է կամ հավասար անճշտությունների չափի և ավագանու անդամների թեկնածուների թվի հարաբերության տարբերությունից:

Հարց է առաջանում, թե ինչ է նշանակում անճշտությունների չափի և ավագանու անդամների թեկնածուների թվի հարաբերության տարբերություն: Որ թվերի տարբերության մասին է խոսքը կամ եթե տարբերությունը վերաբերում է անճշտություններին ու թեկնածուների թվին, ապա հարաբերությունը, որ թվերին է վերաբերում: Երևի նկատի ունի ընտրված թեկնածուին և չընտրված թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունը փոքր է կամ հավասար անճշտությունների չափի և ավագանու անդամների թեկնածուների թվի հարաբերությունից:

I. Այս դեպքում հաշվարկը չի համապատասխանում առաջին պահանջին այն է (եթե՝ անճշտությունների չափը բացառում է

ավագանու անդամների թվերի առնվազն կեսին համապատասխան թվով ընտրված թեկնածուներին պարզելու հնարավորությունը): Սահմանված հաշվարկի ձևը չի բավարարում ավագանու անդամների թվերի առնվազն կեսին համապատասխան թվով ընտրված թեկնածուներին պարզելու հնարավորությանը:

Օրինակ՝ ենթադրենք ավագանու անդամների թիվը 15 է:

Ընտրված 15-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը 30 է:

Ընտրված 16-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը 29 է:

Ընտրված 15-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին և չընտրված 16-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունը (30-29) 1 է:

Անճշտությունների չափը 15 է:

Անճշտությունների չափի և ավագանու անդամների թեկնածուների թվի հարաբերությունը հավասար է (15/15) 1:

Եթե 14-րդ տեղ զբաղեցրած թեկնածուին և չընտրված 16-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունը մեծ է (16-րդ տեղը զբաղեցրած թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին գումարած մեկ գումարած երկու անգամ անճշտությունների չափ) թվից, $(29 + 2 \times 15) = 29 + 30 = 59$ այսինքն 60 է, ապա 14-րդ և դրանից առաջ տեղեր զբաղեցրած թեկնածուների ընտրված լինելու վրա 15 անճշտությունը որևէ կերպ չի ազդի: $(60 - 15) > (29 + 15)$, $45 > 44$:

Սահմանված ձևով հաշվարկի արդյունքում պետք է որ անճշտությունների չափը բացառեր ավագանու անդամների թվերի առնվազն կեսին համապատասխան թվով ընտրված թեկնածուներին պարզելու հնարավորությունը, սակայն այն բացառում է միայն վերջին ընտրված, 15-րդ տեղը զբաղեցրած թեկնածուի ընտրվելու հնարավորությունը:

II. Իսկ ինչ վերաբերում է, թե անճշտությունների չափը, որ դեպքում կարող է բացառել ավագանու անդամների թվերի առնվազն կեսին համապատասխան թվով ընտրված թեկնածուներին պարզելու հնարավորությունը, ապա այն դեպքում, երբ անճշտությունների չափը մեծ կամ հավասար լինի ավագանու անդամների առնվազն կեսին համապատասխան թվով տեղը զբաղեցրած թեկնածուի և չընտրված թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերի տարբերությունից:

Ստացվում է, որ օրենսգրքով նախատեսված է իրավական հիմքեր՝ կախված իրավիճակից ու իրադրությունից, ոչ արդար ընտրությունների արդյունքներն օրինական համարելու համար:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների համար օրենսգիրքը նախատեսում է, որ կամ ընդհանրապես չպետք է լինեն թերություններ, կամ թերությունների առկայությամբ ընտրությունները պետք է ճանաչվեն անվավեր, կամ ի սկզբանե քվեարկվող կազմակերպությունները պետք է փոխադարձ համաձայնությամբ բաշխեն մանդատները, պաշտոնները միմյանց միջև՝ դիտելով ու ընդունելով քվեարկության արդյունքները որպես հարցման մոտավոր արդյունք:

Բացառությամբ այն դեպքի, երբ կազմակերպվի ու անցկացվի կատարյալ ընտրություններ, երբ չի լինի ոչ մի թերություն ու անճշտություն համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները կասկածի են ենթարկվելու և վիճարկման տեղիք են տալու:

Չնայած օրենսդրական բացերին, թերություններին ու հակասություններին, բոլոր դեպքերում առկա ընտրական օրենսգրքով հնարավոր էր անցկացնել արդար ընտրություններ, եթե նախ առաջինը՝ հասարակության մեծ մասն ակտիվ նպաստեր արդար ընտրություններին, երկրորդը՝ ընտրություններ անցկացնողները և արդյունքների վերաբերյալ որոշում կայացնողները բավականաչափ ազնիվ լինեին:

2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17; 18; 19

ԿԱՍ ԵՎՐՈԶՈՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐ

Ասել թե 2007 ընտրություններն անցել են առանց ընտրակեղծիքների, չպարտադրված ու առանց ընտրակաշառք-ների քվեարկություններ են եղել, բացառվել են քվեների սխալ հաշվարկի հնարավորությունները և ընտրակեղծիքներ չեն եղել ու անճշտությունները չեն ազդել մանդատների բաշխման հարաբերակցության վրա, ճիշտ չէր լինի:

Հրապարակված ընտրողների ցուցակներում 60557 ընտրողների ծննդյան օրն ու ամիսը գրո էր: Որը նշանակում էր, որ ընտրացուցակներ կազմողներն ու հրապարակողներն անփույթ էին կամ վատ են կատարել իրենց պարտականությունները, կամ էլ դա դիտավորություն էր և գոյություն ունեին անվավեր անձնագրեր:

Մինչ ընտրությունները՝ կարճ ժամանակահատվածում, ըստ հայտարարությունների, բազմաթիվ մարդիկ պարտադրված, կամ աշխատանքի ու դրամ վաստակելու ակնկալիքով անդամագրվեցին իշխող կուսակցությանը (ՀՀԿ) - ին, և նորաստեղծ ԲՀԿ - ին: Որոնց անդամների թիվը ըստ հայտարարությունների հասավ մի քանի հարյուր հազարի:

Պարտադրված և ընտրակաշառքներով քվեարկությունների վերաբերյալ լրատվամիջոցներում տարբեր կուսակցությունների կողմից եղել են բազմաթիվ հայտարարություններ: Նույնիսկ, մինչ քվեարկությունները շատ կուսակցությունների ղեկավարներ ընտրողներին առաջարկում էին վերցնել ընտրակաշառքները, բայց քվեարկել ոչ կաշառատուի օգտին, հաշվի չառնելով, որ կաշառք վերցնող ընտրողների մեծամասնությունն ազնվորեն կքվեարկի կաշառատուի օգտին: **Նույնիսկ մի գյումրեցի տատիկ խոստովանեց, որ իրեն <<երկու տեղ փող տվեցին>> ու ինքն ազնվորեն քվեաթերթիկում երկու տեղ <<պտիչկա>> դրեց:** Չնայած լրատվամիջոցներում հայտարարվող մասսայական ընտրակաշառքների մասին տեղեկություններին, ստույգ փաստեր կարծես թե չէր հրապարակվում:

Բազմաթիվ մարդիկ առանձին խոսակցություններում ասում էին, որ իրենք էլ քվեարկելու համար դրամ են վերցրել, բայց երբ նրանց առաջարկվում էր փաստը գրավոր հաստատել, հրաժարվում էին, պատճառաբանելով, որ իրենց կղատեն:

Հետաքրքիր է, որ մի կողմից պայքար էր հայտարարվել կոռուպցիայի դեմ, մյուս կողմից խրախուսվում էր մասսայական կաշառատվությունը:

Համամասնական ընտրական համակարգով ընտրությունների մասնակցեցին 22 կուսակցություն և մեկ կուսակցությունների դաշինք:

Հանրապետությունում կազմավորվեց 1923 տեղամաս: Ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալների, ընտրողների թիվը մինչ քվեարկության օրը հավասար էր 2298931, քվեարկության ավարտին այն դարձավ 2319722: Ընտրությունների մասնակիցների թիվը 1391540 էր՝ 59.99 %:

1492 տեղամասերում ընտրողների թիվը բացարձակ արժեքով փոխվել է 71569 ով, 636 տեղամասերում ընտրողների թիվն ավելացել է 46180 ով, 856 տեղամասերում ընտրողների թիվը պակասել է 25389-ով:

49 տեղամասերում արձանագրվել է 12535 ով ավել մասնակից, քան այդ տեղամասերի ընտրողների թվերն էին մինչ քվեարկության օրը:

Սակայն քվեարկության ավարտի ընտրողների թվերի հետ համեմատած այդ տեղամասերում ավել մասնակցություն չի գրանցվել: Այսինքն՝ այդ տեղամասերում ավելացել են նաև ընտրողների թվերը:

Մանդատներ ստացած կուսակցությունների քվեների թիվը 1017020 է՝ 75,25%:

Չանցած կազմակերպությունների քվեները 334403 է՝ 24,75 %:

Քվեարկության ավարտի ընտրողների թվերի հետ համեմատած 100% մասնակցություն է արձանագրվել 15 տեղամասերում, 7 քրեակատարողական հիմնարկներում և մեկուսարաններում, իսկ 8-ը սովորական տեղամասերում: Իսկ նշված տեղամասերի ընտրողների ընդհանուր թիվը 2907 է:

90% - ից ավել մասնակցություն է գրանցվել 96 տեղամասերում 57331 ընտրողների ընդհանուր թվով:

80% - ից ավել մասնակցություն է գրանցվել 268 տեղամասերում 176592 ընտրողների ընդհանուր թվով:

70% - ից ավել մասնակցություն է գրանցվել 606 տեղամասերում ընտրողների 440947 ընդհանուր թվով:

60%-ից ավել մասնակցություն է գրանցվել 1046 տեղամասերում 980214 ընտրողների ընդհանուր թվով:

Ընտրական թվերի անհամապատասխանություններ կան 1310 տեղամասերում: Եթե յուրաքանչյուր նշված տեղամասերից յուրաքանչյուրի համար վերցնել միայն մեկ առավելագույն սխալը, ապա դրանց հանրագումարը կլինի 16660:

Արձանագրվել են 14665 անճշտություններ 1145 տեղամասերում:

Առկա են ընտրական թվերի այնպիսի անհամապատասխանություններ, որոնք վկայում են կեղծ հաշվարկների և լցոնումների փաստերը: Այդպիսի բացասական 8096 անհամապատասխանություններ կան 674 տեղամասերում:

Քվեատուփում եղած քվեաթերթիկները 1286-ով ավելի են քվեատուփում եղած ծրարներից 191 տեղամասերում:

Քվեատուփի քվեաթերթիկները 1481-ով ավելի են, քան ընտրությանը մասնակցած ընտրողների թիվը, 142 տեղամասերում:

Քվեատուփի ծրարները 6302-ով ավելի են, քան ընտրությանը մասնակցած ընտրողների թիվը, 515 տեղամասերում:

Շատ տեղամասերում չեն համապատասխանում մեծամասնական և համամասնական ընտրական թվերը, հատկապես ընտրողների և մասնակիցների թվերը: Կան տեղամասեր, որտեղ մեծամասնական ընտրությունների մասնակիցների թվերը գերազանցել են համամասնական ընտրությունների մասնակիցների թվերը և հակառակը:


Մի շարք տեղամասերի արձանագրությունների ընտրական թվերը ենթարկվել են փոփոխությունների:

Որոշ ընտրական հանձնաժողովների անդամների դեմ հարուցվեցին քրեական գործեր, բայց ... :

Հայաստանում արդար և մաքուր ընտրություններ չեղավ նաև 2007թ.-ին: Նախորդ անգամների նման որոշ կուսակցություններ մինչ ընտրությունների ավարտն ու անմիջապես հետո հանդես էին գալիս որպես ընդդիմություն և հայտարարում կեղծ ընտրությունների մասին, բայց հենց իշխանության մաս կազմելու հնարավորություն են ստանում համաձայնվում են ընտրակեղծիքներով ընտրությունների արդյունքների հետ և մանդատներից չեն հրաժարվում:


Պետք է նշել, որ ընտրողների քվեների 29%-ը պարզապես մանդատների չարժանացավ, այդ ձայները ստացած, հիմնականում ընդդիմադիր, քաղաքական կազմակերպությունների քվոտան չբավարարելու պատճառով: Չնայած, երբ ընտրություններն արդար չեն, չարժե խոսել ձայների կորստի, առավել ևս այդ կազմակերպությունների ոչ ճիշտ ընտրական քաղաքականության մասին:

Ազգային Ժողովի 2007 թվականի ընտրությունների Կուսակցությունների ստացած քվեները և տոկոսները բոլորին կողմ տրված ձայների թվից



- 1) ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԱԿԱՐԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԱԺԿ)
- 2) ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԱՀԿ)
- 3) ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԱՄԿ)
- 4) "ԲԱՐՎԱՎԱԿ ՀԱՅՍՏԱՆ" ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԲՀԿ)
- 5) ԴԱԵԽՆՔ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԴԿ)
- 6) ԺԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԺԿ)
- 7) ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՃԿ)
- 8) "ԺՈՂՈՎՐԱԿԱՐԱԿԱՆ ՈՒԼԻ" ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԺՈՒԿ)
- 9) "ԽՊՊԵՉՄԵՆ" ԴԱԵԽՆՔ (ԽԴ)
- 10) "ՀԱՅ ՀԵՂԱԾՈՒԽԱԿԱՆ ԴԱԵԽՆՔ" ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԵԴԿ)
- 11) ՀԱՅՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ)
- 12) ՀԱՅՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՄԱՐԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԵԿ)
- 13) ՀԱՅՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ)
- 14) ՀԱՅՍՏԱՆԻ ԿՈՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ)
- 15) ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ)
- 16) ՀԱՅՍՏԱՆԻ ՄԱՐՔՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀՄԿ)
- 17) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)
- 18) ՄԻՎՈՐԱՎԱԾ ԱԵՆԱՄԱՔԱՅԻՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿ)
- 19) ՄԻՍՅԱՄ, ԱԶՄԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ԱՄԿ)
- 20) "ՆՈՐ ԺՄՄԱՆԱԿԱՆԵՐ" ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՆԺԿ)
- 21) ՍՈՑԻԱԼ_ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՉԱԿՅԱՆ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՄՀԿ)
- 22) ԶԵՆՍՈՒՆԵՄ-ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՎԵՐԱՄԱՆԻՂ ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՔՐՎԿ)
- 23) "ՕՐԻՆԱՑ ԵՐԿԵՐ" ԿՈՄՍՅՑԻՈՒԹՅՈՒՆ (ՕԵԿ)


Մանդատների բաշխումը



Կուսակցությունների օգտին հաշվարկված ձայների տոկոսները հաշվարկված մասնակիցների թվից, ըստ ընտրատեղամասերի տվյալների



Կուսակցությունների օգտին հաշվարկված ձայների տոկոսները հաշվարկված մասնակիցների թվից, ըստ այն ընտրատեղամասերի, որտեղ կան ընտրական թվերի անհամապատասխանություններ և հնարավորից ավել մասնակցություն:




Կուսակցությունների օգտին հաշվարկված ձայների տոկոսները հաշվարկված մասնակիցների թվից, ըստ այն ընտրատեղամասերի, որտեղ չկան ընտրական թվերի անհամապատասխանություններ և հնարավորից ավել մասնակցություն:



Մանդատների բաշխումը միայն ըստ այն տեղամասերի որտեղ չկան ընտրական թվերի անհամապատասխանություններ և հնարավորից ավել մասնակցություն:



Մանդատների բաշխումը ըստ մարզի և կեղծված արդյունքների




Ընտրակեղծիքներ Եվրախորհրդի հանդեպ ստանձնած պարտավորություններին համապատասխան

Ընտրական թվերի անահամատասխանությունները հաշվի առնող համապատասխան գրաֆիկական պատկերները՝ որոնցում ներկայացվում են քվեների բաշխումն ըստ 9 թեկնածուների, ցույց են տալիս թե ինչպիսին են հրապարակված քվերկության արդյունքներն ու ընտրակեղծիքները:



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԶԱՇԿ ԱՌԱՅ ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԱՆՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՅՐ ԹՎՈՒՄ ԶԱՐԱՎՈՐԻՑ ԱՎԵԼ և ԱՌԿԱ ԸՆՏՐՈՒՆԵՐԻՑ ԱՎԵԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱԾԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱՊԵՏ ԶՐԱՊԱՐԿՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ





ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՈՐՏԵՂ ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԱՆՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԻ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ԸՆՏՐՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՈՐՏԵՂ ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԱՆՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԻ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ԸՆՏՐՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՈՐՏԵՂ ԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԱՆՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ Է ԱՌԿԱ ԸՆՏՐՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՈՐՏԵՂ ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԱՆՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ Է ԱՌԿԱ ԸՆՏՐՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ



Պարտադրված և ընտրակաշառքներով քվեարկությունների վերաբերյալ լրատվամիջոցներում տարբեր կազմակերպությունների կողմից եղել են բազմաթիվ հայտարարություններ:

Հերթական անգամ Հայաստանում ընտրովի իշխանությունը կազմավորվում է բանակի հրամանատարի կողմից համաժողովրդական հարցման միջոցով: Իսկ ով ընտրակեղծ իշխանությանն իր անհամաձայնությունն արտահայտում է բողոքի ակցիայի միջոցով պատժվում է, ընդ որում, ինչպես երևաց, պատիժը կախված է ժամանակից ու իրադրությունից:

Դեռ դա քիչ է, մինչև մարդկանց չեն սպանում, ընտրությունների միջազգային մոնիթորինգի կազմակերպություններն էլ հայտարարում են, թե ընտրություններում առաջընթաց կա և այն նորմալ է անցել: Խեղճ ժողովուրդ դե արի ու հավատա ժողովրդավարական արժեքներին ու ձայն մի վաճառի կամ թե մի բռնի գաղթի ճամփան:

Հրապարակված ընտրողների ցուցակներում 70045 ընտրողների ծննդյան օրն ու ամիսը գրո էր:

Ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալների, 1923 տեղամասերում ընտրողների, ներառյալ լրացուցիչ, թիվը հավասար էր 2328831: Ըստ վերջնական արդյունքների, ընտրությունների մասնակիցների թիվը 1671027 է: Իսկ ընտրողների թիվը ըստ հայտարարության 2317000 է: Այսինքն՝ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը կազմում է ընտրողների ընդհանուր թվի մոտ 72 %-ը:

55 տեղամասերում արձանագրվել է 21984 ով ավել մասնակից քան այդ տեղամասերի ընտրողների թվերն են: Այսինքն այդ տեղամասերում ընտրություններին մասնակցել են 100%-ից ավելի ընտրողներ:

Կան տեղամասեր, որտեղ քառապատիկից նույնիսկ տասնապատիկից ավել մասնակցություն է արձանագրվել, քան ընտրողների թիվն է: Օրինակ՝ Սյունիքի մարզի Ներքին Հանդում թիվ 38/40, Արավուսում 37/18, Տեղում 37/39, Գեղարքունիքի Կուրում 23/58, Վայոց ձորի Տավում 39/19:

Ընտրողների թվի 200 % - ից 9360-ով ավել մասնակցություն է գրանցվել 22 տեղամասերում:

90%-ից 31254-ով ավել մասնակցություն է գրանցվել 191 տեղամասերում, ընդ որում 195 տեղամասերում, կարելի է ասել, արձանագրվել է այդ տեղամասերի մեկ օրվա սպասարկման հնարավորությունները մոտ 36000-ով գերազանցող մասնակցություն:

80%-ից 56077-ով ավել մասնակցություն է գրանցվել 409 տեղամասերում:

73%-ից 91629-ով ավել մասնակցություն է գրանցվել 755 տեղամասերում:

Հանրապետությունում առկա ընտրողների թիվն ըստ տարբեր պաշտոնական տվյալների ավելին չէ, քան ընտրողների ցուցակային թվի մոտ 75 տոկոսը: Ստացվում է, որ մոտ 635 տեղամասում մասնակցությունը 78957-ով գերազանցել է այդ տեղամասերում առկա ընտրողների թիվը:

Իսկ ըստ տեղամասերի հրապարակված տվյալների, հարյուրավոր տեղամասերում առկա են ընտրական թվերի, այն է ընտրացուցակներում ընտրողների ստորագրությունների, տեղամասերին հատկացված քվեաթերթիկների, մարված քվեաթերթիկների, ելունդների, վավեր, անվավեր քվեաթերթիկների, քվեատուփում առկա քվեաթերթիկների, ծրարների, թեկնածուների օգտին հաշվարկված քվեների անհամապատասխանություններ:

Ընտրական թվերի անհամապատասխանություններ կան 637 տեղամասերում: Եթե յուրաքանչյուր նշված տեղամասերից յուրաքանչյուրի համար վերցնել միայն մեկ առավելագույն սխալը, ապա դրանց հանրագումարն՝ այսինքն տեղամասերում առկա ընտրական թվերի անհամապատասխանությունների նվազագույն թիվը կլինի 10988, ընդ որում օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվարկվող անճշտությունների չպետք է պակաս լինի, քան նշված թիվը: Չնայած պաշտոնապես արձանագրվել է 6720 անճշտություն:

Պաշտոնապես հրապարակված տվյալներում 1563 ընդհանուր թվով լցոնումներ են արձանագրվել 156 տեղամասերում: Օրինակ՝ Գյումրիի թիվ 34/26 տեղամասում քվեատուփում 153 քվեաթերթիկ ավել է, քան այդ տեղամասում ընտրություններին մասնակցած ընտրողների թիվն է, Այգեձորի 41/28 տեղամասում լցոնման թիվը 93 է, Երևանի Մալաթիա սեբաստիա համայնքի 7/21 տեղամասում 80 է, Էրեբունիի 13/7 տեղամասում 62 է, Աջափնյակի 9/31 տեղամասում 55 է: Տաս քվեաթերթիկներից ավելի լցոնումներ կան 34 տեղամասերում, մեկական լցոնում 39 տեղամասերում և այլն:

Կան տարբերություններ հրապարակված վերջնական տվյալների և ըստ տեղամասերի հրապարակված տվյալների գումարի միջև:

Ավելին, մի շարք տեղամասերում քվեների վերահաշվարկի ժամանակ պարզվել է, որ կատարվել են ձայների ակնհայտ կեղծ հաշվարկեր, նույնիսկ քրեական գործեր են հարուցվել:

Եթե վերցնենք բոլոր ընտրակեղծիքները՝ ընտրական թվերի անհամապատասխանությունները, ըստ պաշտոնական տվյալների, այդ թվում հաշվի առնելով ըստ բնակավայրերի քվեարկությանը մասնակցած ընտրողների թվերի, առկա ընտրող-ների թվերից գերազանցելու փաստերը, ապա այն ավելին կլինի 100000 հազարից, այսինքն ընտրողների ընդհանուր թվի 4.3% - ից:

Վերը նշված ընտրական թվերի, ըստ պաշտոնական տվյալների վերլուծությունների, անհամապատասխանությունները հաշվի առնող՝ համապատասխան գրաֆիկական պատկերները, ցույց են տալիս թե ինչպիսին են քվեարկության արդյունքներն ու ընտրակեղծիքները:

Իսկ թե նշված թվերն ու փաստերը էապես կազդեին ընտրությունների արդյունքի վրա, թե ոչ, հարցի պատասխանը կարծում եմ պարզ է:

Տեղին է հիշեցնել, որ թեկուզ և մեկ ձայնի կեղծելը հանցագործություն է ընդդեմ ժողովրդի:

Կարող եմ ավելացնել, որ ընտրական գործընթաց կազմակերպողների ակտիվ մասնակցողների ու գնահատողների, հատկապես արդյունքների վերաբերյալ որոշում կայացնողների կողմից վերը նշված թվային անհամապատասխանությունները և ընտրակեղծիքների փաստերը չտեսնելը կամ նրանց պրոֆեսիոնալիզմի պակասն է, կամ դրանք տեսնելու ցանկության բացակայությունը, կամ էլ երկուսը միասին: Ուստի զարմանալի չէ, որ ժողովրդավարության և արդար ընտրությունների քարոզիչներն ու պաշտպանները հատկապես միջազգային կառույցներն, այդ թվում Եվրախորհուրդն ու նրա դիտորդական առաքելությունը նման փաստերը չեն տեսնում: Իսկ ընտրությունից անմիջապես հետո առաջին զեկույցում հայտարարում են, թե ընտրություններն անցել են հիմնականում Եվրախորհրդի պահանջներին համապատասխան:

Մի թե ընտրակեղծիքներով ընտրությունների անցկացման և ընտրակեղծիքների համար մի քանի մարդու դատելու, բայց ոչ մի դեպքում ընտրակեղծիքներով ընտրություններն անվավեր չճանաչելու պահանջ է եղել: Ցավոք, այս անգամ ընտրակեղծիքներով ընտրությունների հետևանքը մարդկային զոհերն էին ու նորից իբր օրինական, բայց բռնությամբ հաստատված իշխանությունը: Իսկ արդյունքը ժողովրդի՝ մեծ մասի անվստահության ու հակակրանքի խորացումը իշխանությունների ու ընտրությունների հետ կապված տարբեր կառույցների հանդեպ:

2009 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ^{16,17}

Երևանի ավագանու և քաղաքապետի ընտրություններ

Երևանի քաղաքապետի ուղղակի ընտրություններ չէր կարող լինել պարզապես այն քաղաքական պարզ պատճառներով, որ Երևանի քաղաքապետը հավասարազոր կլիներ հանրապետության երկրորդ նախագահի, ուստի մեծ կլիներ հանրապետությունում երկիշխանության հավանականությունը: Այդ նույն պատճառով ավագանու մեծամասնությունը պետք է ներկայացվեր նախագահի կողմնակիցներով:

Քանի որ ավագանում մեծամասնության ներկայացուցիչը դառնում էր Երևանի քաղաքապետ: Ուստի ակնկալել թե այդ ընտրությունները չեն կեղծվելու, պարզապես միամիտություն էր: Ավագանու ընտրություններն անցկացվեցին կուսակցական, 7% քվոտայով, համամասնական կապված ցուցակներով ընտրական համակարգով: Երևանում ստեղծվեցին 439 ընտրատեղամաս: 144 ընտրատեղամասերում առկա էին ընտրական թվերի անհամապատասխանություններ, քվեարկության օրը միկրոավտոբուսներով մարդկանց էին բերում համարյա բոլոր ընտրատեղամասեր: Ըստ պաշտոնական տվյալների, 16 տեղամասերում քվեատուփում առկա քվեաթերթիկների թվերն ավելին են, քան համապատասխան տեղամասերում ընտրության մասնակցած ընտրողների թվերը: Բազմաթիվ տեղամասերում արձանագրված ընտրողների մասնակցությունը պարզապես անհավանական է, եթե հաշվի առնենք, որ այդ տեղամասերում առկա ընտրողների թիվը չէր կարող այդքան լինել: Որոշ տեղամասերում եղել են փաստեր, երբ ընտրացուցակում դեռևս չքվեարկած ընտրողի անվան դիմաց ուրիշստորագրություն է դրվել, որը որակվել է որպես թյուրիմացություն:

Ընտրակեղծիքների համար դատապարվեցին մարդիկ, նույնիսկ ընտրական հանձնաժողովի իշխանության ներկայացուցիչներ:

Որոշ տեղամասերում ընտրություններն անվավեր ճանաչվեցին:

Ընդդիմադիր քաղաքական կազմակերպությունը հրաժարվեց ավագանու մանդատներից: Մակայն թեկուզ և ընտրակեղծիքների առկայությունը պաշտոնապես ընդունելու փաստին, մինևույն է ընտրությունների արդյունքները հաստատվեցին, այսպես կոչված ընտրվեց ավագանի և նշանակվեց Երևանի քաղաքապետ:

ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵ ՆՈՐ ԱՂԵՏ

Չկա որևէ մեկը, ով կհավատա, թե նախորդ ընտրություններն արդար էին, և առանց ընտրակեղծիքների:

Դժբախտաբար 2008 թվականի նախագահական ընտրակեղծիքներով ընտրությունների հետևանքը մարդկային զոհերն էին:

Ներքաղաքական լարվածությունն այն աստիճանի է, որ եթե այն թուլացնելու քայլեր չձեռնարկվեն, ապա կարող է երկրում աղետալի նոր բախումներ լինել, հատկապես գլոբալ քաղաքական իրադարձությունների ֆոնի ներքո, երբ տարածաշրջանային հարցերում շահերի բախումն ու հակամարտությունները չեն կարող չազդել Հայաստանի վրա:

Եվրախորհրդի կողմից Հայաստանի իշխանություններին պահանջ է ներկայացվել վերացնելու մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, բայց ինչպես նախորդ ժամանակներում, երբեմն վերացվում են որոշ այլախոհների իրավունքներն ու ազատությունները, երբեմն էլ ազնիվ ճանապարհով ապրուստի միջոց հայթայթելու հնարավորությունները: Պարզ է, որ այդ սահմանափակումները տարիներով, նույնիսկ ամիսներով պահելը, խաթարելու է պետականության հիմքերն ու ավելի է վնասելու պետությանն ու ժողովրդին:

Տեղի ունեցած ներքաղաքական աղետի պատճառը, ոչ թե ընտրություններն են, այլ ընտրակեղծիքներն ու դրան ծնող պատճառներն են: Եթե քաղաքակիրթ, արդար, ազնիվ ու օրինապաշտ հասարակության մեծամասնություն լիներ, եթե չլինեին ընտրակեղծ մարդկանց ոչ փոքրաթիվ զանգված, այդ թվում նաև օրինապահ մարմիններում, չլինեին ընտրակեղծիքներ, ապա հասարակության կամ ավելի ճիշտ իշխանությունների ու նրան սատարողների և հասարակության մյուս մասի միջև ստեղծության հասնող պառակտում չէր լինի:

Ընտրակեղծիքներով նախագահական ընտրություններից հետո տեղի է ունեցել պետությանն ու ողջ հասարակությանն առնչվող իրավիճակի կտրուկ փոփոխություն: Հասարակության տարբեր հատվածների, ուրեմն և ողջ հասարակության վերաբերմունքը փոփոխվել է իշխանությունների և քաղաքական տարբեր կազմակերպությունների հանդեպ:

Պարզ է, որ ըստ նախագահական ընտրությունների իրական արդյունքների, ոչ ոք չէր ընտրվել:

Նախագահական ընտրություններից հետո պառլամենտում կազմավորված իշխանական կոալիցիան չի կարող ներկայացնել ընտրողների մեծամասնությանն այն պարզ տրամաբանությամբ, որ նրա երկու կուսակցությունների ներկայացուցիչ ՀՀ նախագահի թեկնածուները ընտրողների ձայները ստացել են հանդես գալով որպես ընդդիմություն: Ուստի պարզ չէ, թե նրանց օգտին քվեարկած ընտրողների, որ մասը կպաշտպաներ այդ կուսակցություններին, որպես իշխանության մաս:

Իշխանություններն՝ իրենց իսկ թույլ տված աններելի սխալների հետևանքով, առանց բռնությունների իրադրությունը վերահսկելու հնարավորություն չունեն:

Իշխանությունից հրաժարվելը, ոմանց համար հավասարազոր է մահվան կամ նյութական լուրջ կորուստներ կրելուն:

Չնայած կան առանձին դեպքեր երբ իրար հաջորդող ընտրություններից հետո վիճակներն որոշ երկրներում կայունացել են առանց բռնությունների որովհետև վերջ ի վերջո ընտրության արդյունքները հավաստի են եղել գրեթե բոլորի համար: Օրինակ, Արգենտինայում 2002 թվականից մինչև 2003 թ. մայիս ամիս մի քանի իրար հաջորդող Նախագահական ընտրություններից հետո ընտրվեց հասարակության մեծամասնությանը բավարարող Նախագահ: Բայց կարծում եմ, որ Հայաստանում շուտափույթ նախագահական ընտրությունները դժվար թե ելք հանդիսանան, որովհետև արդար ընտրություններ չեն լինի այն պարզ պատճառով, որ ընտրակեղծիքների կազմակերպիչների մեծ մասը կանցնի հակառակ ճամբար և կկազմակերպի ընտրակեղծիքները հակառակ ճամբարի օգտին, ինչն արդեն եղել է նախորդ ընտրություններում:

Սոսակա ժամանակներս նախագահական նոր ընտրություններ անցկացնելն անհավանական է: Եթե նույնիսկ ներկայիս իրական ընդդիմության ու իշխանության փոխհամաձայնությամբ անցկացվեն նոր նախագահական ընտրություններ, ապա այն հասարակության պառակտումը չի վերացնի և հասարակության լիարժեք կարծիքին համապատասխան իշխանության կազմավորման խնդիրը չի լուծի, քանի որ ընտրվելու է մեկ անձ: Ավելին, նոր առավել վտանգավոր ներքաղաքական ցնցումների առիթ է հանդիսանալու:

Քաղաքական ճգնաժամը պահանջում է քաղաքական լուծումներ: Եթե ներքաղաքական ճգնաժամը քաղաքական լուծում

չգտնի, թեկուզ և որոշակի բարդություններով ու ոչ աղետալի ցնցումներով, ապա նախագահական ընտրություններից հետո ստեղծված իրավիճակի հետևանքները հետագայում կարող են շատ ավելի աղետալի լինել պետության համար, իսկ կորուստներն անդառնալի: Ավելին, եթե Հայաստանի հասարակության մեծ մասը զրկված մնա պետական քաղաքականության, կառավարման, սոցիալ տնտեսական և այլ պետական խնդիրների լուծմանն առնչվող հարցերի վրա ազդելու հնարավորություններից, ապա նրա զգալի մասը կամ լքելու է Հայաստանը կամ համաձայնվելու է անկախության կորստի հետ, որն առավել վտանգավոր է: Իսկ Հայաստանին տարբեր կերպ անկախությունից զրկելու հավակնություններն այլ պետությունների կողմից միշտ էլ առկա են: Որին կամա, թե ակամա նպաստում են տեղի իշխանություններն ու գործարարները, որոնք ավելի շատ զբաղված են սեփական ժողովրդի կեղեքմամբ հօգուտ իրենց և այլ պետությունների ներկայացուցիչների: Մինչդեռ նորմալ երկրի իշխանություններն ու գործարարներն առաջին հերթին կոնսոլիդացնում են հասարակությանը, ի նպաստ իրենց, հասարակության և պետության, լրջորեն զարգացնում են երկրի տնտեսությունն ու մրցակցության մեջ մտնելով այլ երկրների հետ փորձում են առաջին հերթին օգուտներ ստանալ այլ պետություններից ու միջազգային շուկայից:

Այսօր նույնիսկ Հայաստանն այլ պետության, հատկապես Ռուսաստանի կազմում ընդգրկելու հնարավորությունների քննարկումը չի վրդոհում հասարակության զգալի հատվածին և առկա են Հայաստանի ներքին գործերին միջամտելու և քաղաքական որոշումներ թելադրելու փաստեր: Առավել ցավալի է, որ նույնիսկ Ռուսաստանի քաղաքական մեկնաբանի հայտարարությունը կարող է մեծապես ազդել Հայաստանի ընտրությունների ընթացքի և արդյունքների վրա: Շատ ավելի վատ կլինի, եթե Հայաստանն հայտնվի Թուրքիայի ճիրաններում, որը թվում է քիչ հավանական, բայց բացառել նույնպես չի կարելի:

Այսօր խնդիրն ավելի շատ Հայաստանի հասարակության տարբեր խավերին ու խմբերին է վերաբերում, քան թե քաղաքական այս կամ այն գործիչներին ու կազմակերպություններին կամ թե այլ պետություններին, որքան էլ, որ նրանք ազդեցություն ունենան Հայաստանի ներքաղաքական կյանքի վրա:

Արդարության պահանջի բավարարման և պետական կառույցների հանդեպ վստահության վերականգնման խնդրի

լուծմանն ուղղված քայլերն այսօր առավել հրատապ են, քան պետական կառույցների միջոցով բռնությունների գործադրմամբ կամ այլ արհեստական միջոցառումներով, ինչպիսին է նաև ներպառլամենտական չորս կուսակցությունների կռախիցիայի ստեղծումը, այնուհետև դրա ձևական տարանջատումը, թվացյալ կայունության հաստատումն ու պահպանումը:

Որպեսզի պատասխանել հարցին, թե հասարակության ու պետության համար, որն է ճիշտ ելքը ստեղծված վիճակից, պետք է տեսնել թե ինչպիսի քաղաքական լուծումներն են, որ կբավարարեն հասարակության մեծամասնության պահանջներին, չնայած կասկածելի է, որ հասարակության զգալի հատվածին ստամոքսից ու զվարճություններից առավել պետության ու ազգային հարցերն են հուզում:

Բայց և միայն պառլամենտն է, որտեղ կարող է ապահովվել հասարակության տարբեր խավերի ու խմբերի շահերին համապատասխան իշխանական քաղաքական ներկայացուցչություն:

Ներկայիս իրավիճակում միայն արդար ընտրություններն են, որ կարող են բավարարել հասարակության այսօրվա առավել լիարժեք պահանջներին:

Եթե պետության և հասարակության շահերով առաջնորդվող քաղաքական գործիչներն ու կազմակերպությունները հասնեն նոր պառլամենտական ընտրությունների, որքան հնարավոր է արդար անցկացմանը, ապա կնպաստեն հասարակական համերաշխությանն ու պետականության հիմքերի խարխլման հետագա գործընթացների կասեցմանը:

Քիչ թե շատ քաղաքակիրթ երկրներում ներքաղաքական ճգնաժամերի ելքերը պառլամենտների նոր ընտրություններ են եղել, անկախ այն բանից թե որքան ժամանակ առաջ են ընտրվել դրանք: Կարելի է բերել բազմաթիվ երկրների օրինակներ, թեկուզ և Իտալիայի, Ճապոնիայի, Իսպանիայի, Բելգիայի և այլ բազմաթիվ երկրների, եթե չասենք բոլոր քաղաքակիրթ երկրների օրինակները, երբ պառլամենտն ընտրվելուց շատ կարճ ժամանակահատված հետո լուծարվում է ու անց են կացվում նոր պառլամենտական ընտրություններ:

Մինչ Նախագահական ընտրություններն ու դրանից հետո տեղի ունեցած հայտնի իրադարձությունները իրավիճակն այլ էր: Հիմա առկա քաղաքական ճգնաժամի պարագայում, ոչ ոք չի կարող ասել թե հասարակության յուրաքանչյուր անդամի կարծիքն ինչպիսին է իրավիճակի, իշխանությունների, նրա մաս կազմող կուսակցու-

թյունների, ընդդիմադիր ու այլ քաղաքական կազմակերպությունների ու գործիչների մասին:

Հասարակության բոլոր անդամների կարծիքի բացահայտման այլ ճշգրիտ ձև, քան ընտրություններն են, առայժմ չկա: Իսկ ցանկացած առանձին մարդու կամ կազմակերպության կարծիքը, ով էլ ուզում է նա լինի, ընդամենն առանձին կարծիք է և հասարակության ընդհանրական կարծիք չէ:

Քաղաքական կազմակերպություններին առկա խնդիրների լուծման ճանապարհները ներկայացնելու հնարավորություն ընձեռելու, դրանք գնահատելու ու ընտրողների կարծիքի բացահայտման ու վերաբերմունքի արտահայտման համամասնությունները պարզելու միակ միջոցն արդար ընտրություններն են: Առավել ևս պառլամենտի ընտրությունները:

Նոր պառլամենտական արդար ընտրությունները որոշ գործարարների, քաղաքական գործիչների ու կազմակերպությունների շահերից չբխելու կամ նրանց շահերին համընկնելու հանգամանքն առավել կարևոր չէ, քան այն, որ դա միանշանակ բխում է հասարակության յուրաքանչյուր անդամի շահերից: Կարծում եմ՝ վերջին պնդումն անվիճելի է, թեկուզ այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուրն, այդ թվում պնդմանը հակառակ կարծիքն ունեցողը, հնարավորություն է ստանում քվեարկությամբ արտահայտել իր կարծիքն իրադրության և պետական հետագա քաղաքականության վերաբերյալ:

Պառլամենտի արդար ընտրություններին նպաստող նոր օրենսդրությամբ ընտրություններն այսօր անհրաժեշտություն են, ճիշտ է, այն որոշակի անկայունություն է առաջ բերելու, բայց ավելի լավ է մեկ անգամ ոչ աղետալի ցնցումն ու հետագա փոքրիկ ցնցումները և լարվածության թուլացումը, քան լարվածության ուժեղացումն ու հետագայում երկրի համար առավել կործանարար պայթյունը:

- Պառլամենտի արդար ընտրությունները նշանակում է՝
1. Ժողովրդին վստահել գնահատել իրավիճակը և արդյունքում ձևավորել քիչ թե շատ իր համար այսօրվա համար վստահելի քաղաքական իշխանություն, այսինքն՝ դրությունը պարզելու հնարավորությունը վերապահել ընտրողներին, որն էլ կխթանի լարվածության թուլացմանը:
 2. Նախագահի պաշտոնը մնալով առկա իշխանությունների ձեռքում դեռ բավական ժամանակ երաշխիք կհանդիսանա նրանց համար:

3. Նոր պառլամենտը կբավարարի իշխանությունների տարանջատման պայմանին: Իսկ ընտրությունից հետո ձևավորված կառավարությունը կլինի առավել վստահելի հասարակության համար: Չեմ կարծում, թե կան մարդիկ, որոնք կարող են առանց հստակ պարզելու հասարակության կարծիքը նրա համար վստահելի կառավարություն ձևավորել կամ հասարակության մեծամասնությանը բավարարող ելքեր գտնել, առավել ևս երբ այդ կարծիքն այսօր պարզ չէ:

4. Նոր պառլամենտի կազմավորման ժամանակ, եթե ներկայիս իշխանության մաս կազմող քաղաքական ուժերը, ոչ թե վերցնեն, այլ համոզեն և ստանան ընտրողների մեծամասնության քվեն, ապա մյուս ընդդիմադիր կուսակցությունները կհանդարտվեն և փողոց դուրս չեն կարողանա բերել հարյուր հազարավոր մարդ: Իսկ եթե այլ կուսակցություններ ստանան ընտրողների մեծամասնության քվեն, ապա ընտրողների մեծամասնության կարծիքն այդ է: Այսինքն՝ երկու դեպքում էլ հասարակության վստահության և արդարության հանդեպ պահանջը որոշ չափով կբավարարվի ու ներպետական կայունության երաշխիքը կհանդիսանա հասարակությունը, որը տվյալ պարագայում ամենակարևորն է:

Այսպիսով, ներքաղաքական ճգնաժամի առավել ճիշտ լուծումը դա պառլամենտական նոր ընտրություններն են, քիչ թե շատ նորմալ ընտրությունների անցկացման պայմանների ապահովմամբ:

Առաջիկայում հնարավոր է քիչ թե շատ արդար ընտրություններ անցկացնել կամ գոնե ընտրությունների արդյունքները հասարակության համար վստահելի դարձնել: Իսկ ներկայումս արդար ընտրությունների հանդեպ հասարակության մեծամասնությունն ունի լուրջ պահանջ:

Բավարարվենք արդար ընտրությունների անցկացմանը նպաստող մի քանի նորմերի թվարկմամբ:

Ներկայումս կարևորն այն է, որ նրանք, ումից կախված է պետության համար ամենակարևոր հասարակական համերաշխության խնդրի լուծումը, իրենց անձնական շահերը չգերադասեն պետական ու հասարակական շահերից ու չտանեն պետությունը դեպի կործանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՄԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԷՖԵԿՏԻՎ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ինչևէ, 1995 թվականից սկսած Հայաստանում բոլոր կազմավորված իշխանությունների օրինականությունը կասկած է հարուցում, իսկ հասարակության, թերևս ոչ փոքր մասի անվստահությունն իշխանությունների ու սեփական քաղաքակիրթ ժողովրդավարական անկախ պետություն ունենալու հնարավորության հանդեպ ավելի է խորանում:

Պետք է նշել, որ երբ հարկ է լինում դիմել ժողովրդին որևէ հարցում աջակցություն և պաշտպանություն ստանալու, ապա բոլորը հանդես են գալիս, որպես ժողովրդավարներ և ժողովրդի ինքնիշխանության միակ կրողի կողմնակիցներ, իսկ երբ առաջարկվում է իշխանության կազմավորման հարցը բացարձակապես ու լիարժեքորեն թողնել ընտրողներին, ապա տարբեր կուսակցությունների որոշ ներկայացուցիչների կողմից արվում են պնդումներ, թե Հայաստանում դեռևս քաղաքացիական հասարակություն չի ձևավորվել, իբր՝ ժողովրդի իրավաքաղաքական գիտակցությունը ցածր է, իսկ սոցիալ տնտեսական ծայրահեղ ծանր իրավիճակում, իբր՝ ժողովուրդն ընդունակ չէ նորմալ ընտրություն կատարել:

Հետևաբար մի մասի կարծիքով պետք է պառլամենտում օրենսդրորեն հստակ սահմանված տեղեր հատկացվի կուսակցություններին, իսկ ընտրողների շրջանում 5%-ից բարձր քաղաքական վարկ ունեցող կուսակցությունների ղեկավարները կուսակցական ցուցակների առաջին տեղերն զբաղեցնողները, անկախ մնացած ընտրողների նրանց նկատմամբ ունեցած իրական վերաբերմունքից, պետք է ընտրված համարվեն, ավելին, նրանք պետք է ընտրվելու 2 հնարավորությունից օգտվեն. մեկը ցուցակներից մյուսը միամանդատ ընտրատարածքներից: Իսկ մյուս մասի կարծիքով պետք է անցկացվեն միայն միամանդատ մեծամասնական ընտրական համակարգով ընտրություններ:

Որպեսզի պարզ լինի, թե տարբեր ընտրական համակարգերը, ինչ չափով են հաշվի առնում ընտրողների իրական կարծիքն ու ինչպես կարող են ազդել խորհրդարանի կազմավորման վրա, համառոտ ներկայացնենք ընտրական համակարգերը բնութագրող հիմնական սկզբունքները և դրանց առավելությունների ու թերությունների վերաբերյալ որոշ վերլուծություններ:

Նշենք այն թերություններն ու բացերը, որոնք առկա են համա-

մասնական, կապված ցուցակներով և միամանդատ հարաբերական մեծամասնական ընտրակարգերի համադրու-թյամբ ընտրություններում:

Ա. Համամասնական կապված ցուցակներով ընտրակարգերում՝

1) Ընտրողը քվեարկում է կուսակցության (ցուցակով ներկայացված թեկնածուների խմբի) օգտին, այսինքն՝ ոչ թե ուղղակիորեն է ընտրվում թեկնածուն, այլ ինչ որ չափով միջնորդավորված ձևով: Այդ իմաստով կուսակցության ցուցակով ընտրված թեկնածուն ավելի շատ պատգամավորական տեղեր ստացած կուսակցության ներկայացուցիչ է, քան թե ընտրողների անմիջական ներկայացուցիչ խորհրդարանում: Այլ կերպ ոտնահարվում է առաջնային մանդատի հասկացությունը: Իսկ եթե ավելացնեք, որ պառլամենտում կարող է մի կուսակցության ցուցակով անցած պատգամավորը փոխել նաև կուսակցական պատկանելիությունը և անցնել այլ խմբակցություն, ապա նշված թերությունն ավելի ցայտուն է դառնում:

2) Ցուցակներում, ըստ հերթականության գրանցված թեկնածուների ընտրվելու հնարավորությունները տարբեր են: Ցուցակի առաջին մի քանի տեղում գտնվող թեկնածուների ընտրվելու հավանականությունն ավելի մեծ է, քան հաջորդ տեղերում գտնվողներինը, այսինքն, առաջանում են առաջին, երկրորդ, երրորդ և այլ կարգի թեկնածուներ: Իսկ ցուցակներում առաջին տեղը զբաղեցնելու համար առաջացող ներկուսակցական պայքարն ավելի կթուլացնի կուսակցություններին: Ավելին, նպաստում է անձնական, ոչ գաղափարական կուսակցությունների ստեղծմանն ու դրանց թվի ավելացմանը:

3) Առաջանում են, ըստ իրավունքի I-ին կարգի՝ ցուցակներում I-ին տեղերը զբաղեցնող, ավելի մեծ հնարավորությամբ ընտրվելու հավակնություն ունեցող թեկնածուներ, 2-րդ կարգի՝ ցուցակներում վերջին տեղերը զբաղեցրած թեկնածուներ, որոնք ստանում են, թե ցուցակներով, թե միամանդատ ընտրատարածքից ընտրվելու երկու հնարավորություն և վերջապես 3-րդ կարգի թեկնածուներ միայն միամանդատ ընտրատարածքից ընտրվելու հնարավորությամբ:

4) Ինչպես ցույց է տալիս շատ երկրների փորձը, որը թերևս բացառություն չէ նաև Հայաստանի համար, ընտրողներն ավելի շատ հակված են քվեարկելու և քվեարկում են հիմնականում այս կամ այն կուսակցության ցուցակում առաջինը գրանցված քաղա-

քական հայտնի գործիչի օգտին, ավելի քիչ ուշադրություն դարձնելով ցուցակի մյուս անձանց քաղաքական, բարոյական և այլ հատկանիշներին, ինչը հնարավորություն է ընձեռում կուսակցություններին ցուցակներում այս կամ այն շահադիտական, նեղանձնական նկատառումներով ընդգրկել և համապատասխան ձայներ ստանալու դեպքում անցկացնել ընտրողների անմիջական հավանությունը չստացած և աջակցությունը չվայելող անձանց կամ փողի համար կուսակցական ցուցակ ընդգրկել բիզնեսի ներկայացուցիչներին կամ խոշոր մենաշնորհատերերին բիզնեսը պաշտպանելու համար ստեղծել սեփական կամակատար կուսակցություն և փողով անցկացնել պառլամենտ: Օրինակ՝ Իտալիայում նշված հանգամանքը խիստ անդրադառնում էր խորհրդարանի աշխատանքների և ներքաղաքական իրավիճակի վրա, որի պատճառով Իտալիայում հանրաքվեի միջոցով համամասնական ընտրակարգերից անցան մեծամասնական ընտրակարգերի:

5) Փաստարկը, համաձայն որի համամասնական ընտրակարգերով ընտրություններն ավելի են նպաստում կուսակցությունների ձևավորմանը, կայուն աշխատող խորհրդարանի առկայությանը, ինչպես երևում է մի շարք երկրների փորձից, այնքան էլ հիմնավոր չէ: Բերենք, թեկուզ Իտալիայի, Ֆրանսիայի 1985 թվականի օրինակը: Հայաստանի 1995-2007 թվականների ընտրությունների մասին խոսելն իմաստ չունի:

6) Պատգամավորները կուսակցություններից ավելի խիստ կախման մեջ կլինեն և պատասխանատվության զգացումը ընտրողների նկատմամբ շատ ավելի թույլ կլինի:

7) Ամենակարևորը, մանդատները բաշխվում են 5%-ից ավելի ձայներ ստացած կուսակցությունների միջև, իսկ 5%-ից պակաս ձայներ ստացած կուսակցությունները մանդատ չեն ստանում և նրանց տրված ձայները հաշվի չի առնվում, նույնիսկ եթե այդ ձայների գումարային մեծությունը կազմի չափազանց մեծ տոկոս: Օրինակ՝ ենթադրենք՝ քվեարկվել են 23 կուսակցություններ, նրանցից 20-ը ստացել են 5%-ից պակաս ձայներ, բայց այդ ձայների գումարը կազմում է մասնակիցների ձայների, ավելի քան 70%-ը, այս դեպքում ընտրողների 70%-ից ավելի ձայները նշանակություն չեն ունենում պառլամենտի կազմավորման համար, հետևաբար պառլամենտը կներկայացնի միայն ընտրություններին մասնակցած ընտրողների 30% -ից պակաս ընտրողներին: Նկատի ունենալով նշված հանգամանքի չափազանց կարևորությունը՝

բերենք պարզ օրինակ թվերով: Այսպես՝ ցուցակներին հասանելիք մանդատների թիվը 90 է: Ենթադրենք՝ ընտրություններին մասնակցել են 100 ընտրող, 1-ին կուսակցությունը ստացել է 13 ձայն՝ 13%, 2-րդ կուսակցությունը 10 ձայն՝ 10%, 3-րդ կուսակցությունը 6 ձայն՝ 6%, մյուս 20 կուսակցություններից յուրաքանչյուրը ոչ ավելի քան 5 ձայն՝ 5%-ից պակաս ձայներ, միասին հաշված 71 ձայն 71%:

1-ին կուսակցությունը կստանա $(13 \cdot 90 / (13 + 10 + 6) = 13 \cdot 90 / 29 = 40,35)$ 40 մանդատ:

2-րդ կուսակցությունը կստանա $(10 \cdot 90 / 29 = 31,03)$ 31 մանդատ:

3-րդ կուսակցությունը կստանա $(6 \cdot 90 / 29 = 18,62)$ 19 մանդատ:

Այսպիսով՝ 1-ին կուսակցությունը կստանա մանդատների $40 \cdot 100 / 90 = 44,44\%$ -ը՝ ունենալով քվեարկությանը մասնակցած ընտրողների 13%-ի ձայները: 2-րդ կուսակցությունը ստացավ մանդատների $31 \cdot 100 / 90 = 34,44\%$ -ը՝ ունենալով քվեարկությանը մասնակցած ընտրողների 10%-ի ձայները: 3-րդ կուսակցությունը ստացավ մանդատների $19 \cdot 100 / 90 = 21,1\%$ -ը՝ ունենալով քվեարկությանը մասնակցած ընտրողների 6%-ի ձայները: Ստացվում է, որ պառլամենտում ներկայացվում է 3 կուսակցություն, որոնք միասին կունենան ընդամենը ընտրությանը մասնակցած ընտրողների 29% ձայները, իսկ մնացած 71% ընտրողների ձայներն անիմաստացավ:

Իհարկե, օրինակը խստացված է, բայց գործնականում հնարավոր է թե ստացվի այնպես, որ ընտրություններին մասնակցած ընտրողների ձայների բարձր տոկոսն անիմաստանա, դժվար է ասել, թե սույն օրինակով ցույց տրված երևույթը ժողովրդավարության պահանջներին լիարժեք բավարարող պայման է: Չնայած Հայաստանում 1999 թվականի պառլամենտական համամասնական ընտրակարգով ընտրություններում, օրենսգրքի պահանջներին համապատասխան, հաշվի չի առնվել վավեր ձայների մոտ 18%-ը: 2003-ին՝ 17%-ը 2007-ին՝ 29%-ը:

Բ. Այժմ նշենք մի քանի հանգամանք, որը կարելի է դիտարկել, որպես միամանդատ մեծամասնական ընտրակարգերի թերություն:

1) Հաշվի առնելով, որ ընտրատարածքների ընտրողների միջին թիվը կկազմի մոտ մի քանի տասնյակ հազար մարդ, այսինքն՝ ընտրատարածքները փոքր են, առավել հավանական է թվում, որ կընտրվեն այն անձինք, ովքեր ունեն մեծ և ոչ միայն քաղաքական ազդեցություն, համապատասխան ընտրատարածքի, ընտրողների վրա:

2) Ընտրատարածքի փոքր լինելն ավելի հեշտ է դարձնում օգտագործելով ընտրողների սոցիալական ծանր վիճակը նրանց վրա սոցիալական ազդակներով ներգործելու միջոցով արդյունքի հասնելու հավանականությունը, ինչպես նաև ուժային ու թաղային ճնշման միջոցներն ավելի մեծ հնարավորություն կընձեռեն այս կամ այն թեկնածուին ընտրվելու համար և այլն:

3) Քանի որ ընտրատարածքից ընտրվում է մեկ թեկնածու, կոշտ մրցակցության հետևանքով շատ արժանի թեկնածուներ հնարավոր է, որ չընտրվեն նույնիսկ ունենալով ընտրատարածքի ընտրություններին մասնակցած ընտրողներից շատերի ձայները, բայց ընտրվողից մի քանիսով պակաս ձայներ: Հետևաբար կարելի ասել, որ ընտրատարածքում ընտրություններին մասնակցած ընտրողների զգալի մասը զրկվում է իր կարծիքը ներկայացնող պատգամավորն ունենալու հնարավորությունից:

Նախատեսված երկու համամասնական և միամանդատ մեծամասնական ընտրական համակարգերի համադրումը դրանցում առկա թերություններ չեն վերացնում, իսկ այդ հնարավոր է, որ երկուստեք, թե իշխանությանը և թե ընդդիմությանը որոշ նկատառումներով, համենայն դեպս ըստ իրենց հաշվարկների, ձեռնտու է: Իսկ իրականում, սայրը երկսայր է լինում. այն ինչ այսօր ձեռնտու է մեկին հնարավոր է, որ վաղը դա վնասի հենց իրեն: Իսկ ընդունված ընտրական նոր օրենսգրքով նախատեսված ընտրական հանձնաժողովների կազմավորման կարգը ենթադրել է տալիս, որ արդար և ազատ ընտրություններից թերևս հեռու ենք կանգնած: Իսկ ինչ մնում է ընտրությունների անցկացման խախտումների համար սահմանված պատասխանատվությանը, ապա դժվար թե այն մասսայական կիրառվի, քանի, որ ընտրական հանձնաժողովի անդամների մեծ մասը լինելու են իշխանության ներկայացուցիչներ և աշխատելու են նրանց օգտին, քանզի առկա պետական համակարգում պետական ծառայողները և ոչ միայն նրանք առավել կախվածություն ունեն վերադասից, քան օրենքից, իսկ օրենքը նրանց դեմ կիրառվում է այն ժամանակ և այնքանով, որքանով դեկլարությունն է ցանկանում և գործադրում: Իսկ հանձնաժողովներն աշխատելով կոնկրետ կուսակցության կամ թեկնածուի համար հնարավորին չափ կարող են խեղաթյուրել քվեարկությունների իրական արդյունքները, նույնիսկ արձանագրությունները ոչ պատշաճ կազմելով և դրանք հարմարեցնելով որոշակի պահանջների:

Բոլոր դեպքերում, թեկուզև վատ օրենքներով անցկացվող ընտրությունների արդյունքները կեղծելու հնարավորությունն այնքան քիչ կլինի, որքան շատ ընտրողներ մասնակցեն ընտրությանը և ունենան ակտիվ դիրքորոշում արդար ընտրությունների անցկացման հարցում և քիչ մարդիկ շահագրգռված ու հակված լինեն ընտրությունները կեղծելուն, իսկ ցանկացած կեղծիքով և առանց ժողովրդի աջակցության ձևավորված իշխանությունն ի վերջո պետության ռազմավարական խնդիրների լուծման ժամանակ դժվարություններ է ունենալու, և չի կարող միջազգային հանրության հետ փոխհարաբերություններում նրանց կողմից դիտվել, որպես լուրջ գործընկեր, արդյունքում գիջելու է կարևոր հարցերում:

Ակնհայտ է, որ ընտրական օրենսգիրքը նորից է ենթարկվելու փոփոխության:

Ըստ իս, ընտրողների շահերն ու ցանկություններն առավելագույնս հաշվի առնող և առավել արդյունավետ խորհրդարանի կազմավորմանը նպաստող ընտրությունները կլինեին, եթե կիրառվի ընտրողների ընտրատարածքներին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունքի սկզբունքով, բազմամանդատ, մեծամասնական ընտրական համակարգ, որը հանդիսանալով վերը ներկայացված երկու ընտրական համակարգերի համադրություն և այլ ընտրական համակարգերի առավելություններն իր մեջ ներառող և դրանց թերությունները հնարավորին չափ բացառող տարբերակ ենթադրում է, որ

- 1) Հայաստանի Հանրապետության տարածքը կարելի է համարել մեկ ընտրատարածք կամ կարելի է այն բաժանել ընտրատարածքների, ըստ մարզերի, կամ 20 (կամ այլ թվով 11) ընտրատարածքների:
- 2) Յուրաքանչյուր ընտրատարածքից պետք է ընտրվեն այն թվով պատգամավորներ, որքան որ կստացվեր Ազգային Ժողովի պատգամավորների թիվը բաժանած ընտրատարածքների թվի վրա:
- 3) Թեկնածուները կարող են առաջադրվել, թե ընտրողների և թե կուսակցությունների կողմից, ընդ որում յուրաքանչյուր կուսակցություն կարող է յուրաքանչյուր ընտրատարածքում ցուցակով առաջադրել ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով թեկնածուներ:
- 4) Յուրաքանչյուր ընտրող ունի ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունք, այսինքն՝ կարող է քվեարկել

ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով թեկնածուների օգտին, որն ընձեռում է ընտրողին հնարավորություն իր հայեցողությամբ քվեարկելու, թե կուսակցության օգտին, որը նույնն է, թե կուսակցության բոլոր թեկնածուների օգտին, թե կուսակցությունների այս կամ այն թեկնածուի, ինչպես նաև անհատապես առաջադրված թեկնածուների օգտին:

5) Ընտրված են համարվում ամենաշատ կողմ ձայներ ստացած կամ եթե սահմանվում է քվոտա, ապա քվոտայից ավելի ձայներ ստացած ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով թեկնածուները:

6) Քվոտայի սահմանման և ընտրատարածքին հասանելիք թափուր մանդատներ մնալու դեպքում դրանք տրվում են կուսակցություններին, ըստ ցուցակների թեկնածուների գումարային ձայների և տրվում է մանդատ չստացած ցուցակի ավելի շատ ձայներ ստացած թեկնածուին:

Ներկայացնենք այն առավելությունները, որ առկա են այս ընտրանում:

- 1) Առավելագույնս հաշվի է առնվում ընտրողների մեծամասնության կարծիքն ու ցանկությունները:
- 2) Բոլոր թեկնածուների համար օրենքով նախատեսվում և ապահովվում է ընտրվելու հավասար պայմաններ:
- 3) Ընտրությունների արդյունքներից պարզ են դառնում քվեարկությանը մասնակցած կուսակցությունների քաղաքական վարկի՝ ընտրողների կողմից գնահատման քանակական չափանիշները, ինչպես նաև կուսակցության թեկնածուների ու անհատապես առաջադրված թեկնածուների անձնական հատկանիշներն ընտրողների կողմից գնահատման առավել իրական պատկերը, որոնց համապատասխան և կազմավորվորվում է խորհրդարանը:
- 4) Ընտրողը կարող է քվեարկել կուսակցության (ցուցակով ներկայացված թեկնածուների խմբի) օգտին, այսինքն՝ իր հայեցողությամբ ուղղակիորեն ընտրում է կուսակցության թեկնածուներին: Հետևաբար միջնորդավորված ընտրությունները բացառվում են: Իսկ կուսակցության ցուցակով առաջադրված և ընտրված թեկնածուները հանդիսանալով կուսակցության ներկայացուցիչներ, կհանդիսանան նաև համապատասխան ընտրատարածքի ընտրողների անմիջական ներկայացուցիչներ խորհրդարանում:
- 5) Ընտրվում ու խորհրդարանում ընդգրկվում են ընտրողների անմիջական հավանությունը և աջակցությունը ստացած անձինք:

6) Եթե ընտրողները ուղղակի թեկնածուների ընտրության հարցում չեն կողմնորոշվում, այսինքն՝ քվեարկության արդյունքներով որոշվող քվոտայից պակաս ձայներ ստանալու պատճառով ընտրատարածքին հասանելիք մանդատների լրիվ ուղղակի բաշխում տեղի չի ունենում, ապա ըստ ընտրողների տրված ձայների մանդատները համամասնորեն բաշխվում են կուսակցական ցուցակների միջև և ըստ ընտրողների նախապատվության տրվում են կուսակցական ցուցակների ամենաշատ ձայներ ստացած, բայց ուղիղ մանդատ չստացած թեկնածուներին: Այնպես որ կուսակցություններին որոշ առավելություն է տրվում, բայց հաշվի է առնվում ընտրողների իրական կարծիքը, թե կուսակցությունների, թե թեկնածուների վերաբերյալ:

7) Պատգամավորների պատասխանատվության զգացումն ուղղա-կի ընտրողների հանդեպ շատ ավելի բարձր կլինի:

8) Հաշվի առնելով, որ ընտրատարածքների ընտրողների միջին թիվը շատ կլինի, այսինքն՝ ընտրատարածքները մեծ կլինեն, նվազում է ընտրատարածքի փոքրաթիվ ընտրողների վրա ոչ քաղաքական մեծ ազդեցություն ունեցող անձանց ընտրվելու հավանականությունը:

9) Ընտրատարածքի մեծ լինելը նվազեցնում է, օգտագործելով ընտրողների սոցիալական ծանր վիճակը, նրանց վրա սոցիալական ազդակներով ներգործելու միջոցով արդյունքի հասնելու հավանականությունը, ինչպես նաև պակասում է ուժային ու թաղային ճնշման միջոցների կիրառմամբ այս կամ այն թեկնածուին անցկացնելու հնարավորությունը:

10) Վերանում է համամասնական, կապված ցուցակներով, ընտրակարգում առաջացող առաջին, երկրորդ, երրորդ և այլն կարգի թեկնածուների ընտրվելու հնարավորությունների տարբերությունները: Բացառվում է թեկնածուների, օրենքով առաջ բերվող, դասակարգումն ըստ կարգերի:

11) Բոլոր թեկնածուների համար օրենքով ապահովվում է հավասար պայմաններ:

12) Այս կամ այն թեկնածուների ընտրվելու հարցը լուծվում է հաշվի առնելով միայն ընտրողների քվեարկությամբ արտահայտված ցանկությունը, ընդ որում ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունքի կիրառումը ձայների բազմապատկման (մոտ 2000000-ի փոխարեն ստացվող 1000000 կամ ավելի) շնորհիվ, հնարավորություն է տալիս

պատգամավորների ընտրության հարցում ընտրողների ընդհանուր կարծիքը հաշվի առնել առավել ճշտությամբ:

13) Բազմամանդատ, ընտրողի ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունքով, մեծամասնական ընտրակարգով ընտրությունները ոչ միայն նպաստում են ընտրողների տարբեր խավերի իրական շահերն արտահայտող խոշոր կուսակցությունների ձևավորմանը, այլ նախապես որոշ չափով սահմանափակում են, ըստ կուսակցության հանդեպ ունեցած պարտքի, ներխորհրդարանական կուսակցական խաղերով զբաղվելու պարտականությամբ պատգամավորների ընտրվելու հնարավորությունները:

14) Բազմամանդատ մեծամասնական ընտրակարգերով ընտրությունները ընտրողին հնարավորություն են ընձեռում իր հայեցողությամբ, ուղղակի, անմիջականորեն ընտրելու և գաղափարախոսություններ և ծրագրեր և մարդկանց:

15) Եթե միամանդատ մեծամասնական ընտրական ընտրությունների ժամանակ տեղամասում, որևէ թեկնածուի օգտին, ինչ որ մեկի կողմից քվեաթերթիկների խումբը քվեատուփ գցելը հնրավոր է, որ կարող է նպաստել այդ թեկնածուին, ապա այս ընտրակարգով ընտրությունների ժամանակ որևէ թեկնածուի օգտին քվեաթերթիկների խումբը քվեատուփ գցելն ինչ որ չափով դառնում է անիմաստ, քանզի ավելացնում է քվոտան այսինքն՝ ուղղակի անցնելու համար ձայների նվազագույն թիվը, հետևաբար և նշված թեկնածուի անցնելու հնարավորությունը:

16) Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրակարգերի ընկալելիությանը մեծամասնության համար, կարծում եմ, որ նախ և քվեարկության մեխանիզմները և արդյունքների ամփոփման կարգը բավականաչափ պարզ են: Իսկ երկրորդն ու ամենակարևորը ընտրողների կողմից կրնկալվի այն, ավելին, մի թե ընտրողը չի կարող մի քանի տասնյակ թեկնածուներից իր ընտրատարածքում, ըստ իր հայեցողության ընտրել 5 կամ 6, կամ 7, կամ ավելի թվով թեկնածուներ, կախված ընտրատարածքին հասանելիք մանդատների թվից, եթե հարցնենք, ապա կպարզվի, որ ոչ միայն կարող է, այլ նաև հնարավոր է, որ ուզում է: Իսկ ինչ մնում է տեխնիկական խնդիրներին, ապա դա ընտրական հանձնաժողովների գործն է, հատկապես կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

17) Կմեծանա ժողովրդի վստահությունն ինչպես ընտրությունների, այնպես էլ խորհրդարանի, իշխանությունների, օրենքների և

սեփական պետության հանդեպ:

Ինչևէ, ընտրողի ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունքի սկզբունքով, բազմամանդատ մեծամասնական ընտրակարգերի առավելությունների վերաբերյալ փաստարկների թվարկումը կարելի էր շարունակել, բայց կարծում եմ՝ թվարկվածներն էլ բավական են:

Հաշվի առնելով կուսակցությունների հիրավի պետական նշանակության շահերը, եթե նրանք վեր կանգնեն նեղ կուսակցական, հատկապես, թե իշխող և թե ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների շահերից, ապա բազմամանդատ ընտրական համակարգով ընտրություններն ավելի է համապատասխանում ժողովրդավարության պահանջներին և արդարության սկզբունքներին: Չնայած բոլոր դեպքերում էլ ընտրությունների արդյունքներից ընտրողների պատասխանը կերևա, միայն թե համամասնական և միամանդատ մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների դեպքում հնարավոր է, որ կազմավորվի պատասխանին ոչ համարժեք խորհրդարան, այն դեպքում, երբ բազմամանդատ մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների արդյունքում, առավել մեծ ճշտությամբ, կկազմավորվի ընտրողների պատասխանին համարժեք խորհրդարան:

Բոլոր դեպքերում, քաղաքակիրթ ձևով, առկա ընտրողների հաշվառումը կազմակերպելով, բոլոր ընտրողներին մինչև քվեարկության օրը, պատգամավորության բոլոր թեկնածուների վերաբերյալ տվյալներով ցուցակների հատկացումն ապահովելով, ընտրությունները քվեմեքենաներով անցկացնելով ու մեքենայի կողմից ամփոփված արդյունքները բոլորի համար տեսանելի պայմաններում հեռուստախցիկի առաջ բացելով ու հրապարակելով, հանձնաժողովների սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունները բացառելով, ազատ և արդար ընտրությունների կազմակերպումը, պետության և հասարակության վստահաբար առաջընթաց զարգացման երաշխիք կհանդիսանա:

Հարկ է նշել, որ քվեմեքենաներ կպահանջվեին ընդամենը տեղամասերի քանակի թվով: Իսկ ինչպես ցույց է տալիս փորձը, ժողովրդավարության հաստատման համար ծախսերի բացակայությունը կամ ձևական ծախսերով սահմանափակվելն ավելի թանկ է նստում ցանկացած ժողովրդի վրա, քան թե

քաղաքակիրթ ազատ և արդար ընտրություններով, ընտրողների վստահությանն արժանի իշխանությունների ձևավորումը: Կարելի է նաև ընտրությունների հանդեպ վստահությունը բարձրացնել նաև, այսպես ասած, կարուսելի հնարավորությունը բացառելու նպատակով, քվեարկության ավարտից անմիջապես հետո տեղամասերից փակ քվեատուփերը մարզկենտրոններ տեղափոխելով և բազմաթիվ մարդկանց ներկայությամբ քվեարկության արդյունքներն ամփոփելով, իսկ ամփոփումը վերապահելով վիճակահանությամբ ընտրված մարդկանց, որպեսզի որևէ շահագրգիռ կողմ հնարավորություն չունենա քվեաթերթիկների հետ մանիպուլյացիա անելու և արձանագրություններում ճշտումներ մտցնելու: Ընտրությունների հանդեպ կարող է վստահություն ներշնչել նաև տեղամասերում արդյունքների ամփոփման առաջին իսկ արձանագրությունների տվյալներն արագ կենտրոնացված աղյուսակի ձևով հրապարակելը: Քանի որ ինտերնետում տեղադրված են ընտրողների տվյալները, ապա եթե այդ տվյալներում յուրաքանչյուր ընտրողի համար նշվի նաև ընտրություններին նրա մասնակցությունը հեշտ կլինի բացահայտել լցոնումները և այլոց փոխարեն մասնակցության գրանցման փաստերը: Ինչպես նաև անարդարության հնարավորությունը բացառող շատ այլ մեխանիզմների օրենսդրությամբ նախատեսելն ու կիրառելը:

Միշտ չէ, որ ընտրությունների անցկացումը օրենքի պահանջներին համապատասխան նշանակում է, որ ընտրություններն արդար են, օրենքը կարող է այնպիսին լինել, որ հնարավորություն տա ընտրություններն ամբողջապես օրինական անցկացնել, բայց ընտրություններն արդար չլինեն, մասնավորապես օրենքով սահմանված կարգերն, իսկ որոշակի խոչընդոտներ առաջացնեն ընտրողների իրենց ընտրելու իրավունքն իրականացնելու համար, իսկ ընտրողների որոշ մասը հրաժարվի այդ խոչընդոտները հաղթահարելուց չհավատալով արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման հնարավորությանը:

Այնպես որ լավ օրենքը քաղաքակիրթ, արդար և ազատ ընտրությունների անցկացման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Իհարկե պարզ է, որ միայն լավ ընտրական օրենքը դեռ ազատ և արդար ընտրությունների անցկացման բավարար պայման չէ, բայց դրա նշանակություն չափազանց կարևոր է:

Ազատ և արդար ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ է ոչ միայն լավ ընտրական օրենքներ, այլ ազատ մարդկանց մեծամասնությամբ հասարակություն, պետական կառավարման քիչ թե շատ կատարյալ համակարգ, տնտեսության զարգացմանը նպաստող փոխհարաբերություններ ամրագրող կանոններ: Ազատ և արդար ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ է նաև մարդու իրավունքներն ու բոլորի օրենքի առաջ հավասարությունն ապահովող իրավական դաշտ և օրենքի գերակայությունը երաշխավորող մեխանիզմների գործնական կիրառմանը նպաստող շահագրգիռ մոտեցումների դրսևորում ինչպես իշխանությունների, այնպես էլ հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից: Կարևոր է նաև բարոյահոգեբանական, մարդուն արժանավայել սոցիալ տնտեսական նորմալ մթնոլորտը և ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը կազմակերպողների քիչ թե շատ պրոֆեսիոնալիզմը կամ գոնե օրենքների և դրանցում սահմանված մեխանիզմների ու կանոնների քիչ թե շատ իմացությունը:

Քաղաքակիրթ, ազատ և արդար ընտրությունների անցկացման կարևոր երաշխիք է ինչպես իշխանությունների ցանկությունն, այնպես էլ պետության յուրաքանչյուր քաղաքացու գիտակցումն այն բանի, որ իր սեփական բարեկեցությունն ու ազատությունները մեծապես կախված է իրենից և պետության ու հասարակության զարգացման աստիճանից, որի բարձրացմանը կարող է նպաստել անձնապես, ընտրություններին մասնակցելով և իր ընտրական իրավունքն ու արդարությունը պաշտպանելով:

Ընտրությունների քաղաքակիրթ ազատ և արդար անցկացման համար կարևոր է նաև այն, որ ընտրություններից առաջ ընտրությունների անցկացման կանոնները չհարմարեցվի այս կամ այն պաշլամենտական մեծամասնության, քաղաքական լիդերի, լիդերների կամ որոշակի լծակների տիրապետող մարդկանց որոշ խմբերի տվյալ պահի շահերին, որն ինչպես ցույց է տալիս փորձը տեղի է ունենում մշտապես: Պետության և հասարակության համար կարևոր է նաև ընտրությունից ընտրություն չփոփոխվող, մեծաքանակ ընտրողների ընդգրկմամբ ընտրատարածքներով ընտրությունների անցկացումն ապահովող, նախընտրական փուլում և քվեարկության ժամանակ կեղծիքների կազմակերպման հնարավորությունը բացառող մեխանիզմների կիրառումն ապահո-

վող, ընտրությունների արդյունքների արագ ամփոփումն ու հրապարակումը նախատեսող, ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները փոխելու հնարավորությունը կանխող, նորմալ ընտրական օրենսգիրք ունենալը:

Իսկ նորմալ ընտրական օրենսգիրք ունենալն ու դա գործնականում արդարացիորեն կիրառելը, իշխանությունների ցանկության դեպքում կամ հանուն ազատ և արդար ընտրություններով իշխանությունների ձևավորման ժողովրդի գիտակցական միասնական ու նպատակամղված գործնական պայքարի դեպքում հնարավոր է ցանկացած երկրում, եթե նույնիսկ լինեն ժամանակավոր խոչընդոտներ:

ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական ազատ ու արդար բոլորի համար վստահելի ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ է՝ ընտրական օրենսգրքի բարելավում այնպես, որ ունենալ օրենսգիրք, որը կամրագրի որևէ թեկնածուի կամ կուսակցության կողմից ընտրակեղծիքների կազմակերպման հնարավորության օգտագործման աննպատակահարմարությունն ամրագրող նորմեր: Օրենսգիրք, որը կբացառի որևէ անձի ընտրակեղծիքներով ընտրությունների արդյունքով հաղթող ճանաչվելու և իշխանություն ստանձնելու հնարավորությունը: Օրենսգիրք, որը կսահմաներ այնպիսի ընտրակարգեր և որով կնախատեսվեր այնպիսի ընտրական համակարգով ընտրություններ, որով առավելագույնս կապահովվեր արդար և ազատ, առանց կեղծիքների ընտրությունների անցկացման հնարավորությունը, բացառելով քվեարկության ժամանակ կեղծիքներ իրականացնելու, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելու ժամանակ քվեները կեղծելու հնարավորությունը:

Ընտրությունների վրա իշխանական, փողային, թաղային ազդեցությունները նվազեցնելու և քաղաքակիրթ քաղաքական ազդեցության արդյունքը մեծացնելու նպատակով կարելի էր հրաժարվել միամանդատ մեծամասնական ընտրակարգով ընտրությունից ու անցկացնել բազմամանդատ, ընտրողի ընտրատարածքին հասանելիք մանդատների թվով ձայնի իրավունքով կամ 1-ից ավելի ձայնի իրավունքով մեծամասնական ընտրակարգով ընտրություններ կամ համամասնական, նախա-

պատվության (պրեֆերենցիալ) սկզբունքի կիրառմամբ, ընտրակարգով ընտրություններ: Առաջինը բազմամանդատ, մեծամասնական ընտրական համակարգով ընտրությունները, որը հանդիսանալով տարբեր ընտրական համակարգերի համադրություն և այլ ընտրական համակարգերի առավելություններն իր մեջ ներառող և դրանց թերությունները հնարավորին չափ բացառող տարբերակ, որի մոտ 2-տասնյակ առավելությունները թվարկված են սույն գրքում, ենթադրում են, որ ընտրություններն անց են կացվում 11 (ըստ մարզերի) բազմամանդատ ընտրատարածքներում: Առանձին և կուսակցական ցուցակներով առաջադրված թեկնածուներից ընտրված են համարվում նրանք, ովքեր ստացել են ընտրատարածքի յուրաքանչյուր մանդատի համար հաշված (իրական ձայները բաժանած ընտրատարածքին հասանելիք մանդատների թվին) պարզ քվոտային հավասար կամ ավելի ձայներ, ընտրատարածքից ցուցակին հասնում է այնքան մանդատ, որքան անգամ, որ ցուցակի թեկնածուների ձայների գումարի մեջ տեղավորվում է պարզ քվոտան, իսկ ցուցակից մանդատներ ստանում են, ըստ հերթականության ամենաշատ ձայներ ստացած թեկնածուները: Ընդ որում կուսակցական ցուցակի, մեկից ավելի ընտրատարածքում համապատասխան ընտրատարածքի քվոտայից ավելի ձայներ ստացած թեկնածուն ստանում է այն ընտրատարածքի մանդատը, որում ունի ձայների ամենաբարձր տոկոսը, մնացած մանդատները բաշխվում են համապետական մակարդակով, ըստ կուսակցական ցուցակներում թեկնածուներին տրված ձայների գումարային մեծության այն ցուցակների միջև, որոնց բոլոր թեկնածուների ստացած ձայների գումարն ավելին է Հայաստանում տրված ձայների 5%-ից կամ այդ ցուցակից ընտրվել է երեք և ավելի թեկնածուներ: Գրանցվում են առանձին և ցուցակներով առաջադրված բոլոր թեկնածուների տվյալները՝ համապատասխան գրանցման (ռեգիստրացիոն) համարներով: Եթե կիրառվում է ընտրողի մեկ ձայնի իրավունքը, ապա ընտրողը քվեաթերթիկի համապատասխան տեղում դնում է այն թեկնածուի ռեգիստրացիոն համարը, որին կողմ է քվեարկում: Եթե կիրառվում է ընտրողի մեկից ավելի ձայնի իրավունքը, որն ավելի ճիշտ կլինեք, ապա ընտրողը քվեաթերթիկի համապատասխան դնում է այն թեկնածուների ռեգիստրացիոն համարները, որոնց կողմ է քվեարկում:

Երկրորդը **համամասնական, նախապատվության (պրեֆերենցիալ) սկզբունքի կիրառմամբ ընտրակարգով ընտրությունները ենթադրում են, որ հանրապետության ողջ տարածքը դիտարկվում է, որպես մեկ ընտրատարածք, ընտրողին իրավունք է վերապահվում ցուցակի օգտին քվեարկելուց բացի արտահայտելու իր նախապատվությունն այս կամ այն թեկնածուի օգտին, հիմնականում այն ցուցակի թեկնածուների օգտին, որին կողմ է քվեարկել, ընդ որում կարելի է կիրառել ընտրողի մեկ կամ որ ավելի ճիշտ կլինի մեկից ավելի ձայնի իրավունքով, թեկնածուների համապատասխան գրանցման (ռեգիստրացիոն) համարներով քվեարկության սկզբունքը: Իսկ մանդատները բաշխվում են ցուցակների միջև ցուցակներին տրված ձայներին համամասնորեն: Ցուցակը վերադասավորվում է ըստ ընտրողների թեկնածուներին տրված նախապատվության և ցուցակին հասանելիք մանդատները բաշխվում են դրանում ընդգրկված թեկնածուների միջև, ըստ նրանց տրված նախապատվության:**

Իսկ ներկայումս, քանի որ կա նաև պետական կառավարման համակարգային լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն, ուստի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքների ստեղծման ու ապահովման համար, ինքնակալական իշխանության ստեղծման հնարավորությունները քիչ թե շատ բացառելու նպատակով, իշխանությունների տարանջատման, հակակշիռների ու հավասարակշռությունների պահպանման սկզբունքի կիրառման ու առավել գործուն դարձնելու նպատակով, հաշվի առնելով առկա իրողություններն, արժեք մտածել երկպալատ ներկայացուցչական կոլեգիալ մարմինների գոյությունն ամրագրող սահմանադրական նորմի մասին: Իսկ դրանց կազմավորման հիմքում դնել երկու ընտրական համակարգեր: Ազգային ժողովի կազմավորման համար կիրառել կուսակցական համամասնական, նախապատվության (պրեֆերենցիալ), ընտրողի մեկից ավելի ձայնի իրավունքի սկզբունքների կիրառմամբ ընտրությունները, իսկ մյուս պալատը, որը պայմանականորեն անվանենք հանրապետական մարզային խորհուրդ, կազմավորվեր մեծամասնական ընտրական համակարգի կիրառմամբ ընտրություններով:

Հաշվի առնելով, որ արդար և ազատ ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ օրենսգրքի, ընդունման իրավասությունը վերապահված է այն մարմիններին՝ Հանրա-

պետության նախագահին ու Ազգային ժողովին, որոնք անկախ անձերից ավելի շատ շահագրգռված են սեփական իշխանության պահպանմամբ ու վերարտադրությամբ, քան թե արդար ու ազատ ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդրի լուծմամբ, ապա շատ ավելի կարևոր է դառնում նրանց կողմից քաղաքական կամքի դրսևորումը, պետության ու ժողովրդի շահերի գերադասումը նեղանձնական այսօրեական սեփական շահերից ու ժողովրդավարական զարգացումների սկիզբն ամրագրող քաղաքական որոշման նախաձեռնության ցուցաբերումը:

Հետագա ժողովրդավարական ազատ ու արդար, բոլորի համար վստահելի ընտրությունների անցկացման համար կարևորվում է իրական ժողովրդավարություն ապահովող սկզբունքների ու մեխանիզմների գործունե կանոններ սահմանող և դրանց կիրառումն ապահովող, Հայաստանի հանրապետությունում առկա իրողություններն հաշվի առնող, բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ փոխհամաձայնեցված, քաղաքական որոշման ընդունումը: Կլինի դա և երբ կլինի, կա արդյոք նրանց, ումից կախված է արդար և ազատ ընտրությունների անցկացման հիմքերի ամրագրումը, քաղաքացիական գիտակցությունն ու պատասխանատվությունը հանդեպ Հայաստանի, թե նրանց մոտ գերակշռելու է այսօրվա սեփական անձնական շահերը, պարզ չէ: Եթե ցուցաբերվի ժողովրդավարության սկզբունքների ամրագրմանն ուղղված նախաձեռնություն, համաձայնեն բոլոր շահագրգիռ կողմերը միասնաբար քաղաքական որոշմամբ ամրագրել ժողովրդավարության սկիզբը, ապա կվերականգնվի հասարակական վստահությունը սեփական պետության ու նրա նորմալ ապագայի հանդեպ:

Չնայած ցանկացած դեպքում, եթե իշխանությունների գերխնդիր է հանդիսանում սեփական իշխանության ամեն գնով պահպանումն ու ինքնավերարտադրությունը, պետք է նշել, որ ցանկացած իշխանության հիմնական նպատակը հենց վերը նշվածն է, ապա ոչ մի քաղաքակիրթ քաղաքական միջոցառում ազատ ու արդար ընտրությունների միջոցով իշխանությունների կազմավորման հնարավորության երաշխիք չեն կարող հանդիսանալ, եթե իշխանության ներկայացուցիչները իշխանության պահպանման համար պատրաստ են դիմել ցանկացած միջոցի: Իսկ տվյալ պարագայում, եթե ընդդիմությունն ու հասարակության մի մասը հանդես են գալիս, որպես իշխանափոխության համար

մղվող պայքարի կազմակերպված ուժ, ապա իշխանությունը վեր է անվում բռնի իշխանության ու արդար ընտրությունների միջոցով իշխանությունների կազմավորման հեռանկարը դառնում է անլուրջ: Իսկ եթե իշխանության մեջ իշխանության համար պայքարող մարդկանց մի խումբ կամ ծայրահեղ ընդդիմությունը հնարավորություն ու միջոցներ գտնի իշխանափոխության խնդիրը լուծելու համար, ապա երկրի վրա կկախվի պալատական հեղաշրջման, քաղաքական աղետի, քաղաքացիական պատերազմի վտանգ, իսկ բռնությունների ու անօրինականությունների աղետը կկլանի երկիրը: Կցուցաբերվի, թե ոչ նորմալ գիտակցական մոտեցում բոլոր նրանց կողմից, ումից կախված է երկրի հետագա զարգացման ընթացքը, ցույց կտա ժամանակը:

Հաշվի առնելով, որ 1995 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում, ընտրակեղծիքներով ընտրությունները, կարծես թե դառնում են անփոփոխ ավանդույթ: Արդար և ազատ ընտրությունների միջոցով իշխանությունների կազմավորումը, համարյա թե դառնում է անհնար: Տեղի է ունենում կազմակերպված հակաօրինական գործողություններով, բռնությամբ ու կեղծիքներով ընտրությունների կազմակերպմամբ իշխանությունների վերարտադրություն: Ով էլ լինի իշխանության գլուխ, օգտագործելու է բոլոր հնարավոր լծակները իշխանություն պահելու կամ այն իրեն հարմար հնարավոր հետնորդին փոխանցելու համար: Բոլոր նրանք, ովքեր պայքարում են իշխանության լծակներ ստանալու համար և երբ ստանում են իրենց որոշակիորեն բավարարող լծակներ, անկախ այն բանից, թե ինչպես են դրանք ստանում, ընտրություններից հետո ընտրակեղծիքների վրա աչք են փակում, իսկ բոլոր նրանք, ովքեր իրենց ակնկալիք իշխանական լծակները չեն ստանում կամ բավարարվում են ձեռք բերածով, կամ համակերպվում են իրավիճակի հետ, առաջին հերթին իրավիճակը փոխելու հնարավորությունից զրկված լինելու կամ այլ իրադարձությունների պատճառով: Հայաստանի քաղաքացիների մեծ մասը պարզապես չի հավատում արդար և ազատ ընտրություններով իշխանությունների կազմավորման հնարավորությանը, իսկ մի մասն էլ դառնում է ընտրակեղծիքների մասնակից:

Ցավով պիտի նշեմ, որ Հայաստանում ինչպես և ամենուր կան մարդկանց խմբեր, ովքեր հանուն իշխանության ու փողի պատրաստ են ամեն ինչի: Իսկ հասարակությանն արդար ու

քաղաքակիրթ անկախ պետություն ունենալուց միշտ կզրկեն, եթե հասարակության մեծամասնությունը լուրջ չկազմակերպվի պաշտպանելու համար իր ամենակարևոր իրավունքը, այն է արդար ազատ ու մաքուր ընտրություններով իշխանություն կազմավորելու իրավունքը:

Ակնհայտ է, որ ապագայում ընտրությունները կանցնեն բարձր տեխնոլոգիայի կիրառմամբ և քվեների հաշվարկի կեղծումներ չեն լինի, սակայն այժմ հաջորդ ընտրություններից առաջ պետք է, որ լրամշակվի օրենսգրքն այնպես, որ մոտ ապագայում արդար և մաքուր, առանց ընտրակեղծիքների, առանց ընտրակաշառքների և հասարակության համար բաց ու վերահսկելի ընտրություններով իշխանության կազմավորման հարցը կասկածի տեղիք չտա: Պետք է հուսալ, որ բոլորը կգիտակցեն հարցի լրջությունը:

Հետագա ժողովրդավարական ազատ ու արդար, բոլորի համար վստահելի ընտրությունների անցկացման և առաջիկա ընտրապատերազմից խուսափելու համար կարևորվում է իրական ժողովրդավարություն ապահովող սկզբունքների ու մեխանիզմների գործունե կանոններ սահմանող և դրանց կիրառումն ապահովող, Հայաստանի հանրապետությունում առկա իրողություններն հաշվի առնող բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ փոխհամաձայնեցված, քաղաքական որոշման ընդունումն ու միասնական կազմակերպված վերահսկողության իրականացումը:

Բոլոր դեպքերում, թեկուզև վատ օրենքներով անցկացվող ընտրությունների արդյունքները կեղծելու հնարավորությունն այնքան քիչ կլինի, որքան շատ ընտրողներ մասնակցեն ընտրությանն ու ունենան ակտիվ դիրքորոշում արդար ընտրությունների անցկացման հարցում և քիչ մարդիկ շահագրգռված ու հակված լինեն ընտրությունները կեղծելուն, իսկ ցանկացած կեղծիքով և առանց ժողովրդի աջակցության ձևավորված իշխանությունն ի վերջո պետության ռազմավարական խնդիրների լուծման ժամանակ դժվարություններ է ունենալու, և չի կարող միջազգային հանրության հետ փոխհարաբերություններում նրանց կողմից դիտվել, որպես լուրջ գործընկեր, արդյունքում զիջելու է կարևոր հարցերում:

Հայաստանի քաղաքացիների մեծ մասը պարզապես չի հավատում արդար և ազատ ընտրություններով իշխանությունների կազմավորման հնարավորությանը, իսկ մի մասն էլ դառնում է

ընտրակեղծիքների մասնակից: Իսկ եթե ժողովրդի մեծ մասը համոզված լինի, որ իր քվեները չեն կեղծվի, ապա կքվեարկի խղճի մտքը: Որի համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովում լինի մեկ կամ երկու մարդ, որոնք թույլ չեն տա ուրիշի փոխարեն քվեարկություն և ձայների կեղծ հաշվարկ կամ, որ նույնն է քվեների ուրիշի օգտին հաշվարկ, այդ դեպքում նույնիսկ հանձնաժողովի այն անդամները, ովքեր նպատակ ունեն կեղծելու, կվախենան կեղծիք իրականացնելուց, քանզի համոզված չեն լինի, որ իրենց ուզած թեկնածուն կեղծիքներով կհաղթի և իրենք կեղծիքի դեպքում անպատիժ կմնան:

Իսկ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան առաջիկայում ընտրությունները կազմակերպման ժամանակ նույնպես չի բացառվում հիմնական և լրացուցիչ ընտրացուցակներով, որոշ ընտրողների մի քանի անգամ նաև ուրիշի անձնագրային տվյալներով քվեարկությանը մասնակցության կազմակերպումը: Ուստի արդար ընտրություններում շահագրգռված բոլոր կողմերի ուժերով հանրապետությունից բացակա ընտրողների բացահայտումն ու այդ տվյալների բազայի ունենալը, ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հետ համադրման հնարավորությունը, լրացուցիչ խոչընդոտ կհանդիսանար կրկնակի և բազմակի քվեարկելու հնարավորությունների դեմ:

Հաջորդ ընտրապատերազմում կհաղթի այն թեկնածուն, ով կկարողանա համոզել, որ ինքը կարող է հաղթել և իր հաղթանակը օգտակար կլինի ընտրողների մեծամասնության համար և ի վիճակի է կազմակերպել արդար ընտրությունների համար պայքարող բանակ: Այլապես ընտրակեղծիքներով կհաղթի վարչական ու ֆինանսական միջոցների տիրապետողը, ամբիցիոզ, բայց համապատասխան միջոցներից զուրկ, մյուս թեկնածուների կամա թե ակամա, աջակցությամբ:

Եզրափակենք հետևյալով, այն կազմակերպությունները, որոնք ոչ քիչ միջոցներ են ծախսում այսպես կոչված ժողովրդավարության զարգացման և ընտրությունների դիտարկման ու վերահսկողություն իրականացնելու համար, եթե հիրավի շահագրգռված լինեին արդար և մաքուր ընտրություններով, ապա միջոցներ կտրամադրեին ընտրողների մատնահետքերի համադրմամբ, Էլեկտրոնափաստաթղթային քվեմեքենաների ստեղծման, ձեռք բերման ու դրանցով քվեարկությունների կազմակերպման համար:

ԸՆՏՐԱՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԵՌ ՇԱՐՈՆԱԿՎՈՄ Է

Չլինեն ընտրակեղծիքներ, չի լինի ընտրապատերազմ:

Պատերազմ, որովհետև ընտրություններն առանց բռնությունների ու ռազմականացված կառույցների գործադրման չեն անցնում: Իսկ պատերազմում տուժողը ժողովուրդն է ու հաճախ անմեղ մարդիկ: Գոնե առաջիկա ճակատամարտում գոհեք չլինեն: Ճակատամարտող կողմերից ոչ մեկն առավել ուժեղ չէ քան մյուսը: Իշխանությունն ունի վարչական, ֆինանսական, իբր՝ իրավապահպանական ռազմականացված լծակներ: Սակայն իշխանության դեմ մարդկանց թիվն ավելին է, քան իշխանության կողմնակիցների թիվը: Իշխանության դեմ մարդկանց թիվն ավելանում է ոչ միայն ընտրակեղծիքների պատճառով, այլ նաև հիմնականում իշխանության բացահայտ բռնապետական քաղաքականություն վարելու և բնակչության սոցիալական վիճակի վատթարացման հետևանքով: Նախ ձեռքակալվում ու դատապարտվում են մարդիկ իշխանության դեմ բողոքի խաղաղ միջոցառումներին ակտիվ մասնակցելու համար, բայց այդ միջոցառումները բռնությամբ ու մարդասպանությամբ դադարեցնող իշխանության ներկայացուցիչները որևէ պատասխանատվության չէին ենթարկվում: Երկրորդ՝ հակառակ իշխանությունների հավաստիացումների, թե ճգնաժամ չի լինի Հայաստանում, այն ավելի խորը բնույթ է ստանում, թանկացան ու թանկանում են ապրանքների և ծառայությունների գները: Երրորդ և ամենակարևորը՝ բռնությամբ ու ընտրակեղծիքներով պաշտոն ստանձնած անձը միայն բռնությամբ ու խաբեությամբ կարող է պահել պաշտոնը կամ այն փոխանցել իր մարդուն, որն էլ անհետևանք չի մնում: Դժվար թե որևէ քաղաքական ազմակերպության ղեկավար վեր դասի արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման հարցը սեփական դիրքից և չգերադասի ընտրակեղծիքները, եթե վերջինիս հետևանքով կարող է շահել կամ նա, ում հանդեպ վատ է տրամադրված իշխանություն չի ստանա: Պարզ է, որ որևէ իշխանություն չի օգտվի նշված հանգամանքից և կիրառարվի ընտրակեղծիքներով իշխանությունը պահելու հնարավորությունից: Իշխանությունը ժողովրդին չի պատկանում, իշխանական վարչախումբն այն ժողովրդին հանձնելու մտադրություն չունի, իսկ ժողովուրդն այն վերցնելու հնարավորություն չունի: Իշխանություններն արդար ընտրություններով չէ որ մտահոգված են, որքան էլ, որ միջազգային

հանրության ներկայացուցիչները կես բերան պահանջեն, առավել ևս, եթե դրանից շահ չունեն: Իշխանության համար պայքարող ընդդիմության համար դժվար կլինի ընտրակեղծիքների դեմ լուրջ պայքար ծավալել ու համախմբել իշխանությունների դեմ ողջ մարդկանց բազմությունը:

Ընտրամեքենայի ղեկը՝ հանձնաժողովները, ամբողջությամբ իշխանությունների ձեռքումն է: Իսկ լցումները, այլոց փոխարեն քվեարկությունները, քվեների ոչ ճիշտ հաշվարկի իրականացումը հնարավոր: Եթե ընտրակեղծիքների կազմակերպիչները պատասխանատվության չեն ենթարկվում, ավելին ունենալով և պահելով իշխանությունը պատժում են հակառակորդին, ապա առավել հավանական է, որ առաջիկա ընտրությունները նույնպես կկեղծվեն: Միայն թե հետևանքները կարող են ավելի ծանր լինել, քան մինչ այժմ:

Արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդրի լուծման համար անկախ Հայաստանի գոյության ընթացքում առաջարկվել է լցումների, այլոց փոխարեն քվեարկության դեպքերի կանխման, քվեների ճշգրիտ հաշվարկի իրականացման, խնդիրների լուծման մի շարք տարբերակներ: Ընտրապայքարի կողմերին ու դիտորդներին առաջարկվել է նաև ընտրությունների էլեկտրոնային մոնիթորինգի հնարավորություն, որի շնորհիվ հասարակության բոլոր անդամների համար տեսանելի կլինեն ընտրակեղծիքներով տեղամասերն ու քվեարկության իրական արդյունքները: Սակայն առաջարկները չեն ընդունվել ոչ միայն նրանց կողմից, ումից կախված է եղել արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման խնդրի լուծումը, այլ նաև այսպես կոչված ընտրակեղծիքների դեմ արտահայտվող քաղաքական ուժերի, դիտորդների կողմից, որոնց հնարավորություն էր տրվում ճշգրիտ գնահատելու ընտրակեղծիքներն ու քվեարկության ճշգրիտ արդյունքը նուրիսկ հիմք ընդունելով պաշտոնական տվյալները: Եթե ժամանակին ընկալվեր այդ ամենը, ապա ընտրապատերազմ չէր լինի Հայաստանում: չէին լինի 1996 թվականի սեպտեմբերին արտակարգ դրությունը, 1999 թվականի հոկտեմբերին պառլամենտում իրական իշխանության առաջնորդների դեմ իրականացված ահաբեկչությունը, 2008 թվականի մարտի սպանդի դեպքերը:

հետայսու

Չնայած աննշան հավանականությանը, հուսով եմ, որ նրանք, ումից կախված է ընտրապատերազմներին վերջ դնելն ու արդար ընտրություններով իշխանությունների կազմավորման հարցի մեկընդմիջտ լուծումը, կառաջնորդվեն ոչ թե նեղանձնական շահերով, այլ պետության ու ազգի շահերով: Իսկ արդար ընտրություններով իշխանության կազմավորման դեպքում, հասարակության տարբեր խմբերն ու յուրաքանչյուր քաղաքացի միասնաբար կլծվեն բոլորի և յուրաքանչյուրի բարեկեցության բարձրացման ու անկախ Հայաստանի արժանապատիվ գոյության ու մրցունակության ապահովման գործին:

Եզրափակենք հետևյալով, թե անկախ ամեն ինչից, ինչու է առավել այժմ, քան երբևէ պետք, որ Հայաստանի հաջորդ ընտրություններն անցնեն արդար:

Աշխարհաքաղաքական զարգացումների ընթացքն, այնպես, ինչպես 1990 թվականին, Հայաստանի Հանրապետությանը կանգնեցրել է լուրջ խնդիրների առաջ: Հիշեցնենք, որ եթե այն ժամանակ Հայաստանի իշխանությունները քիչ թե շատ հասարակության մեծամասնության կարծիքին համարժեք չձևավորվեք ու ռազմավարական հարցերում ճիշտ քաղաքականություն չվարեք, իսկ ժողովուրդը դժվարին կացության պայմաններում հուսալքված լինեք, Արցախի ազատագրական պայքարում, երևի թե պարտվեք: Այսօր հասարակության բարոյալքման խորացումն ու անկախ պետականության նկատմամբ հավատի կորուստը կարող է ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի հարավային տարածքների նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեյջանի նկրտումների իրականացման հնարավորություն տան, ընդ որում Հայաստանից անկախ, Եվրոպային միացնող այլընտրանքային գազի ու նավթի կարճ ճանապարհի բացելու համար, որին դժվար թե դեմ լինի Եվրոպան: Պետք է ենթադրել, որ բարոյալքված ու դրսի օգնության հաշվին գոյությունը պաշտպանող, սեփական պետության հետ

հույս չկապող մեծամասնությամբ ազգը, դժվար թե պատերազմ հաղթի, ավելին, երբ հիմնականում դրամ են վաստակում դրսում և հույսը կապում դրսի հետ, իսկ Հայաստանում հավաքագրվում է տրանսֆերները քաղաքական-բիզնես էլիտայի կողմից, իսկ պետական կառավարման համակարգի հիմքը կոռուպցիան է վրա: Նրանք, ովքեր անազնվորեն են հարստացել դժվար թե պատերազմի

դաշտ գնան, կամ զավակներին ուղարկեն, առավել ևս, որ բանակի քանակ չեն լրացնի: Իսկ մյուս մարդկանցից շատերը դժվար թե ցանկանան պաշտպանել ուրիշների անազնիվ իշխանությունն ու հարստությունը սեփական կյանքի գնով: Իսկ հույսը դնել միջազգային հանրության՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության վրա, այլ ոչ թե սեփական ժողովրդի վրա, պարզապես նշանակում է տանուլ տալ պետականությունը, որն արդեն մեկ անգամ 20-րդ դարասկզբին եղել է: Ինչ կլինի, եթե Ռուսաստանի քաղաքական վերնախավը, Ռուսական գազը Սև ծովով Եվրոպա հասցնելու համար, Թուրքիայի հետ հարաբերություններն ավելի կարևորի, քան՝ իրենց արտահայտությամբ՝ <<ֆորպոստ>>, Հայաստանի:

Անկախ այն բանից, որ արդար ընտրություններով իշխանությունների կազմավորումը ցանկացած նորմալ ժողովրդի մեծամասնության համար գերադասելի է ընտրակեղծիքներից, առավել այժմ քան երբևէ է պետք, որ ներհայկական հասարակական պատակտում, հակամարտություն ու թշնամանք ընտրակեղծիքների պատճառով չլինի, այլ լինի համահայկական միասնականություն ու վստահություն իշխանությունների արդար կազմավորման հանդեպ: Ժամանակի մարտահրավերները պարտադրում են բոլոր հայերին միավորվել ու ապահովել պետության ու քաղաքացիների ներդաշնակ, քաղաքակիրթ ու արագընթաց զարգացումն ու հզորացումը, անկախ Հայաստանին ու Արցախին սպասվող վտանգների դեմն առնելու համար:

Իսկ եթե իշխանություններն ու երկրի քաղաքականության վրա ազդեցություն ունեցող գործիչները շահագրգռված լինին նորմալ ընտրությունների անցկացման հարցում, ապա ընտրությունների վրա իշխանական, փողային, թաղային, ուժային, հանցագործ տարրերի ազդեցությունները, ինչպես նաև ընտրակաշառքով քվեներ ստանալու հնարավորությունները նվազեցնելու և քաղաքակիրթ, քաղաքական ազդեցության արդյունքը մեծացնելու նպատակով, հաջորդ պաշլամենտական ընտրություններում կարելի կլինեք հրաժարվել միամանդատ մեծամասնական և համամասնական կապված ցուցակներով ընտրակարգերով ընտրություններից և անցնել ընտրողի մեկից ավելի ձայնի իրավունքով կամ պարզության համար ընտրողի մեկ ձայնի իրավունքով համամասնական՝ նախապատվության (պրեֆերենցիալ) սկզբունքի կիրառմամբ ընտրակարգով

ընտրությունների, կամ բազմամանդատ մեծամասնական ընտրությունների: Հանրապետության ողջ տարածքը դիտարկելով որպես մեկ ընտրատարածք, ընտրողին իրավունք է վերապահելով քվեարկել իր նախընտրած ցուցակի որևէ թեկնածուի օգտին, քվեաթերթիկում նշելով թեկնածուի ռեզիստրացիոն համարը: Եթե կիրառվի համամասնական, նախապատվության (պրեֆերենցիալ) սկզբունքի կիրառմամբ ընտրական համակարգը, ապա մանդատները կբաշխվեն ցուցակների միջև ցուցակներին տրված ձայներին համամասնորեն, համարելով որ ցուցակի թեկնածուի օգտին տրված ձայները նաև ցուցակին տրված քվեներ են: Քվոտան հաղթահարած ցուցակին հասնելիք մանդատները կտրվեն ցուցակից ամենաշատ ձայներ ստացած թեկնածուներին: Եթե կիրառվի բազմամանդատ մեծամասնական ընտրական համակարգը, ապա ընտրված են կհամարվեն առավելագույն քվեներ ստացած՝ պառլամենտի պատգամավորների թվով տեղերը զբաղեցրած, թեկնածուները:

Անկախ ամեն ինչից, ցանկացած ընտրակարգով ընտրությունների օբյեկտիվ գնահատման և վերահսկողության համար գրքի հաջորդ բաժնում առաջարկվում է ընտրական թվերի համադրության մեթոդը:

ՔՎԵԱՐԿՎՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՃՇԳՐԻՏ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ <<ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ>>

ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԸ

Ընտրական թվերը, ըստ դրանց հայտնի լինելու ժամանակահատվածների բաժանենք խմբերի: Նշենք, որ ներքոնշյալ բոլոր թվերը վերաբերում են առանձին, դիտարկվող տեղամասերին և թվերին վերագրված տառերը տարբեր տեղամասերի համար կարող են ունենալ տարբեր թվային արժեքներ: Իսկ նույնանշանակ թվերի գումարները կլինեն համապատասխանաբար ընտրատարածքային, մարզային կամ հանրապետական ընտրական թվերը, կամ կարճ ընտրաթվերը:

1. Մինչ քվեարկությունների ժամանակահատվածի ընտրական թվերն են՝

- α Տեղամասն ընդգրկող տարածքի բնակչության թիվը,
- β Տեղամասի ընտրողների ընդհանուր թիվը:
- χ Տեղամասի տարածքում առկա ընտրողների թիվը:

2. Մինչ քվեատուփը բացելը տեղամասում, քվեարկության ընթացքի ընտրական թվերն են՝

- δ Տեղամասի ընտրողների ընդհանուր թվի փոփոխությունները:
- Ե Տեղամասին հատկացված քվեաթերթիկների թիվը:
- ϕ Քվեաթերթիկներից անջատվող ելունդների, կտրոնների համարները, (ϕ = 0, կտրոններ չօգտագործելու դեպքում):
- π Քվեաթերթիկներից անջատված ելունդների թիվը, (π = 0, կտրոններ չօգտագործելու դեպքում):
- γ Տեղամասին հատկացված քվեարկության ծրարների թիվը, որի մեջ դրվում է քվեարկված քվեաթերթիկը և գցվում քվեատուփի մեջ, (γ = 0, ծրարներ չօգտագործելու դեպքում):
- λ Ընտրողներին հատկացված ծրարների թիվը, (λ = 0, ծրարներ չօգտագործելու դեպքում):
- ν Չօգտագործված և մարված ծրարների թիվը, (ν = 0, ծրարներ չօգտագործելու դեպքում):
- η Տեղամասի քվեախցիկների թիվը,
- ψ Ստորագրացուցակների սեղանների թիվը, այսինքն՝ այն թիվը, որը ցույց է տալիս, թե քանի մասի է բաժանված ընտրողների ցուցակները տեղամասում և քանի տեղում է կազմակերպված ընտրությանը մասնակցող ընտրողների գրանցումը:
- ϑ Քվեարկության արկղերի թիվը:

Փ Քվեարկության մասնակցած ընտրողների թիվը, այսինքն՝ ընտրողների ստորագրությունների թիվը ընտրացուցակներում քվեարկության ավարտին:

Կ Մեկ ժամում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:

Լ Ընտրողներին հատկացված քվեաթերթիկների թիվը:

Զ Չօգտագործված և մարված քվեաթերթիկների թիվը:

Շ Տեղամասի թողունակությունը, այսինքն՝ մեկ ժամում ընտրողների այն առավելագույն քանակը, որը կարող է քվեարկել տեղամասում:

Ը Նվազագույն ժամանակը, որը ընտրողներից, ամենաարագ քվեարկողը կծախսի տեղամասում:

Թ Մեկ ընտրողի քվեախցիկում գտնվելու հնարավոր նվազագույն ժամանակը:

Պ Մեկ ընտրողի ընտրողների ցուցակում ստորագրելու հնարավոր նվազագույն ժամանակը:

Պ Մեկ ընտրողի քվեաթերթիկը քվեատուփ գցելու հնարավոր նվազագույն ժամանակը:

Ր Ժամանակահատվածը, որի ընթացքում պարբերաբար հրապարակվում են ընտրողների մասնակցության վերաբերյալ տվյալները:

Ս Քվեարկության տևողությունը:

3. Քվեատուփը բացելուց հետո քվեարկության արդյունքների ամփոփման, քվեատուփում առկա քվեարկության փաստաթղթերի, թվերն են՝

Թ Քվեատուփում առկա ծրարների ընդհանուր թիվը, ($\theta = 0$, ծրարներ չօգտագործելու դեպքում):

Ր Տվյալ տեղամասի ռեկվիզիտները պարունակող, քվեատուփում առկա վավեր ծրարների թիվը, ($\rho = 0$, ծրարներ չօգտագործելու դեպքում):

Տ Անվավեր, այսինքն՝ տվյալ տեղամասի ռեկվիզիտները չպարունակող, քվեատուփում առկա անվավեր ծրարների թիվը, ($\sigma = 0$, ծրարներ չօգտագործելու դեպքում):

Դ Քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը:

Ը Անվավեր քվեաթերթիկների թիվը:

Ո₁, Ո₂, Ո₃, ..., Ո_n Յուրաքանչյուր թեկնածուի քվեների, այսինքն՝ յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվերը:

Օ = Ո₁ + Ո₂ + Ո₃ + ... + Ո_n = ՏՕ_n բոլոր թեկնածուներին կողմ տրված ձայների ընդհանուր թիվ, թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների կամ, որ նույնն է քվեների ընդհանուր, այսինքն՝ վավեր քվեաթերթիկների թիվը:

Կախված ընտրական օրենսդրության պահանջներից նշված ընտրական թվերից որոշները կարող են և չլինել, օրինակ ասենք էլունդերը, ծրարները, բայց կան հիմնական ընտրական թվեր, որոնք պարտադիր են քվեարկությունների կազմակերպման անցկացման և արդյունքների ամփոփման համար:

Ընտրական թվերի համադրություններն ու համեմատությունները կարող են բացահայտել թե որքանով են ընտրական գործընթացները, հատկապես քվեարկություններն ու արդյունքների ամփոփման գործառնությունները կազմակերպվել օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ընտրական թվերի իրար հետ պարզ համադրություններն ու համեմատությունները կարող են բացահայտել ընտրակեղծիքները:

ԸՆՏՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՀԱՄԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ

Ստորև ներկայացվում է ընտրակեղծիքների բացահայտման տրամաբանությունն ու մաթեմատիկական հաշվարկները ընտրական թվերի իրար հետ համեմատելու միջոցով:

Եթե քվեարկություններն ու քվեարկության արդյունքների ամփոփման գործառնություններն արդար են, ապա՝

- 1) $\alpha > \beta$ Տեղամասն ընդգրկող տարածքի բնակչության թիվը չի կարող փոքր լինել տեղամասի ընտրողների թվից:
- 2) $\beta > \chi$ Տեղամասի ընտրողների թիվը միշտ մեծ է տեղամասում առկա ընտրողների թվից:
- 3) $\delta < \chi$ Տեղամասի ընտրողների ընդհանուր թվի փոփոխությունները, չի կարող մեծ չափերի հասնել, առավել ևս գերազանցել տեղամասում առկա ընտրողների թիվը:
- 4) $\phi < \chi$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը չի կարող մեծ լինել տեղամասում առկա ընտրողների թվից:
- 4.1) $\phi < \alpha$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը չի կարող մեծ լինել տեղամասն ընդգրկող տարածքի բնակչության թվից:
- 4.2) $\phi < \beta$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը չի կարող մեծ լինել տեղամասի ընտրողների թվից:
- 5) $\varepsilon = \mu + Z$ Տեղամասին հատկացված քվեաթերթիկների թիվը հավասար է ընտրողներին հատկացված քվեաթերթիկների և \square չօգտագործված ու մարված քվեաթերթիկների թվերի գումարին:
- 5.1) $\varepsilon = \tau + Z$ Տեղամասին հատկացված քվեաթերթիկների թիվը հավասար է քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թվի և չօգտագործված ու մարված քվեաթերթիկների թվերի գումարին:

6) $\gamma = \lambda + \nu$ Տեղամասին հատկացված քվեարկության ծրարների թիվը հավասար է ընտրողներին հատկացված ծրարների և \square չօգտագործված ու մարված ծրարների թվերի գումարին:

6.1) $\gamma = \theta + \nu$ Տեղամասին հատկացված քվեարկության ծրարների թիվը հավասար է քվեատուփում առկա ծրարների ընդհանուր թվի ու չօգտագործված և մարված ծրարների թվերի գումարին:

7) $\phi = \mu$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը հավասար է \square ընտրողներին հատկացված քվեաթերթիկների թվին:

7.1) $\phi = \lambda$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը հավասար է \square ընտրողներին հատկացված ծրարների թվին:

7.2) $\lambda = \mu$ Ընտրողներին հատկացված ծրարների թիվը հավասար է ընտրողներին հատկացված քվեաթերթիկների թվին:

7.3) $\phi = \pi$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը հավասար է \square քվեաթերթիկներից անջատված էլուկների թվին:

7.4) $\mu = \pi$ Ընտրողներին հատկացված քվեաթերթիկների թիվը հավասար է \square քվեաթերթիկներից անջատված էլուկների թվին:

7.5) $\pi = \lambda$ Քվեաթերթիկներից անջատված էլուկների թիվը հավասար է \square ընտրողներին հատկացված ծրարների թվին:

8) $K_{(Ժամում)} < \zeta \square \square$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը մեկ ժամում չի կարող գերազանցել տեղամասի թողունակությանը:

Տեղամասը կարող է ֆիզիկապես ապահովել սահմանափակ թվով ընտրողների քվեարկությունը մեկ ժամում: Տեղամասի թողունակությունը ζ կախված է տեղամասում քվեարկության արկղերի \square , ստորագրացուցակների սեղանների ψ , տեղամասի քվեախցիկների $\eta \square$ թվերից, ինչպես նաև այն նվազագույն ժամանակահատվածներից l , որը ընտրողներից, ամենաարագ քվեարկողը կծախսի քվեաթերթիկ և ծրար ստանալու ու ընտրողների ցուցակում ստորագրելու $l\psi$, քվեախցիկում քվեաթերթիկում նշում անելու և քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու $l\eta$, քվեարկված քվեաթերթիկը ծրարով քվեատուփ գցելու $l\theta$ համար: Հաշվի առնելով, որ մեկ ժամը 3600 վայրկյան է:

$$\zeta = \min (\theta * 3600 / l\theta, \psi * 3600 / l\psi, \eta * 3600 / l\eta)$$
$$\zeta = 3600 / l \quad l = \max (l\theta / \theta, l\psi / \psi, l\eta / \eta)$$

8.1) $K_{(Ժամում)} < T * \zeta$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների K թիվը T ժամում չի կարող գերազանցել տեղամասի $T * \zeta$ թողունակությանը T ժամում:

9) $\phi = \Sigma K$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը քվեարկության ավարտին հավասար է \square տեղամասում յուրաքանչյուր ժամում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվերի հանրագումարին:

10) $\phi < \zeta * M$ Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը քվեարկության ավարտին չի կարող գերազանցել \square տեղամասի թողունակությանը քվեարկության տևողության ընթացքում:

11) $\theta = \phi$ Քվեատուփում առկա ծրարների ընդհանուր թիվը հավասար է քվեարկությանը մասնակցած ընտրողների թվին:

11.1) $\tau = \phi$ Քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը հավասար է քվեարկությանը մասնակցած ընտրողների թվին:

11.2) $\tau = \omega + \xi$ Քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը \square հավասար է վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարին:

